

Մայա Բլիսաձե
Ռուսուդան Ախվլեդիանի
Շորենա Տղեմալաձե
Թեոնա Շուրլաձե

1

Բնություն

Ուսուցչի գիրք



Երաշխավորվել է Վրաստանի կրթության և գիտության
նախարարության կողմից, 2023 թվականին:



ՏՄԼԱԿԱՅՐՈՒՆ
ԳԱՅՈՑՅԱՅՈՒԹՅԱՆ

Բնություն 1

Ուսուցչի գիրք

Հեղինակներ՝ Մայա Բլիաձե, Ռուսուդան Ախվիլեղիանի, Շոբենա Տղեմալաձե, Թեոնա Շուբլաձե
Խմբագիր՝ Ռուսուդան Գորգաձե
Դիզայներ և նկարագարող՝ Թինաթին Խուցիշվիլի
Տեխնիկական դիզայներ՝ Թինաթին Բերբերաշվիլի

Առաջին հրատարակություն, 2023

© Մուլակաուրիի հրատարակչություն, 2023

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ՄՊԸ «Մուլակաուրիի հրատարակչություն»

Հասցեն. Դավիթ Աղմաշենեբեկի 150, 0112

Հեռ.՝ 291 09 54, 291 11 65

Էլ-փոստ՝ info@sulakauri.ge

ISBN 978-9941-37-439-5

Nature Science 1

Teacher's book

© Sulakauri Publishing, 2023

All rights reserved.

Tbilisi, Georgia

www.sulakauri.ge

Բովանդակություն

| | |
|--|-----|
| 1. Ներածություն | 5 |
| 2. Տարրական աստիճանի բնագիտության չափորոշիչը | 11 |
| 3. Բնագիտության ուսուցման ռազմավարությունները..... | 19 |
| 4. Մեթոդական երաշխավորություն` կապված հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտներին կրթական գործընթացի մեջ ներգրավման հետ | 39 |
| 5. Թեմատիկ մատրիցաներ..... | 43 |
| 6. Գնահատման ձևեր և հանձնարարականներ..... | 83 |
| 7. Լրացուցիչ հանձնարարականներ ուսուցիչներին | 93 |
| 8. Աշակերտի գրքում օգտագործված էլեկտրոնային ռեսուրսների հղումներ | 121 |
| 9. Լրացուցիչ նյութ ուսուցիչների համար | 123 |

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վրաստանում հանրակրթության հիմնական նպատակը ազգային և համամարդկային արժեքներ ունեցող ազատ անհատի ձևավորման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է: Կրթական համակարգը պետք է օգնի դեռահասին մտավոր և ֆիզիկական հմտությունների ու կարողությունների զարգացման, անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերման և դրանց գործնական կիրառման գործում:

Համաձայն Ազգային ուսումնական պլանի՝ ուսանում-ուսուցման գործընթացը պետք է հիմնված լինի հետևյալ 5 կրթական սկզբունքների վրա.

1. Ուսանում-ուսուցումը պետք է նպաստի աշակերտների ներքին ուժի ակտիվացմանը:
2. Ուսանում-ուսուցումը պետք է նպաստի գիտելիքների փուլերով կառուցված մանրացմանը՝ հիմնվելով նախապես ունեցած գիտելիքի վրա:
3. Ուսանում-ուսուցումը պետք է նպաստի գիտելիքների փոխկապակցմանն ու կազմակերպմանը:
4. Ուսանում-ուսուցումը պետք է ապահովի ուսանման ռազմավարությունների յուրացում (սովորել սովորել):
5. Ուսանում-ուսուցումը պետք է ներառի գիտելիքի բոլոր երեք կատեգորիաները՝ դեկլարատիվ, ընթացակարգային և պայմանի հետ կապված:

Ձեռք բերված գիտելիքների և փորձի հիման վրա դեռահասը պետք է կարողանա պահպանել և պաշտպանել բնական միջավայրի պայմանները, մտավոր ձեռքբերումներն արդյունավետ օգտագործել, տեղեկություններ ձեռքբերել, մշակել և վերլուծել: Դպրոցական կրթությունը պետք է նպաստի դեռահասի շարունակական զարգացմանը, որպեսզի նա իր ողջ կյանքի ընթացքում ձեռք բերի նոր գիտելիքներ և հմտություններ ինքնուրույն ստանալու և օգտագործելու կարողություն, կարողանա համարժեքորեն որոշել իր կարողություններն ու հոգևոր հակումները և համապատասխանաբար հաստատել իր տեղը հասարակական կյանքում, դեռահասը պետք է պատրաստ լինի ընտրություն կատարել ապագա կրթության և գործունեության համար:

Բնագիտության ուսուցիչները երրորդ սերնդի Ազգային ուսումնական պլանի պահանջների համաձայն ուսումնական գործընթացի պլանավորման և անցկացման ժամանակ պետք է կենտրոնանան չորս հիմնական հարցերի վրա.

- Ի՞նչ նպատակով ենք ուսուցանում «Բնագիտություն» առարկան (ուսանում-ուսուցման նպատակներ):
- Ի՞նչ ռեսուրսների վրա հիմնվելով ենք ուսուցանում (հարցեր, ուսումնական ռեսուրսներ):
- Ուսուցման ի՞նչ մեթոդներ և ռազմավարություններ ենք մենք օգտագործում (ինչպես ենք սովորեցնում):
- Ինչպե՞ս ենք մենք գնահատում աշակերտի ձեռքբերումները (գնահատում):

Ահա թե ինչու տարրական աստիճանում բնական գիտությունների ուսուցիչը շատ պատվաբեր և պատասխանատու առաքելություն ունի, քանի որ հենց այս ժամանակ են արվում շրջապատող աշխարհը ճանաչելու առաջին քայլերը, ընդլանվում է աշակերտի մտահորիզոնը, բորբոքվում է հետազոտության, նորությունների հայտնաբերման և ճանաչման ուղղությամբ հետաքրքրությունը: Ուսուցիչը պետք է ուղղորդի երեխայի երիտասարդ միտքը շրջակա միջավայրի համար պատասխանատվության զգացում ձևավորելու, բնության հանդեպ հոգատարության սովորություններ ձեռք բերելու և առողջ ու անվտանգ ապրելակերպի յուրացման նպատակին:

Բնագիտության ուսուցիչը պետք է օգնի երեխաներին ձեռք բերել այն գիտելիքները, որոնք հետագայում կհեշտացնեն նրանց պարզել աշխարհագրության, կենսաբանության, ֆիզիկայի և քիմիայի բարդ խնդիրները: Այս հիմնարար գիտությունների հիմքը բնագիտական դասընթացն է, որը նրանք պետք է անցնեն տարրական դասարաններում:

Դրա նախատեսմամբ՝ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի ուսումնական պայմաններ, որ աշակերտը կարողանա բացահայտել և զարգացնել իր մտավոր և հոգևոր որակներն ու հակումները, ձևավորել և զարգացնել տեղեկատվություն ստանալու և հասկանալու հմտություններ ու կարողություններ,

որոնք նրան անհրաժեշտ կլինեն ողջ կյանքի ընթացքում:

Բնագիտություն ուսուսմասիբելու տարրական աստիճանում աշակերտը պետք է ճիշտ պատկերացում կազմի աշխարհի, ժամանակի և տարածության մասին: Նա պետք է ծանոթանա կյանքի գոյության համար անհրաժեշտ պայմաններին, բնության մեջ տեղի ունեցող գործընթացներին, տեսնի շրջապատող առարկաների և բնական երևույթների կապը: Նա պետք է գիտելիքներ ձեռք բերի մարմինների շարժման, նյութերի հիմնական հատկությունների մասին:

Աշակերտն այս տարիքից պետք է գիտակցի, որ աշխարհը, որտեղ նա ապրում է, բազմազան է, բաղկացած է կենդանի և անկենդան բաղադրիչներից, որոնք սերտորեն և դինամիկ փոխկապակցված են: Նրա համար շատ կարևոր է մի կողմից ընկալել կենդանի բնության բազմազանությունը, ծանոթանալ օրգանիզմների կառուցվածքի և կյանքի առանձնահատկություններին, մյուս կողմից, ստեղծել հիմնավոր պատկերացում մարդու և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների մասին, հասկանալ, թե ինչ օգտակար կամ վասակար փոփոխություններ կարող է անել մարդը շրջապատող աշխարհում, իմանալ շրջակա միջավայրի պահպանության հիմնական սկզբունքները և հասկանալ մարդու դերը շրջակա միջավայրում: Այս ամենի արդյունքում դեռահասի մոտ պետք է ձևավորվի բնապահպանական գիտակցություն և շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարության տարրական սովորություններ: Այս դերն ունեն բոլոր ուսուցիչները:

Մեր կազմած «Բնության» I դասարանի դասագիրքը բաղկացած է երեք բաղադրիչներից. Դրանք են՝ Աշակերտի գիրք, Աշակերտի տետր և Ուսուցչի գիրք: Այն ընդգրկում է 33 թեմա և 52 հարց: Համաձայն ազգային ուսուսմական պլանի, I դասարանում «Բնագիտությանը» տարվա ընթացքում շաբաթական տրամադրվում է 2 ժամ:

Դասագրքի բովանդակությունը համապատասխանում է Ազգային ուսուսմական պլանով նախատեսված բովանդակությանը, նպատակային հասկացություններին և արդյունքներին:

Յուրաքանչյուր հարց, աշակերտների տարիքային առանձնահատկություններին նախատեսմամբ, հիմնականում ներկայացված է նկարազարդումներով և առաջադրանքներով:

Նկարազարդումները (նկարներ, լուսանկարներ, սխեմաներ և այլն իրենց մակագրություններով) կարևոր դեր են խաղում գիտելիքի ակտիվ փոխանցման գործընթացում:

Դրանց նշանակությունն այնքան մեծ է, հատկապես առաջին դասարանում, որ երբեմն նկարազարդումները գրքում ավելի շատ տեղ են զբաղեցնում, քան տեքստը:

Ուսուցիչը պետք է ընտելացնի երեխաներին դիտարկել և աշխատել նկարազարդումների վրա, կապել տեքստից ստացված տեղեկությունը և նկարազարդումները: Նկարազարդումների վրա աշխատելը բարձրացնում է տվյալ նյութի գիտակցված յուրացման մակարդակը, օգնում աշակերտներին առարկաները համեմատել իրար հետ: Եթե աշակերտները միայն մակերեսորեն նայեն նկարազարդմանը, նրանք չեն նկատի շատ կարևոր մանրամասներ: Նյութի մակերեսային ընկալումը ոչ մի օգուտ չի տալիս, անհրաժեշտ է համակարգված սովորեցնել աշակերտներին դիտարկել նկարը, վերլուծել նկարը, համեմատել այն այլ նկարների հետ, բացատրել դրա բովանդակությունը:

Պարզ է, որ նկարազարդումները դասագրքում չպետք է լինեն միայն ուշադրություն գրավելու համար, նրանք ունեն որոշակի կրթական գործառույթ և կարող են ուղղակիորեն նկարազարդել տեքստի մի հատվածը կամ ինքնուրույն տեղեկություն տրամադրել աշակերտին:

Ուսուցիչը կարող է, իր հայեցողությամբ, առանձին աշակերտների առաջարկել օգտագործել կոնկրետ նկարազարդում: Աշակերտի դասագրքում նկարազարդումները ներկայացված են այնպես, որ հնարավոր է դրանք ամբողջությամբ դիտարկել և վերլուծել: Ինչպես նաև, ուսուցիչը կարող է օգտվել ինչպես մեր կողմից պատրաստված էլեկտրոնային ռեսուրսներից, այնպես էլ լրացուցիչ նյութերից:

Ուսուցիչը կարող է չսահմանափակվել միայն դասագրքի նկարազարդումներով, շատ պատկերազարդ նյութեր կարելի է գտնել թերթերում և ամսագրերում, գովազդային գրքույկներում, ինտերնետում, ասօրյա օգտագործման ապրանքների պիտակների վրա և այլն:

Աշակերտներն իրենք էլ մեծ եռանդով մասնակցում են պատկերազարդ նյութի պատրաստմանը (օրինակ՝ պաստառներ), որն օգնում է նրանց գիտակցված սովորել և մտապահել նյութը:

Օրինակ, ցուցադրման համար կարող էք օգտագործել տարբեր բույսերի տերևներ, թռչունների փետուրներ և շատ ուրիշներ: Դուք կարող էք պատրաստել թեմատիկ պաստառներ, գրառումներ կատարել և փակցնել դրանք պատին: Պատին ամրացված նման տեսանելի նյութը ուսուսմական գործընթացի ընթացքում բազմիցս օգտակար կլինի ուսուցչին:

Աշակերտի գրքում առաջադրանքները հիմնված

են ներկայացված նկարագարդումների վրա:
Առաջադրանքների ներկայանակը բազմազան է:
Աշակերտի տեսքում ևս մեծ քանակությամբ
են նկարագարդումները, որոնք ներառում են նաև
բազմազան վարժություններ:

Ուսուցչի գիրքը կօգնի ուսուցիչներին, որ
ուսուժական տարվա ավարտին հասնեն առար-
կայական չափորոշում սահմանված արդյունքին,
ուսանման/ուսուցման գործընթացը հետաքրքիր և
զվարճալի վարեն:

Ծանոթացնում ենք Աշակերտի գրքի կառուցվածքը

Յուրաքանչյուր թեմա սկսվում է տիտղոսաթերթով: Դասագրքում ներկայացված երկու թեմաներում մշակվում են չափորոշչով տրված բոլոր հինգ նպատակային հասկացությունները:



Երջակա միջավայրի իմ շուրջը

2. Ինչպիսի՞ն է իմ տան բակը:

Հիշի՛ր Իրան՝ հի երևույթ, երբ ազատ ժամանակ ունեն:

Բաների սուփ

Վարժաբաններ

1. Լեզուագրի՛ր. Ի՞նչ են տեսնում նկարներում: Ի՞նչ են անում երեխաները բակում:

1. Ի՞նչ իմացա Բույսը մի անու է որակի մասը **հանրահայտում** են, և կրկնում:

2. Ի՞նչ ինձ մտորելու Իրոշ աներ լավ անուն:

10

Երջակա միջավայրը և կենդանի արարածները

15. Մեր կանաչ բարեկամները

Հիշի՛ր Ի՞նչ բույսեր են քեզ ծանոթ:

Բաների սուփ

Վարժաբաններ

1. Դիտարկի՛ր. Դիտի՛ր ցու թանում, դպրոցի թանում և մերձակա գրասրահում բույսերը և նկարագրի՛ր դրանք:

2. Պատասխանի՛ր հարցին. Ինչու՞ վ՛ է ծառը տարբերվում մյուս բույսերից:

1. Ի՞նչ իմացա Ծառը, բույսի և խոտը բույսեր են

3. Լեզուագրի՛ր. Ի՞նչ բույսեր են անունում նկարում:

4. Համեմատի՛ր. Ի՞նչ տարբերություն կա այս ծառերի միջև:

1. Ի՞նչ ինձ մտորելու Բույսերի իրակայն սարքերվում են բարձրություն, տեղեկներ հետև

15

Երևույթ

32. Երբ է ցուրտ, երբ է շոգ...

Հիշի՛ր

ա. Տարվա ո՞ր եղանակին է ամենացուրտ: Ե՞րբ է շոգ:

բ. Ի՞նչ գիտեք ժամանակին են անկի տևանում բույսերի և անողի տարբեր եղանակներին:

գ. Տարվա ո՞ր եղանակին և սեզոնում է ինչո՞ւ:

Բաների սուփ

ցուրտ
շոգ

Վարժաբաններ

1. Լեզուագրի՛ր.

ա. Ի՞նչ են անում Կիկան և Գիգանան:

բ. Ինչո՞ւ է տարբեր երանք գործունեությունը:

1. Ի՞նչ իմացա Ամռանը շոգ է, և սևեռ հազուսում է երբ ցուրտ, ցուրտ հազուսում: Չմոռո՞ղ ցուրտ է, և սևեռ անող հազուսում են երբ հազուսում:

2. Ի՞նչ ինձ մտորելու տեղիք տվե՛ք Տարվա տարբեր եղանակներին ասարթեր կերպ են հազուսում:

Ինչո՞րք է անելիք Էրբ ուսում է երբ ինձնու, քե կր ինչպիսի հազուսում տեղիք է հազուսում: Գիտի՛ր ուսանողիք:


96

97

Աշակերտի գրքում ներկայացված են հետևյալ խորագրերը.

Հիշի՛ր

Որտե՞ղ են ապրում մարդիկ



«**Հիշի՛ր**» խորագրի փոփոխված աշակերտն ակտիվացնում է նախապես ունեցած գիտելիքը տվյալ հարցի մասին:

Բառերի տուփ

- տուն
- սենյակ
- հարկ

«**Բառերի տուփ**»՝ աշակերտը ծանոթանում է նոր բառերի և տերմինների:

Վարժություններ

1 Ակարագի՛ր.

Ի՞նչ ես տեսնում նկարներում. Երեխաներն ի՞նչ են անում բակում



«**Վարժություններ**»՝ ներառում է տարբեր տեսակի առաջադրանքներ, այդ թվում՝ դիտարկի՛ր, նկարագրի՛ր, համեմատի՛ր, պատասխանի՛ր հարցերին և բացահայտի՛ր: Դրանցից յուրաքանչյուրը նպաստում է հարցի ուսուսումնասիրությանն ու ըմբռնմանը, համալիր առաջադրանքի վրա աշխատելուն:

Ի՞նչ իմացա

Տունը տեղ է, որտեղ ապրում ենք:

«**Ի՞նչ իմացա**»՝ խորագրում մեկ նախադասությամբ փոխանցված է ամբողջ հարցի գլխավոր գաղափարը, ինչն աշակերտին օգնում է ձևավորել կայուն պատկերացում:

Ի՞նչը ինձ մտորելու տեղիք տվեց

Որոշ տներ բակ չունեն:

«**Ի՞նչը ինձ մտորելու տեղիք տվեց**»՝ խորագրին օգնում է աշակերտին գլոբալ նայել հարցին և նրան մտածելու տեղիք է տալիս:

Իմացի՛ր ավելին

Լսի՛ր «Մեր բակը» երգը:



«**Իմացի՛ր ավելին**»՝ խորագրում տրված են լրացուցիչ էլեկտրոնային ռեսուրսներ և տեղեկություններ:



«**Լսի՛ր ուսուցչին**»՝ ուսուցչին աշակերտին ծանոթացնում է Ուսուցչի գրքում տրված համալիր առաջադրանքների ներածական քեյսերը, ինչը մոտիվացիոն և, մինևույն ժամանակ, նախնական գիտելիքի վրա հիմնված ուսուսական ռեսուրս է:

Աշակերտի գրքում և տետրում տրված **համալիր առաջադրանքների** պայմանները Ուսուցչի գրքում տրված համալիր առաջադրանքների պարզեցված տարբերակն են (ուսուցչին այս առաջադրանքները ավելի մանրամասն, դրանց կատարման փուլերով տրված են Ուսուցչի գրքի Թեմատիկ մատրիցաներ բաժնում): Համալիր առաջադրանքներն ընդգրկում են մի քանի հարցեր և, հետևաբար, դասագրքում և տետրում տեղադրված են այս հարցերից առաջ:

Համալիր առաջադրանք 2

Իրերը ստեղծ և պարզում

Ինչո՞ւ չի ինչ պատահեց գնումնից վաղաք երկնակնին

Ճանաչողն ը ստառադանքն պարաննին և աշխատն ը Աշակերտն տեսա՞ւմ:

Տան իրերն ը ուսումնական պարագրանքն ընտրն ը 2-2 հոտ, ուսումնականն ը դրանք և լրացա՞ւ տարա՞նք:

Աղաթան ը ստեղծողն և ստեղծվողն և ստեղծողն: Կարճում տարբեր տեսակադրանքն և կարճում

Աստառադանքն հնու՞շ և:

| Ինչ կնայե՞ք | Ուսուցչն | Ուսուցչն | Ինչ կարճողն և ստեղծվողն |
|-------------|----------|----------|-------------------------|
| Նման է 2 | | | Նման է 2 |

Համալիր առաջադրանք 5

Ինչու՞ն է ներ գգում աշխարհը:

Ինչո՞ւ չի ինչպես և ևս ընկնից կարճողն կա ընկնից առաջադրանքն:

Ճանաչողն ը ստառադանքն պարաննին և աշխատն ը Աշակերտն տեսա՞ւմ:

Ի գրքում և կնայն տարբեր և ուսումնական տարբեր: Ինչպես պարաննին կնայն կարճողն կարճողն և ստառադանքն և ուսումնական կարճողն կարճողն:

Լապտաք ը ստեղծողն և ստեղծվողն: Կարճում, տարբեր ընտրանքն և ուսումնական կարճողն կարճողն:

Այստեղ լապտաքն հնու՞շ և:

Դասագրքի յուրաքանչյուր գլխի վերջում տրված է «**Իմ ձեռքբերումները**» ներդիրը, որը պարունակում է այնպիսի առաջադրանքներ, որոնց միջոցով աշակերտը կարող է ստուգել արդեն իսկ ձեռք բերած գիտելիքները:

Իմ ձեռքբերումները

Ի՞նչն է ը ստեղծողն և ստեղծվողն: Ի՞նչն կարճողն կարճողն և ստեղծողն և ստեղծվողն:

Ի՞նչն կարճողն կարճողն և ստեղծողն և ստեղծվողն:

Ի՞նչն կարճողն կարճողն և ստեղծողն և ստեղծվողն:

Ի՞նչն կարճողն կարճողն և ստեղծողն և ստեղծվողն:

Իմ ձեռքբերումները

Ի՞նչն է ը ստեղծողն և ստեղծվողն: Ի՞նչն կարճողն կարճողն և ստեղծողն և ստեղծվողն:

Ի՞նչն կարճողն կարճողն և ստեղծողն և ստեղծվողն:

Ի՞նչն կարճողն կարճողն և ստեղծողն և ստեղծվողն:

Ի՞նչն կարճողն կարճողն և ստեղծողն և ստեղծվողն:

2. ՏԱՐՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ

Ներածություն

Տարրական (I-VI) մակարդակի բնական գիտությունների պարտադիր դասընթացը ենթադրում է ինտեգրված և հոլիստական մոտեցում, որը ներառում է բնական գիտությունների հիմունքների կիրառում և մեկնաբանում՝ մեզ շրջապատող աշխարհը բացատրելու համար:

Չափորոշչում արդյունքների և նպատակային հասկացությունների տեսքով սահմանված են երկարաժամկետ (աստիճանի) նպատակներ:

Չափորոշչում պարտադիր կերպով սահմանված են թեմաներ և ենթահասկացություններ, որոնց հիման վրա դպրոցներն իրենք են հստակեցնում հարցերը:

Արդյունքները մշակվում են յուրաքանչյուր թեմայում: Թեմաներն ուղեկցվում են արդյունքների ձեռքբերման ստուգիչներով: Դրանք սահմանում են, թե ինչը պետք է գնահատել ուսանում-ուսուցման գործընթացում:

IV ԴԱՍԱՐԱՆԻ ՎԵՐՋՈՒՄ ՁԵՆՔԲԵՐՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տարրական աստիճանում չափորոշչում ամրագրված յուրաքանչյուր արդյունքին նախորդում է դասիչ, որը մատնանշում է առարկան, ուսուցման փուլը և չափորոշչի արդյունքի համարը, օրինակ. **Բնութ.տարր.1.**

- «**Բնութ.**»՝ մատնանշում է «Բնություն» առարկան,
- «**տարր.**»՝ մատնանշում է տարրական աստիճանը,
- «**(I)**»՝ մատնանշում է, որ չափորոշիչը ներառում է I-IV դասարանները,
- «**1**»՝ մատնանշում է չափորոշչի արդյունքի համարը:

| ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (I-IV ԴԱՍԱՐԱՆՆԵՐ) | | |
|---|---|---|
| ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԻՉՆԵՐ | ԱՇԽԱԿԵՐՏԸ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ. | ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
| ԲՆՈՒԹ.ՏԱՐՐ.(I).1 | Գործնական ակտիվությունների և տարրական հետազոտական հմտությունների ու կարողությունների կիրառմամբ նկարագրել մարմնի բաղադրիչ նյութերի հատկանիշները, այդ թվում՝ նմանություններն ու տարբերությունները որոշելու/վերլուծելու համար: | Մարմին (Արդյունքներ. 1, 2, 3, 4, 5) Երևույթ (Արդյունքներ. 1, 2, 3, 4, 5) |
| ԲՆՈՒԹ.ՏԱՐՐ.(I).2 | Գործնական ակտիվությունների և տարրական հետազոտական հմտությունների ու կարողությունների կիրառմամբ նկարագրել տարբեր բնական երևույթներ և որոշել պարզ պատճառահետևանքային կապերը: | Կողմորոշում տարածության մեջ (Արդյունքներ. 1, 2, 3, 4, 5) |
| ԲՆՈՒԹ.ՏԱՐՐ.(I).3 | Գործնական ակտիվությունների և տարրական հետազոտական հմտությունների ու կարողությունների կիրառմամբ նկարագրել օրգանիզմների խմբերի կենսական հատկանիշները և բնական միջավայրը /կենսամիջավայրն ու որոշել կապերը կենդանի և անկենդան աշխարհի միջև: | Օրգանիզմ, կենսական միջավայր (Արդյունքներ. 1, 2, 3, 4, 5) |
| ԲՆՈՒԹ.ՏԱՐՐ.(I).4 | Գործնական ակտիվությունների և տարրական հետազոտական հմտությունների ու կարողությունների կիրառմամբ դատողություն անել շրջակա միջավայրի պահպանության անհրաժեշտության մասին՝ նրա կարևորությունը հիմնավորելու համար: | Շրջակա միջավայրի պահպանություն (Արդյունքներ. 1, 2, 3, 4, 5) |
| ԲՆՈՒԹ.ՏԱՐՐ.(I).5 | Գործնական ակտիվությունների և տարրական հետազոտական հմտությունների ու կարողությունների կիրառմամբ պահպանել հիգիենայի տարրական նորմեր՝ առողջության պահպանման նպատակով: | |

Նպատակային հասկացություններ և ենթահասկացություններ (I-IV դասարան)

| ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԵՆԹԱՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|
| ՍԱՐՄԻՆ | Կենդանի և անկենդան մարմիններ Բնական և արհեստական մարմիններ Բնական և արհեստական նյութեր Թափանցիկ, անթափանց Ջրաթափանց և անջրանցիկ նյութեր Հրակայուն նյութեր Թեթև և ծանր մարմիններ Պինդ, հեղուկ և գազային վիճակ Վրաստանի օգտակար հանածոների ֆիզիկական հատկությունները |
| ԵՐԵՎՈՒՅԹ | Լույսը և դրա տարածումը Ջերմության փոխանցում, ջերմահաղորդականություն Ձայնը և դրա տարածումը Հրում, քաշում, շարժում, դիրք, ուղղություն Տատանողական շարժում Ձգողականություն, վանում Գոլորշիացում, կոնդենսացում, հալում, պնդացում Տարերային երևույթներ Տարվա եղանակներ, եղանակի փոփոխականություն |
| ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ | Աշխարհագրական օբյեկտներ (գետի ակունք, գետաբերան, վտակ, ջրհեղեղ, հովիտ, հուն, լեռ, գագաթ, լանջ, հարթավայր, լիճ, ծով, օվկիանոս, մայրցամաք) Հորիզոն, հորիզոնի կողմերը Տեղանքի հատակագիծ, գլոբուս, քարտեզ Երկնային մարմիններ (Արեգակնային համակարգ) |
| ՕՐԳԱՆԻԶՄ ԵՎ ԿԵՆՍԱՄԻՋԱՎԱՑՐ | Օրգանիզմների խմբեր Կենսական հատկանիշներ (սնուցում, շարժում, հարմարվողականություն, շնչառություն, բազմացում, աճ և զարգացում) Բնական միջավայր Մարդու կացարան Բնական և արհեստական միջավայր Առողջություն և հիգիենա Մարմնի մասեր Մարդ, մարդու մարմնի մասեր, մարդու զգայական օրգաններ |
| ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՑՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | Մաքուր շրջակա միջավայր Շրջակա միջավայրի աղտոտվածություն Մպառվող և չպառվող բնական ռեսուրսներ Վերականգնվող և չվերականգնվող ռեսուրսներ Ռեսուրսների ռացիոնալ օգտագործում Քաղցրահամ ջուր Թափոններ (քայքայվող և չքայքայվող նյութեր, երկրորդային վերամշակում, նյութերի այրման հետևանքները) Ջերմոցային էֆեկտ, գլոբալ տաքացում Բնապահպանական միջոցառումներ |

Պարտադիր / երաշխավորվող թեմաներ.

| |
|-------------------------------------|
| I դասարան |
| Տունը և դպրոցը, որպես միջավայր |
| Մարդ |
| II դասարան |
| Ցամաքը, որպես միջավայր |
| Ջուրը, որպես միջավայր |
| Օդը, որպես միջավայր |
| III դասարան |
| Իմ երկրի բնությունը |
| Արեգակնային համակարգ |
| IV դասարան |
| Երկիր |
| Ցիկլային գործընթացները բնության մեջ |

I դասարան

| |
|--|
| ԹԵՄԱ 1. ՏՈՒՆԸ և ԴՊՐՈՑԸ, ՈՐՊԵՍ ՄԻՋԱՎԱՅՐ |
| Թեմայի շրջանակներում արդյունքների հասնելու ստուգիչներն՝ ըստ նպատակային հասկացությունների. |
| <p>Մարմին Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> Տան և դպրոցի տարածքում որոշել մարմինների բաղկացուցիչ նյութերի հատկությունները, պարզ փորձերի միջոցով բնութագրել և համեմատել դրանք: |
| <p>Երևույթ Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> Դատողություն անել տարբեր ակտիվությունների համար մարմինների շարժումը հարուցող պատճառների (քաշում, հրում) նշանակության մասին: Տեղական միջավայրը դիտարկելով՝ որոշել որոշ բնական երևույթների համապատասխանությունը ցերեկվան ու գիշերվան և տարվա եղանակներին (օր. գիշեր – լուսին, ցերեկ – արև, ձմեռ – ցուրտ, աշուն – տերևաթափ): |
| <p>Կողմնորոշում տարածության մեջ Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> Նկարագրել տեղի (տան և դպրոցի) միջավայրը և կողմնորոշվել նրանում: Նկարագրել դպրոցի ու տան հարող տարածքում հեշտությամբ ճանաչելի աշխարհագրական օբյեկտները: Հիմնավորել դպրոցից տուն տարածությունում անվտանգ տեղաշարժվելու կանոնների կարևորությունը: |
| <p>Օրգանիզմ, կենսական միջավայր Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> Նկարագրել դպրոցի և տան տարածքում եղած օրգանիզմների (բույսեր, կենդանիներ, սունկ) կենսամիջավայրը և մոդելավորել դրանք (ապլիկացիա, նկար, «սովորում ենք խաղալով» և այլն): Նկարագրել հիգիենայի կանոնները և դատողություն անել այս կանոններին հետևելու կարևորության մասին: |
| <p>Շրջակա միջավայրի պահպանություն Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> Դատողություն անել տեղի միջավայրի (տան, դպրոցի տարածքի) մաքրությունը պահպանելու անհրաժեշտության մասին: Դատողություն անել օրգանիզմների համար մաքուր կենսամիջավայրի կարևորության մասին: |

| ԹԵՄԱ 2. ՄԱՐԴԸ |
|---|
| <p>Թեմայի շրջանակներում արդյունքների հասնելու ստուգիչներն՝ ըստ նպատակային հասկացությունների.</p> <p>Օրգանիզմ, կենսական միջավայր Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Նկարագրել մարդու մարմնի արտաքին կառուցվածքը, նկարագրել մարդկանց (ցածր դասարանցի, բարձր դասարանցի, ուսուցիչ, ծնող) արտաքին հատկանիշների նմանություններն ու տարբերությունները: • Դատողություն անել առողջության պահպանման նպատակով հիգիենայի տարրական կանոնները պահպանելու անհրաժեշտության մասին: • Որոշել մարդու զգայական օրգանների և դրանց գործառնությունների միջև համապատասխանությունը (օրինակ՝ տեսնում ենք աչքերով, լսում՝ ականջներով): <p>Երևույթ Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Վերլուծել մարդու օրգանիզմի վրա բնական երևույթների ազդեցությունը (օրինակ՝ շոգ, ցուրտ, տարվա եղանակների փոփոխականություն): <p>Մարմին Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Որոշել մարդկանց անհրաժեշտ իրերի բաղադրիչ նյութերի հատկությունները, բնութագրել և համեմատել դրանք: <p>Կողմնորոշում տարածության մեջ Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Թվարկել այն տերմինները, որոնցով մարդը նկարագրում է կողմնորոշումը տարածության մեջ: <p>Շրջակա միջավայրի պահպանություն Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Պահպանել տեղի (տան, դպրոցի) միջավայրի մաքրությունը: |

| ԹԵՄԱ 3. ՑԱՄԱՔԸ, ՈՐՊԵՍ ՄԻՋԱՎԱՅՐ (II ԴԱՄԱՐԱՆ) |
|--|
| <p>Թեմայի շրջանակներում արդյունքների հասնելու ստուգիչներն՝ ըստ նպատակային հասկացությունների.</p> <p>Մարմին Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Նկարագրել ցամաքային տրանսպորտային միջոցները և դրանք համեմատել իրար հետ: • Պարզ փորձերի վրա հիմնվելով՝ դատողություն անել նյութերի հատկությունների (ձևի փոփոխություն, ջրում լուծելիություն, ջերմահաղորդականություն...) մասին: • Պարզ փորձերի միջոցով թվարկել հողի բաղադրիչները: <p>Երևույթ Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Երկրաշարժի և սողանքի ժամանակ դատողություն անել անվտանգ վարքագծի կանոնների նշանակության մասին: <p>Կողմնորոշում տարածության մեջ Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Նկարագրել ցամաքի օբյեկտները: <p>Օրգանիզմ, կենսական միջավայր Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Դատողություն անել ցամաքային կենդանի օրգանիզմների կառուցվածքի և կենսական հատկությունների մասին: • Դատողություն անել ցամաքային օրգանիզմների համար շրջակա միջավայրի կարևորության և շրջակա միջավայրին նրանց հարմարվողականության մասին: <p>Շրջակա միջավայրի պահպանություն Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Նկարագրել ցամաքի աղտոտման օրինակներ և դատողություն անել աղտոտման կանխարգելման հնարավորությունների մասին: |

ԹԵՄԱ 4. ՋՈՒՐԸ, ՈՐՊԵՍ ՄԻՋԱՎԱՅՐ (II ԴԱՄԱՐԱՆ)

Թեմայի շրջանակներում արդյունքների հասնելու ստուգիչներն՝ ըստ նպատակային հասկացությունների.

Մարմին

Աշակերտը պետք է կարողանա.

- Պարզ փորձի միջոցով բացահայտել և խմբավորել մարմինները՝ ըստ ջրաթափանցելիության:
- Նկարագրել ջրային տրանսպորտը և համեմատել իրար հետ՝ ըստ բնութագրերի:
- Պարզ փորձերի հիման վրա նկարագրել ջրի ֆիզիկական հատկությունները (թափանցիկություն, հոտ, գույն, հոսողություն) և դատողություն անել ջրի կարևորության մասին:

Երևույթ

Աշակերտը պետք է կարողանա.

- Նկարագրել ջրհեղեղներ, հեղեղումներ և փոթորիկներ:
- Դատողություն անել ջրհեղեղների և հեղեղումների ժամանակ անվտանգ վարքագծի կարևորության մասին:

Կողմնորոշում տարածության մեջ

Աշակերտը պետք է կարողանա.

- Նկարագրել ջրային օբյեկտները (գետեր, լճեր, ծովեր, օվկիանոսներ) և դրանց բաղկացուցիչ մասերը (օրինակ՝ ակունք, ափ, հատակ, գետաբերան):
- Համեմատել ծովի և գետի ջուրը և դատողություն անել դրանց տարբերության պատճառների մասին:

Օրգանիզմ, կենսական միջավայր

Աշակերտը պետք է կարողանա.

- Դատողություն անել ջրաբնակ օրգանիզմների կառուցվածքի և կենսական հատկությունների մասին:
- Դատողություն անել ջրաբնակ օրգանիզմների համար շրջակա միջավայրի կարևորության և շրջակա միջավայրին նրանց հարմարվողականության մասին:
- Դատողություն անել ջրացամաքային կենդանիների միջավայրին հարմարվողականության մասին:

Շրջակա միջավայրի պահպանություն

Աշակերտը պետք է կարողանա.

- Նկարագրել ջրի աղտոտվածության օրինակներ և դատողություն անել այդ աղտոտումից խուսափելու հնարավորությունների մասին:

ԹԵՄԱ 5. ՕՂԸ, ՈՐՊԵՍ ՄԻՋԱՎԱՅՐ (II ԴԱՄԱՐԱՆ)

Թեմայի շրջանակներում արդյունքների հասնելու ստուգիչներն՝ ըստ նպատակային հասկացությունների.

Մարմին

Աշակերտը պետք է կարողանա.

- Թվարկել օդի բաղադրիչ մասերը:
- Նկարագրել օդային տրանսպորտը և համեմատել իրար հետ՝ ըստ նրանց բնութագրերի:

Երևույթ

Աշակերտը պետք է կարողանա.

- Նկարագրել քամին, որպես բնական երևույթ:
- Դատողություն անել տարբեր տեսակի ուժեղ քամու (փոթորիկ, մրրիկ) ժամանակ անվտանգ վարքագծի կարևորության մասին:

Կողմնորոշում տարածության մեջ

Աշակերտը պետք է կարողանա.

- Նկարագրել օդում շարժվող օբյեկտների կողմնորոշման միջոցները:
- Նկարագրել թռչունների սեզոնային միգրացիան:

Օրգանիզմ, կենսական միջավայր

Աշակերտը պետք է կարողանա.

- Դատողություն անել թռչունների և այլ թռչող օրգանիզմների (թիթեռ, չղջիկ, մեղու) արտաքին կառուցվածքի և կենսական հատկությունների մասին:
- Դատողություն անել թռչունների համար շրջակա միջավայրի կարևորության և շրջակա միջավայրին նրանց հարմարվելու մասին:

Շրջակա միջավայրի պահպանություն

Աշակերտը պետք է կարողանա.

- Նկարագրել օդի աղտոտվածության օրինակներ և քննարկել այս աղտոտումից խուսափելու հնարավորությունները:

| |
|--|
| <p>ԹԵՄԱ 6. ԻՄ ԵՐԿՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ (III ԴԱՍԱՐԱՆ)</p> <p>Թեմայի շրջանակներում արդյունքների հասնելու ստուգիչներն՝ ըստ նպատակային հասկացությունների.</p> <p>Մարմին Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Դատողություն անել Վրաստանի օգտակար հանաձոների նշանակության մասին՝ ըստ նրանց ֆիզիկական հատկությունների: <p>Երևույթ Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Դատողություն անել Վրաստանին բնորոշ տարերային երևույթների ժամանակ անվտանգության կանոնների կարևորության մասին: <p>Կողմնորոշում տարածության մեջ: Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Նկարագրել Վրաստանի աշխարհագրական դիրքը: • Ըստ Վրաստանի տարբեր մարզերի դատողություն անել սեզոնների փոփոխական եղանակի բաղադրիչների մասին: <p>Օրգանիզմ, կենսական միջավայր Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Բնութագրել Վրաստանում տարածված բույսերը և կենդանիները (ներառյալ հասարակական միջատները): • Պարզ մոդելի միջոցով նկարագրել բույսերի օրգանները և հիմնավորել յուրաքանչյուր օրգանի կարևորությունը: • Դատողություն անել բույսերի աճի և զարգացման համար շրջակա միջավայրի պայմանների (լույս, ջուր) նշանակության մասին: • Դատողություն անել մարդու համար առողջ սննդի կարևորության մասին: <p>Շրջակա միջավայրի պահպանություն: Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Բնութագրել բնական ռեսուրսները (սպառվող, չսպառվող): • Դատողություն անել Վրաստանի բնական ռեսուրսների պահպանման անհրաժեշտության և այդ ռեսուրսների ուսցիոնալ օգտագործման մասին: |
|--|

| |
|--|
| <p>ԹԵՄԱ 7. ԱՐԵՉԱԿՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ (III ԴԱՍԱՐԱՆ)</p> <p>Թեմայի շրջանակներում արդյունքների հասնելու ստուգիչներն՝ ըստ նպատակային հասկացությունների.</p> <p>Մարմին Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Պարզ փորձերի միջոցով նկարագրել լույսի տարածման պարզ օրինաչափությունները: • Պարզ փորձերի միջոցով համեմատել ջերմահաղորդիչ և ջերմամեկուսիչ մարմինները: • Գործնական աշխատանքի հիման վրա դատողություն անել ստվերների չափերի փոփոխություն առաջացնող պատճառների մասին: <p>Երևույթ Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Դատողություն անել Արեգակնային համակարգում ձայնի առաջացման և տարածման մասին: <p>Կողմնորոշում տարածության մեջ Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Նկարագրել ուղղակիորեն դիտվող երկնային մարմինները: • Մոդելի միջոցով նկարագրել Արեգակնային համակարգը: <p>Օրգանիզմ, կենսական միջավայր Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Որոշել Արեգակնային համակարգում կյանքի համար անհրաժեշտ միջավայրի պայմանները: <p>Շրջակա միջավայրի պահպանություն Աշակերտը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Վերլուծել տիեզերական թափոններով Երկրին հասցված վտանգից խուսափելու գոյություն ունեցած միջոցները: |
|--|

ԹԵՄԱ 8. ԵՐԿԻՐԸ (IV ԴԱՍԱՐԱՆ)

Թեմայի շրջանակներում արդյունքների հասնելու ստուգիչներն՝ ըստ նպատակային հասկացությունների.

Մարմին

Աշակերտը պետք է կարողանա.

- Պարզ փորձերի վրա հիմնվելով՝ նկարագրել նյութերի մագնիսական հատկությունները, ըմբռնել մագնիսի նշանակությունը:
- Դատողություն անելի Երկրի ապարների և դրանցում առկա հանքանյութերի մասին:

Երևույթ

Աշակերտը պետք է կարողանա.

- Դատողություն անել Երկրի ռելիեֆի փոփոխություններ հարուցող տարերային երևույթների (հրաբուխ, երկրաշարժ) մասին:

Կողմնորոշում տարածության մեջ

Աշակերտը պետք է կարողանա.

- Օգտագործելով քարտեզը և գլոբուսը՝ նկարագրել կարևոր աշխարհագրական օբյեկտները (մայրցամաքներ, օվկիանոսներ...), որոշել դրանց փոխադասավորությունը:
- Նկարագրել կողմնացույցը և օգտագործել այն:
- Դատողություն անել Աշխարհագրական մեծ հայտնագործությունների կարևորության մասին:

Օրգանիզմ, կենսական միջավայր

Աշակերտը պետք է կարողանա.

- Նկարագրել Երկրի վրա կյանքի զարգացման որոշ փուլեր (օր. Յուրյան ժամանակաշրջան):
- Երկրի վրա, ըստ մայրցամաքների և օվկիանոսների, նկարագրել օրգանիզմների տարածման պատկերը:
- Որոշել և նկարագրել բրածո օրգանիզմները:

Շրջակա միջավայրի պահպանություն

Աշակերտը պետք է կարողանա.

- Նկարագրել քայքայվող և չքայքայվող նյութերի ազդեցությամբ պայմանավորված շրջակա միջավայրի տեղական և գլոբալ փոփոխությունները:
- Դատողություն անել տարբեր նյութերի այրումով հարուցված (օր.՝ ռետին, պլաստիկ) շրջակա միջավայրի աղտոտվածության մասին:

ԹԵՄԱ 9. ՑԻԿԼԱՅԻՆ ԳՈՐԾԸ ԹԱՑՆԵՐԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (IV ԴԱՍԱՐԱՆ)

Թեմայի շրջանակներում արդյունքների հասնելու ստուգիչներն՝ ըստ նպատակային հասկացությունների.

Մարմին

Աշակերտը պետք է կարողանա.

- Պարզ փորձերի միջոցով նկարագրել նյութերի ագրեգատային վիճակները:
- Պարզ փորձերի վրա հիմնվելով՝ դատողություն անել ջրի ագրեգատային վիճակների փոխադարձ փոխակերպման պայմանների մասին:

Երևույթ

Աշակերտը պետք է կարողանա.

- Բնութագրել բնության մեջ ջրի շրջանառությունը և դատողություն անել դրա կարևորության մասին:
- Քննարկել ցերեկ-գիշեր փոփոխությունները և սեզոնային գործընթացների պատճառները:

Կողմնորոշում տարածության մեջ

Աշակերտը պետք է կարողանա.

- Ցերեկ-գիշեր ցիկլի տարբեր ժամանակահատվածներում Արեգակի, Լուսնի, աստղերի օգնությամբ որոշել հորիզոնի կողմերը:

Օրգանիզմ, կենսական միջավայր:

Աշակերտը պետք է կարողանա.

- Նկարագրել տարբեր տեսակի օրգանիզմների կենսական բոլորաշրջանը և դրանք համեմատել իրար հետ:

Շրջակա միջավայրի պահպանություն

Աշակերտը պետք է կարողանա.

- Որոշել պատճառահետևանքային կապը մարդու գործունեության և Երկրի վրա ջրի ցիկլի փոփոխության միջև:

Աստիճանի հանգուցային հարցեր

Աստիճանի հանգուցային հարցերի միջոցով ընդգծվում են այն շեշտադրումները, որոնց կողմնորոշվելով պետք է ընթանա ուսանման-ուսուցման գործընթացը

- Ինչո՞ւ են մարմինները տարբերվում հատկություններով և բաղկացուցիչ նյութերով: Ինչո՞ւ և ինչպե՞ս են մարմնի կազմը սահմանում նրա հատկությունները: **(Նպատակային հասկացություն. Մարմին):**
- Ինչո՞ւ է փոխվում եղանակը: Ի՞նչն է առաջացնում բնական երևույթներ: Ինչո՞ւ են կոնկրետ գործընթացները հանգեցնում փոփոխությունների այս կամ այն միջավայրում: **(Նպատակային հասկացություն. Երևույթ):**
- Ինչպե՞ս կարող եմ օգտագործել տեղեկատվության տարբեր աղբյուրներ Երկիրը և տիեզերքն ուսումնասիրելու համար: Ինչպե՞ս օգտագործեմ այս կամ այն աշխարհագրական օբյեկտը տարածության մեջ կողմնորոշելու համար: **(Նպատակային հասկացություն. Կողմնորոշում տարածության մեջ):**
- Ինչո՞ւ են օրգանիզմները տարբերվում միմյանցից: Ինչպիսի՞ն է այս կամ այն օրգանիզմի կառուցվածքը, ինչպիսի՞ փոխադարձ կապ կա օրգանիզմի առանձին մասերի և դրանց գործառույթների միջև: Ինչպե՞ս են շրջակա միջավայրն ու դրանում ընթացող շարունակական փոփոխություններն ազդում տարբեր օրգանիզմների վրա **(Նպատակային հասկացություն. Օրգանիզմ, միջավայր):**
- Ինչպե՞ս է աղտոտված միջավայրն ազդում օրգանիզմների վրա: Ինչո՞ւ է անչափ կարևոր շրջակա միջավայրի պահպանությունը: Ինչպե՞ս ստիպել մեր հասարակությանը մտածել շրջակա միջավայրի պահպանության անհրաժեշտության մասին: **(Նպատակային հասկացություն. Շրջակա միջավայրի պահպանություն):**

3. ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապացուցելու կարիք չկա, որ բնական գիտությունները միայն նկարագրական բնույթի չեն և գոյություն ունեցած փաստացի գիտելիքը ձեռք է բերվել երևույթների բազմամյա հետազոտության միջոցով: Հետևաբար, եթե ուզում ենք, որ աշակերտը հետաքրքրված լինի բնագիտությամբ, ցանկալի է, որ նրան ակտիվորեն ներգրավենք հարցի հետազոտության-ուսուցման հարցի մեջ և չսահմանափակվենք միայն չոր փաստացի գիտելիքների և պատրաստ նյութի տրամադրմամբ: Վաղ տարիքից նրա մոտ պետք է ձևավորվեն այն հմտություններն ու կարողությունները, որոնք կապված են շրջակա միջավայրի հետազոտման հետ, մասնավորապես, շրջակա միջավայրի դիտարկում, բնական երևույթների ճանաչում և պարզ գործընթացների նկարագրություն, տվյալների հավաքում՝ դիտարկմամբ, պարզ փորձով և փորձարարությամբ, տեղեկատվական աղբյուրներից, օբյեկտների դասակարգում՝ ըստ նրանց հատկանիշների, քանակական տվյալների հաշվառում, դրանց կազմակերպում և տարբեր միջոցներով ներկայացում, շրջակա միջավայրի մասին հոգածություն և անվտանգության կանոնների պահպանում:

Շրջակա միջավայրի ճանաչման մեթոդներին տիրապետելու համար անհրաժեշտ է, որ դեռահասները գործնականում ծանոթանան պարզ գործիքների օգտագործմանը, չափման-հաշվարկային գործառնություններին, սովորեն կողմնորոշվել տեղանքում, օգտագործեն պլաններ և քարտեզներ և այլն: Դրանով խորանում է նրանց հետաքրքրությունը տիեզերքի հետազոտման նկատմամբ, հիմք է ստեղծվում, որ այն երևույթները, որոնց հետ առնչվում են ամենօրյա կյանքում ոչ թե ուղղակի ընկալեն, այլ սկսեն երևույթների միջև պատճառ-հետևանքային կապեր որոնել:

Ժամանակակից համաշխարհային կրթական քաղաքականության հիմնական ուղղությունը աշակերտակենտրոն կրթությունն է: Հետևաբար, ցանկալի է, որ ուսուցման մեթոդիկան ևս լինի աշակերտակենտրոն կամ ինտերակտիվ: Ուսուցման ավանդական մեթոդները ուսուցչին են տեսնում՝ որպես ուսուցման գործընթացի կենտրոնական դեմք, ուսուցիչը գիտելիքի հիմնական աղբյուրն էր, նա էր տեղեկատվություն տրամադրողը, հարցեր էր տալիս, վճռում խնդիրները, անում եզրակացություններ և ամեն ինչ պատրաստ տեսքով տրամադրում աշակերտներին: Ինտերակտիվ մեթոդիկան աշակերտակենտրոն է, աշակերտը ուսուցման գործընթացի կենտրոնական դեմքն է և ակտիվորեն մասնակցում է ուսուցման հարցի բոլոր Ակտիվություններին՝ ձեռք բերում և օգտագործում իր համար նոր գիտելիքը: Աշակերտակենտրոն մեթոդները ծառայում են երեխայի ներքին ուժերի և հնարավորությունների առավելագույնս դրսևորմանը:

Ծանոթանանք այն մեթոդներին, որոնք սպեցիֆիկ են բնական գիտության ուսուցման մեջ, նպաստում են այս առարկայի նկատմամբ դեռահասի հետաքրքրության բորբոքմանը և օգնում առարկայի արդյունավետ ուսանման հարցում:

ՀԱՐՑԵՐԻ ՏԵՍԱՎՆԵՐԸ

Հարցի հաղորդակցական էությունը կայանում է այս հարցի տարբեր այլընտրանքային պատասխանների համակցման մեջ: Հետևաբար, «լավ հարցն» այն հարցն է, որը դիտարկում է տարբեր այլընտրանքային պատասխաններ: Նաև հարցն ունի բազմաթիվ գործառնություններ՝ նոր տեղեկության ձեռքբերում, առկա տեղեկության հստակեցում, խոսքն այլ ուղղությամբ տանել, ակնարկ պատասխանին, սեփական կարծիքի ցուցադրում, գնահատում, խոսողի գիտակցության ու հույզերի կառավարում:

Ուսուցչի կողմից ընտրված հարցերը մեզ ցույց են տալիս այն արժեքները, որոնք նշանակալի են իր համար: Համապատասխանաբար, աշակերտներն ուշադրությունը կենտրոնացնում են այն արժեքների վրա, որոնք արժեքավոր են ուսուցչի համար: Օրինակ, եթե ուսուցիչը տալիս է հիմնարար փաստերի

կողմնորոշված հարցեր, աշակերտներն աշխատում են ցուցաբերել հիշողությանը կողմնորոշված գիտելիքներ: Նրանք կոահում են, որ այլ տիպի պատասխաններն ուսուցչի համար արժեքավոր չեն և չեն վաստակի բարձր գնահատում:

Այսպիսի հարցերին ընտելացած աշակերտները գիտելիքի այլ մակարդակում ավելի փաստացի գիտելիքն են գնահատում և դրան են ավելի ուշադրություն դարձնում: Բսկ այսպիսի գիտելիքը ամենից պակաս է նպաստում մտածողության զարգացմանը: Կարելի է ասել, որ սրանով աշակերտներին շփոթության մեջ ենք զգում: Փաստերի իմացությունն արժեք չունի, եթե աշակերտը չունի դրանց վերլուծման, համադրման, ինտեգրման կարողություն և չի կարող դրանք կիրառել:

Փաստերին կողմնորոշված հարցերին պատասխանելիս՝ աշակերտը կիրառում է իր բառապաշարի միայն նվազագույնը և չունի բովանդակալից խոսք վարելու հնարավորություն: Շատ աշակերտներ իրենց մեջ զարգացնում են փաստացի տեղեկությունը շտապ «կանչելու» կարողություն, ինչին բողոքովին էլ անհրաժեշտ չէ այս տեղեկության իմաստի մեջ թափանցել: Այսպիսի աշակերտը կարող է անգիր անել (մտապահել) տեղեկությունը, սակայն որպեսզի նա իմաստավորի նոր տեղեկությունը և լրացնի հին փորձը և գիտելիքը (հնի և նորի ամբողջացում), նա պետք է ընդգրկված լինի իմաստալից գրույցի մեջ և կարողանա միտքն իր բառերով հաղորդել: Բսկ դրա հնարավորություն փաստերին կողմնորոշված հարցերը չեն տալիս:

Ուսուցչի համար անչափ կարևոր է գիտակցել, որ հարցերի առաջադրումը տարբեր մակարդակի և բարդության մտածողությանը նպաստող միջոց է և պարտադիր պայման (Բլումի տաքսոնոմիական մակարդակների հետ կապված հարցերի բնութագրման համար հիմնականում հիմնվում ենք «Քննադատական մտածողության» թեմայով հրատարակված դասագրքերին):

Փաստերին կողմնորոշված հարցերը (ի՞նչ, ո՞վ, որտե՞ղ, ե՞րբ, որքա՞ն) պահանջում են տեղեկության մտաբերում: Այսպիսի հարցերի պատասխանը, որպես օրենք, հենց տեքստում է տրված լինում: Համարվում է, որ աշակերտները, որոնք դժվարանում են սովորել (չշփոթենք մտապահման հետ), փաստերին (հիշողությանը) կողմնորոշված հարցերին ավելի հեշտ են պատասխան տալիս և ավելի են հավանում դրանք: Սակայն, որքանով որ այս հարցերի պատասխանները, սովորաբար լինում են՝ «ճիշտ է» կամ «ոչ ճիշտ է», շատ աշակերտներ դրանք «վտանգավոր» հարցեր են համարում:

Հասկանալուն կողմնորոշված հարցերը պահանջում են նյութի էության մեջ թափանցում և ցույց են տալիս, թե ինչպես կհասկացվի նոր հասկացությունը կամ թեման: Աշակերտից պահանջվում է ներկայացնել իրավիճակը, նկարը կամ երևույթը, որի մասին նա գիտելիք է ստանում, և նկարագրել իր բառերով, բացատրել, թե ինչպես է հասկանում, ինչպես տեսնում, ինչպես բացատրում, ինչպես կփոխի, ինչպես կհավաստի և այլն:

Այս մակարդակի վրա աշխատելու գործընթացում ուսուցիչը հաճախ է կիրառում բայերը՝ պարզաբանեք, բացատրեք, հաղորդեք հիմնական իմաստը, փոխանակեք, տարբերեք, հետազոտումով գտեք, փոխեք արտահայտությունը, կրկնեք և այլն:

Կիրառությանը կողմնորոշված հարցերն ուղղված են նրան, որպեսզի ցուցաբերվի սովորած նյութը նոր իրավիճակում կիրառելու կարողությունը: Հարցի ձևակերպման ժամանակ հնարավոր է օգտագործել հետևյալ հարցերը՝ ո՞ր, ինչպիսի՞, որպեսզի չշփոթենք առաջին (փաստերին կողմնորոշված) մակարդակի հարցերի հետ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հարցերի մեջ կիրառվելիք բայերին: Սրանք են՝ ապացուցեք, որոշեք, հաշվարկեք, պատրաստեք, վճռեք, ցույց տվեք, կապեք, հայտնաբերեք, համապատասխանեցրեք, կիրառեք, պարզեք և այլն:

Վերլուծությանը կողմնորոշված հարցերը բացահայտում են, թե արդյոք տրամաբանորեն է և նկարագրված իրադարձությունը, կարո՞ղ է արդյոք ամբողջ նյութն այնպես բաժանել մասերի, որ հստակ երևա ամբողջի կազմակերպական կառուցվածքը: Հիմնական հարցն է՝ ինչո՞ւ: Հնարավոր է աշակերտին հարցնել, թե որոնք էին հերոսի վարքն առաջացնող պատճառները (կամ ինչո՞ւ վարվեց այսպես) կամ ինչո՞ւ է այս կամ այն տեսակետը համարում ավելի խելամիտ: Աշակերտը պետք է գտնի սխալները, տարբերությունները, էական հատկանիշները: Հարցի ձևակերպման ժամանակ կիրառում ենք բայերը՝ վերլուծեք, բաժանեք, առանձնացրեք հիմնականը, բնութագրեք, գտեք, հակադրեք, սահմանեք և այլն:

Համադրությանը կողմնորոշված հարցերը նպաստում են հիմնախնդիրների ստեղծագործաբար վճռմանը՝ ինքնուրույն մտածողության օգտագործմամբ: Այս հարցերը զարգացնում են աշակերտների՝ մասերը կապակցելու և որպես մեկ ամբողջություն ձևավորելու կարողությունը: Համադրությանը

կողմնորոշված հարցերն աշակերտներից պահանջում են ստեղծել այլընտրանքային պատկեր, օրինակ՝ ինչ էք կարծում, ի՞նչ կարող էր անել պատմվածքի հերոսը դժբախտությունից խուսափելու համար, կամ՝ ինչպիսի՞ն կարող էին լինել հանգամանքները, որոնք իրավիճակը կփոխեին ի բարօրություն երկրի: Նույն տիպի հարցերին են պատկանում՝ ինչպե՞ս կստուգեք այս տեսակետը, ինչպե՞ս կկազմեիք աղյուսակ, ըստ այս տվյալների, էլի ինչպե՞ս կարելի է հարցը վճռել, ի՞նչ տեղի կունենա, եթե...

Համադրությանը կողմնորոշված հարցերի ձևակերպման համար կարելի է օգտագործել հետևյալ բայերը՝ ընդհանրացրեք, կազմեք, հորինեք, ամփոփեք, պլանավորեք, ամբողջացրեք, պարզեցրեք, ստուգեք, խմբավորեք և այլն:

Գնահատմանը կողմնորոշված հարցերն աշակերտներից պահանջում են եզրակացություն անել նրա մասին, թե ինչն են համարում ճիշտ և ոչ ճիշտ, դատեն, թե նյութը որքանով արժեքավոր է տվյալ նպատակի համար: Գնահատմանը կողմնորոշված հարցերի միջոցով պետք է պարզվի, թե հասկացե՞լ է արդյոք աշակերտը նոր արժեքը և կարո՞ղ է արդյոք այս նորն ինտեգրել իր արժեհամակարգի մեջ, կամ այլ կերպ՝ ձեռք բերած տեղեկությունն անցնո՞ւմ է արդյոք իսկական գիտելիքի, որը կփոխի աշակերտի տրամադրվածությունը և վերաբերմունքները:

Այս տիպի հարցեր կազմելիս կօգտագործենք հետևյալ բայերը՝ գնահատեք, կշռադատեք, դատեք, արեք եզրակացություն, քննադատեք, ժխտեք և այլն:

Փաստերին կողմնորոշված հարցերից ավելի բարձր աստիճանի անցնելով՝ աշակերտները տեսնում են, որ ուսուցիչը հետաքրքրված է իրենց մտածողության կարողության զարգացմամբ և գնահատում է այդ կարողությունը: Ուսուցիչները կռահում են, որ փաստացի տեղեկության իմացությունը բավական չէ, նրանք այդ գիտելիքը պետք է յուրացնեն, վերլուծեն և կիրառեն, որպեսզի այս գիտելիքը նպաստի նրանց անհատական զարգացմանը և նոր գիտելիքի ձեռքբերմանը:

ՓՈՐՁ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ

Մեթոդի նկարագրություն.

Փորձերը, փորձարկումները և այլ գործնական աշխատանքներ հատկապես կարևոր են բնության օբյեկտների հատկանիշներին և բնության երևույթների էությանը ծանոթանալու ժամանակ: Փորձերն ու փորձարկումը հնարավորություն են տալիս դասասենյակի պայմաններում արհեստականորեն ներկայացնել որոշ բնական երևույթներ, ստուգել աշակերտների կողմից արտահայտված ենթադրությունը, վարկածը: Աշակերտների կողմից իրականացվող փորձերն ու փորձարկումները նրանց հնարավորություն են տալիս ապագայում, գործնականում կիրառել ստացած գիտելիքը:

Փորձերն ու փորձարկումները նպաստում են, որ աշակերտներն իրենց անմիջական մասնակցությամբ և սեփական փորձառության հիման վրա կենդանի և անկենդան բնության օբյեկտների և երևույթների մասին ձևավորեն ճիշտ պատկերացումներ:

Փորձերի և փորձարկումների մեթոդների կիրառումը հատկապես կարևոր է այնպիսի հարցերի ուսուսման համար, ինչպիսիք են, օրինակ, տարբեր նյութերի կամ մարմինների, օգտակար հանածոների հատկությունները, ֆիլտրման միջոցով ջրի մաքրման երևույթը, բնահողի բաղադրությունը և հատկությունները և այլն:

Տվյալ մեթոդի կիրառման նպատակն է զարգացնել աշակերտի այնպիսի հմտություններ ու կարողություններ, ինչպիսիք են.

Օրինակ, բնության օբյեկտների և երևույթների մասին ձևավորել իրական հասկացություններ, ձևավորել և զարգացնել տեղեկատվություն հավաքելու, ընդհանրացնելու, համեմատելու, վերլուծելու և եզրակացություններ անելու կարողություն, ուշադրության կենտրոնացում, հետաքրքրություն, պատասխանատվություն, հայցորդություն, անկախություն, բացահայտում:

Մեթոդը հնարավորություն է տալիս հաղթահարել այն դժվարությունները, որոնք կապված են

տեսական գիտելիքի յուրացման հետ, որպեսզի ճշգրտվի և ընդլայնվի աշակերտի արդեն ունեցած գիտելիքը:

Մեթոդի կիրառումը.

Փորձը կատարվում է ցուցադրաբար կամ ֆրոնտալ: Ցուցադրական փորձը/փորձարկումը ուսուցիչը հենց ինքն է կատարում, եթե դրանց կատարման համար անհրաժեշտ է կրակ կամ այնպիսի նյութեր, որոնք երեխաների համար բարդ և դժվար են և վտանգավոր օգտագործման համար (օրինակ՝ կրակ): Այս ժամանակ պահանջվող սարքավորումները դրվում են սեղանին, հատուկ սարքի վրա այնպես, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա տեսնել փորձի / ի ընթացքը: Ցուցադրական փորձի/փորձարկման ժամանակ ուսուցիչը աշակերտներին ցույց է տալիս լաբորատոր սարքը (սարքավորում, ապարատ, նյութ և այլն), կատարում է փորձ կամ և օգնում է նրանց բացատրել երևույթը:

Ֆրոնտալ փորձի/փորձարկման կատարման ժամանակ աշակերտների փոքրաքանակ խմբերին տրվում են անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր: Ուսուցիչը նրանց ծանոթացնում է աշխատանքային հրահանգը (օրինակ՝ ասում գրքի էջը, որտեղ նկարագրված է փորձը/ը, նախօրոք գրատախտակին գրում է կամ փակցնում արդեն մշակված ցուցումները) և պարզում է, թե որքանով հասկանալի է այն աշակերտների համար: Ցուցումներին ծանոթանալուց հետո աշակերտները ուսուցչի վերահսկման ներքո կատարում են փորձը կամ ը: Դրանց ընթացքում նրանք գրառում են արդյունքները, իսկ ավարտելիս վերլուծում են ստացված արդյունքները և անում համապատասխան եզրակացություններ:

Ակտիվությունների ծրագիր.

1. Խնդիրի / հետազոտության օբյեկտի որոշում
2. Ենթադրության (վարկածի) արտահայտում
3. Փորձի/ի անցկացման համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների պատրաստում
4. Աշխատանքի հրահանգների տրամադրում
5. Աշխատանքի ընթացակարգը և դրա ընթացքին հետևելը
6. Տվյալների հաշվառում/գրառում
7. Տվյալների վերլուծում և մեկնաբանում
8. Ենթադրությունների ստուգում և եզրակացություններ անել
9. Գործնական օգտագործման հնարավորությունների սահմանում

Մեթոդի կիրառման ժամանակ պետք է հաշվի առնել.

Աշխատանքի ճիշտ կազմակերպում. փորձի և ի նախապատրաստման ընթացքում ուսուցիչը ստուգում է սարքավորումը, ընտրելով անհրաժեշտ նյութը և մինչև դասը սկսելը ինքն անձամբ պետք է անցկացրած լինի նման փորձ կամ : Նաև անհրաժեշտ է ուսուսական միջավայրը համապատասխան կերպով կազմակերպել (օրինակ, նստարանների տեղադրությունը), անվտանգության կանոնները մասնակրկիտ ծանոթացնել և պահպանել:

ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԵՎ ԳԻՏԱՐՇԱՎ

Մեթոդի նկարագրություն.

Տարրական դասարաններում բնագիտության ուսուսումնասիրման ժամանակ մեծ նշանակություն ունեն էքսկուրսիաները և թեմատիկ գիտարշափեսերը, որոնք օգնում են աշակերտներին ավելի խորը և հիմնավոր ուսուսումնասիրել բնության օբյեկտների և երևույթների բազմազանությունը, կողմնորոշվել նրանում, հայտնաբերել օրգանիզմների և շրջակա միջավայրի պայմանների միջև գոյություն ունեցող կապերը: Անչափ կարևոր է նաև այն փաստը, որ հենց էքսկուրսիաների և արշափեսերի ժամանակ է զարգանում աշակերտների մոտ զգացմունքային դրական վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ և հնարավորություն է տրվում դասի ժամանակ սովորածն ուղղակիորեն կապել իրականության հետ:

Էքսկուրսիայի կամ գիտարշավի բովանդակությունը պետք է անմիջականորեն կապվի նախորդ դասերին անցածի կամ հաջորդ դասերին անցնելու նյութի հետ: Միևնույն ժամանակ, էքսկուրսիայի կամ գիտարշավի ընթացքում հավաքված նյութը, ստացած պատկերացումները և դիտարկման արդյունքներն անպայման պետք է օգտագործվեն ուսուսումնական գործընթացում:

Բնության ուսուսումնասիրման հետազոտական և հոգատար մոտեցումը հնարավորություն է տալիս էքսկուրսիաների և գիտարշափեսերի ժամանակ երեխաներին տեղում սովորեցնել կողմնորոշվել տարածության և ժամանակի մեջ, դիտարկել բնության օբյեկտներն ու երևույթները, համեմատել և որոշել դրանց միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերը, և, ամենակարևորը, բորբոքել շրջակա միջավայրի մասին հոգածության և պատասխանատվության զգացումը:

Էքսկուրսիան և գիտարշավը հիմնվում են աշակերտների կողմից սովորած կամ ուսուսումնասիրված օբյեկտների և երևույթների ըմբռնման վրա բնական և արհեստականորեն (կենդանաբանական այգին, բուսաբանական այգի, թանգարան և այլն) ստեղծված միջավայրում: Էքսկուրսիան և գիտարշավը նպաստում են, որ աշակերտների մոտ ձևավորվի իրական պատկերացում շրջապատող աշխարհի՝ որպես մեկ ամբողջության մասին, որում բոլոր բաղադրիչները փոխկապակցված են:

Այս մեթոդի կիրառման նպատակն է զարգացնել աշակերտի այնպիսի հմտություններ ու կարողություններ, ինչպիսիք են. բնության օբյեկտների և երևույթների դիտարկում, համեմատություն, հետազոտություն և նրանց միջև կապերի սահմանում, շրջապատող իրականության անկախ ուսուսումնասիրում, շրջակա միջավայրի մասին հոգածության ու պատասխանատվության, էկոլոգիական գիտակցության ձևավորում և զարգացում:

Էքսկուրսիաները կամ գիտարշափեսերն ունեն մեծ ճանաչողական և դաստիարակչական գործառույթ. դրանք խորացնում և ընդլայնում են աշակերտների գիտելիքները և նպաստում տեսական գիտելիքները գործնականի հետ միացմանը, աշակերտների մոտ ձևավորվում էկոլոգիական և գեղագիտական գիտակցություն, դրական զգացմունքներ:

Մեթոդի կիրառումը.

Էքսկուրսիաներն ու գիտարշափեսերն անցկացվում են բնության գրկում, թանգարանում, ցուցահանդեսում, բուսաբանական այգում, կենդանաբանական այգում, պաշտպանված տարածքներում, ձեռնարկություններում և այլն:

Էքսկուրսիան և գիտարշավը կարող են լինել ուսուսումնական (ծրագրային) և ոչ ուսուսումնական (առանց ծրագրի), թեմատիկ և համալիր: Ուսուսումնական էքսկուրսիան և գիտարշավը կարելի է անցկացնել ինչպես մինչև հարցի ուսուսումնասիրումը (օրինակ, էքսկուրսիա դպրոցի տեղադրությունն ուսուսումնասիրելու համար), այնպես էլ այն ուսուսումնասիրելուց հետո (օրինակ՝ եղանակ, կենդանիներ և բույսեր):

Էքսկուրսիան և գիտարշավը սովորաբար բաղկացած են երեք փուլից. նախապատրաստական (կազմակերպական), հիմնական (էքսկուրսիայի կամ գիտարշավի նպատակը, խնդիրը, հետազոտության սահմանում) և ամփոփիչ (աշխատանքների ներկայացում):

Անչափ կարևոր է այն գործոնը, որ նախապատրաստական աշխատանքների կատարումից հետո աշակերտներին գործողության ազատություն և անկախություն տրվի, որպեսզի նրանք իրենց այնպես

զգան, ինչպես դաշտային հետազոտողները: Հենց էքսկուրսիան և գիտարշավն են աշակերտներին հնարավորություն տալիս անձնական փորձով տիրապետել բնության մեջ, դաշտում կամ աշխատանքի տեղում նյութի հավաքման, հավաքած նյութի պահածոյացման որոշ եղանակների, ինչպես նաև անձամբ ծանոթանալ բնության օբյեկտներին և երևույթներին:

Էքսկուրսիայից կամ գիտարշավից հետո աշակերտները պետք է պատրաստեն իրենց կողմից անցկացված դիտարկումներ, հետազոտությունների գրավոր կամ այլ տեսքով ներկայացված հաշվետվություն: Ինչպես նաև անհրաժեշտ է հավաքված նյութը պատրաստել, պահպանել և վերլուծել, դրանք համեմատել դասագրքի համապատասխան դասի հետ, քննարկել բնապահպանական և էկոլոգիական խնդիրներ, հնարավոր գործնական միջոցառման վերաբերյալ քննարկում կազմակերպել, այլ գործնական գործունեության անցկացում քննարկել և պլանավորել (օրինակ՝ բուսաբանական գիտարշավից կամ բուսաբանական այգում էքսկուրսիայից հետո դեղաբույսերի հավաքում, դեկորատիվ կամ այլ բույսերի աճեցում դպրոցի բակում և փոքրիկ բուսաբանական այգու ստեղծում, կենդանի անկյունի ստեղծում՝ օգտագործելով հավաքված նյութը և անցկացված վերլուծության արդյունքները, պատրաստել ուսումնական օժանդակ միջոցներ, ստեղծել հերբարիում, ակվարիում և այլն):

Ակտիվությունների ծրագիր.

1. Էքսկուրսիայի կամ գիտարշավի պլանավորում. Ուսուցիչը նախապես ծանոթանում է էքսկուրսիայի կամ գիտարշավի անցկացման վայրին, գտնում և ընտրում է ամենահետաքրքիր տիպիկ օբյեկտները, ուսումնասիրում է երթուղին, կանգառների համար հարմար վայրերը, մտածում է աշակերտների կողմից ինքնուրույն դիտարկումների կամ աշխատանքների անցկացման բնույթը, ինչ կարող են հավաքել նրանք այդ ժամանակ, կազմում է էքսկուրսիայի կամ գիտարշավի անցկացման պլանը, սահմանում է ամփոփիչ գրույցի հիմնական հարցերը:
2. Աշակերտների նախապատրաստում. աշակերտներին էքսկուրսիայի կամ գիտարշավի խնդիրները և բովանդակությունը ծանոթացնել, հանձնարարություններ և համապատասխան սարքավորումները (օրինակ — կողմնացույց, բրիչ, թղթապանակներ հերբարիումի համար, պիտակներ, տարաներ, բնելու ցանցեր, խոշորացույց և այլն) բաժանել աշակերտների խմբերի միջև, բնության մեջ վարքի և անվտանգության կանոնները ծանոթացնել:
3. Էքսկուրսիայի կամ գիտարշավի ամփոփում. էքսկուրսիայի կամ գիտարշավի ժամանակ հավաքած նյութերի մշակում և օգտագործում:

Մեթոդի կիրառման ժամանակ պետք է նկատի ունենալ.

Նախնական պլանավորում և պատշաճ կազմակերպում, բնության գրկում վարքի և անվտանգության կանոնների պահպանում՝ էլնելով բնակավայրից և դպրոցի գտնվելու վայրից:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Մեթոդի նկարագրություն.

Դիտարկումը բնագիտության ուսումնասիրման հիմնական մեթոդներից մեկն է և հատկապես մեծ նշանակություն և ծանրաբեռնում ունի տարրական դասարաններում, քանի որ հենց այս տարիքի երեխաների մոտ է բնության անմիջական դիտարկմամբ և ուսումնասիրությամբ ձևավորվում կոնկրետ պատկերացում շրջապատող աշխարհի մասին: Դիտարկման մեջ ենթադրվում է ճիշտ պատկերացումների, հասկացությունների, հմտությունների ու կարողությունների ձևավորման նպատակով աշակերտների կողմից կենդանի և անկենդան բնության օբյեկտների և երևույթների անմիջական ընկալումը:

Դիտարկման կազմակերպման հիմնական պահանջն է լավ մտածված և գիտակցված ծրագիրը,

որում արտացոլվում է ոչ միայն բովանդակությունը, դիտարկումների հաջորդականությունը, դրանց անցկացման ուղիները, այլ նաև ցույց են տրվում արդյունքների գործնական կիրառման ուղիները:

Տվյալ մեթոդի կիրառման նպատակն է զարգացնել աշակերտի այնպիսի հմտություններ ու կարողություններ, ինչպիսիք են.

Ջննդականություն, հիշողություն, ուշադրություն, պատասխանատվություն, հետաքրքրություն և հետաքրքրափութություն, հայցորդություն, նախաձեռնություն և ինքնուրույնություն: Շրջապատող իրականության մասին իրական և կոնկրետ պատկերացումների և հասկացությունների ձևավորում:

Բնության երևույթների մշտական փոփոխման-զարգացման, դրանց փոխադարձ կապերի և բնության մեջ ընթացող բոլոր գործընթացների օրինաչափությունների որոշում, տրամաբանական մտածողություն, համապատասխան ադեկվատ տերմինաբանությամբ բանավոր և գրավոր խոսք, էկոլոգիական գիտակցություն:

Մեթոդի օգտագործումը.

Տարրական դասարաններում կարելի է անցկացնել տարբեր դիտարկումներ: Օրինակ՝ եղանակի, բույսերի սեզոնային փոփոխականության, կենդանիների կենսակերպի, հորիզոնում արևի բարձրության փոփոխության և դրա հիման վրա օրվա տևողության, գիշերը աստղալից երկնքի, տարբեր մարմինների շարժման և այլն:

Մեթոդի կիրառման ժամանակ առաջադրանքներն աստիճանաբար պետք է բարդացվեն: Դիտարկման կարողության ձևավորման մի քանի փուլ է առանձնացվում.

1. Դիտարկում՝ անմիջապես ուսուցչի ղեկավարությամբ: Հիմնականում օգտագործվում է I դասարանում, երբ աշակերտները դեռևս չունեն շրջակա միջավայրի դիտարկման հմտություններ և դրանում տեղի ունեցած այս կամ այն փոփոխություն արձանագրելու կարողություն:
2. Կարճաժամկետ համակարգային դիտարկումներ: Աշակերտներն այն անցկացնում են ուսուցչի հանձնարարությամբ: Օրինակ, դիտարկում են պտղի հասունացումը, տերևների գունավորման փոփոխումը և այլն:
3. Երկարատև ինքնուրույն դիտարկումներ: Օրինակ, սերմի բողբոջում, թռչունների դիտարկում և այլն:
4. Հետազոտական աշխատանքի հետ կապված դիտարկումներ:

Ակտիվությունների ծրագիր.

1. Դիտարկման օբյեկտի ընտրություն ուսուցչի կամ աշակերտի կողմից:
2. Աշակերտների նախապատրաստում դիտարկման համար. անվտանգության կանոնների և աշխատանքային գործընթացի կանոնների ծանոթացում:
3. Դիտարկման նպատակի հստակ սահմանում:
4. Առաջադրանքների կազմում և աշակերտների միջև դրա բաշխում:
5. Դիտարկման համար անհրաժեշտ սարքերի պատրաստում, ռեսուրսների և սարքավորումների պատրաստում:
6. Դիտարկման արդյունքների գրանցում:
7. Դիտարկման արդյունքների մշակում և դրանցից նախնական եզրակացությունների կատարում:
8. Պարզ պատճառների, արդյունքների, կապերի որոշում:
9. Ուսուժական և գործնական գործունեության մեջ դիտարկման արդյունքների կիրառում:

Մեթոդի կիրառման ժամանակ պետք է նկատի ունենալ.

Աշխատանքի ճիշտ կազմակերպում և անվտանգության կանոնների պահպանում: Երևույթների ոչ ճիշտ մեկնաբանում և սուբյեկտիվության հավանականություն:

ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱԳՐՔՈՎ

Ռազմավարության նկարագրություն.

Դասագիրքն աշակերտներին տալիս է գիտելիքի սահմանված նվազագույնը, ծառայում է դասին ստացած տեղեկությունների ամրապնդմանը և սովորեցնում է ստացած գիտելիքի գործնական կիրառում:

Աշակերտները բնագիտության դասագրքերի միջոցով (տեքստ, տարբեր տեսակի առաջադրանքներ, նկարագրադուժներ) սովորում են դիտարկվող երևույթներից առանձնացնել հիմնականը, ընդհանրացնել դրանք, դրա հիման վրա մշակել պատկերացումներ և յուրացնել տարրական հասկացություններ, բնագիտական տերմինաբանությունը: Դասագիրքն աշակերտներին օգնում է յուրացնել սահմանված պատկերացումները կենդանի և անկենդան բնության մասին, դրանց փոխազդեցության և այն ազդեցության մասին, որ բնությունն ունենում է մարդու կյանքի և գործունեության վրա:

Տվյալ ռազմավարության կիրառման նպատակն է զարգացնել աշակերտի այնպիսի հմտություններ ու կարողություններ, ինչպիսիք են.

Ինքնուրույն աշխատելը, հետաքրքրությունն ու մոտիվացիան, հիշողությունը, ուշադրությունը, պատասխանատվությունը, համապատասխան պատշաճ տերմիններով բանավոր և գրավոր խոսքը:

Ռազմավարության օգտագործման ժամանակ պետք է նկատի ունենալ.

Դասը պատրաստելու ընթացքում ընթերցելու կամ մշակելու նյութը ընտրել և սահմանել ըստ նրա, թե ինչ նպատակով կօգտագործվի այս տեքստը, որքան ժամանակ կտրամադրվի և ինչ հիմնական բացատրություններ են պահանջվում:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. «ՏԵՔՍՏԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ՝ ՀԱՐՑԵՐ ՏԱԼՈՎ»

Նկարագրություն.

1. Դասարանը բաժանվում է փոքրաթիվ խմբերի, և ուսուցչի ցուցումով նրանք բացում են դասագրքի համապատասխան էջը:
2. Խմբում աշակերտներն ինքնուրույն կարդում են տեքստի որոշակի մաս (օրինակ՝ մինչև առաջին նկարագրադուժը, առաջին պարբերությունը և այլն), իրար հետ կիսվում են իրենց կարծիքներով և ձևակերպում մեկ հարց, որն իրենց շատ է հետաքրքրում այս կարդացած մասից:
3. Այնուհետև կարդում են տեքստի երկրորդ մասը և կրկին ձևակերպում հարց, այսպես շարունակվում է մինչև տեքստն ամբողջությամբ կարդան: Խմբերը յուրաքանչյուր հարց պետք է գրեն տարբեր թերթերի վրա:
4. Տեքստի ընթերցումից հետո ուսուցիչը վերցնում է մի խմբի կողմից գրված հարցերը և փոխանցում այլ խմբի: Տարբեր խմբերի հարցերը այնպես պետք է վերաբաշխվեն, որ յուրաքանչյուր խմբում ուրիշների կողմից կազմված երեք հարց հայտնվի:
5. Խմբերը պետք է պատասխանեն այս հարցերին: Նրանք կարող են օգտագործել նաև դասագրքի տեքստը:
6. Շնորհանդեսի ժամանակ յուրաքանչյուր խմբի ներկայացուցիչ դեռ հարցն է կարդում, այնուհետև իրենց կողմից մտածված պատասխանը:
7. Պատասխանների ճշտությունը ստուգվում է հենց դասարանում՝ ուրիշ աշակերտների օգնությամբ:
8. Մեկ կամ մի քանի հետաքրքիր հարցի շուրջ կարելի է կարճ քննարկում կազմակերպել:

ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. «ՏԵՔՍՏԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ՝ ԶՈՒՅԳԵՐՈՎ ԲԱԺԱՆՎԵԼՈՒ ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ»

Նկարագրություն.

1. Աշակերտները նստում են զույգերով: Ցուրաքանչյուր աշակերտ զույգում կունենա իր համարը՝ 1 կամ 2:
2. Դասի տեքստը նույնպես բաժանվում է երկու մասի: Տեքստը մշակելու ժամանակ զույգերը տարբեր դեր են կատարում: Բացի այդ, յուրաքանչյուրը երկու դերերը հերթով պետք է կատարեն: Դերերը փոխվում են ընթերցման գործընթացում:
3. Զույգում համար առաջին աշակերտը կատարում է զեկուցողի դեր: Նրա պարտականությունն է ուշադիր կարդալ տեքստի առաջին մասը և իր զույգին բացատրել ստացած տեղեկատվությունը:
4. Զույգի մեջ համար երկու աշակերտը կատարում է հարցեր տվողի դեր: Նա նույնպես կարդում է տեքստը, այնուհետև ուշադիր լսում է զեկուցողին (կամ իր զույգին): Երբ զեկուցողը կավարտի պատմելը, բացատրելը, հարց տվողը զեկուցողին տվյալ տեղեկության վերաբերյալ մի քանի հարց կտա:
5. Տեքստի երկրորդ մասի վրա աշխատելիս՝ դերերը փոխվում են: Առաջին համարը կդառնա հարցեր տվող, իսկ երկրորդ համարը՝ զեկուցող: Ուրե՛մս՝ տեքստի առաջին մասն ընթերցելիս ով զեկուցող էր, այժմ հարցեր տվող է, և՝ ընդհակառակը:

Երաշխավորություն.

1. Ցանկալի է, որ աշակերտները ցածրաձայն խոսեն, որպեսզի միմյանց չխանգարեն: Որոշ խմբեր կարող են սենյակի տարբեր անկյուններում գտնվել, անպայման չէ, որ ընթերցման ժամանակ բոլորը նստած լինեն:
2. Այս մեթոդի կիրառման ժամանակ հնարավոր է դերերը բաշխվեն ուսուցչի և աշակերտների միջև: Այսինքն՝ ուսուցիչը երբե՛մս զեկուցող կլինի, իսկ աշակերտները՝ հարցեր տվող և ընդհակառակը:

ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. «ԽԱՌԸ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍԵԼԻՔ ԹՈՂԵՔ ԻՆՁ»

Նկարագրություն.

1. Անհրաժեշտ նյութի պատրաստում. փոքրիկ, հավասար չափի թերթեր, որոնց վրա առանձին-առանձին գրվում է դասի տեքստի երեք-հինգ նախադասություն (մի նախադասություն մեկ թերթի վրա): Նախադասության հավաքածուները պատրաստվում են՝ ըստ խմբերի քանակի:
2. Դասարանը բաժանվում է փոքրաթիվ խմբերի և յուրաքանչյուր խմբի բաժանվում են նախադասություններով թերթեր խառը հաջորդականությամբ:
3. Աշակերտները կարդում են նախադասությունները և դասավորում ճիշտ հաջորդականությամբ:
4. Երբ խմբերն ավարտում են աշխատանքը, բոլորը կարդում են իրենց տարբերակը: Ուսուցիչը ոչ-մի մեկնաբանություն չի անում: Թե որ հաջորդականությունն է ճիշտ, դա աշակերտներն իրենք կդասավորեն, երբ կծանոթանան դասագրքի տեքստին:
5. Աշակերտներն անհատապես ծանոթանում են դասագրքի տեքստին և համեմատում են այնտեղ տրված նախադասությունների հաջորդականությունը իրենց կողմից կազմածի հետ: Եթե սխալ են արել, սխալը հենց իրենք են ուղղում:
6. Դասագրքի տեքստի հետ տարրական ծանոթացումից և նախադասությունները ճիշտ դասավորելուց հետո, աշակերտներն անհատապես մեկ անգամ ևս աչք են անցկացնում տեքստը: Նրանք տեքստի մեջ պետք է գտնեն նախադասություն կամ մեջբերում, որն իրենց համար ամենահետաքրքիրն է, և դուրս գրեն թերթի վրա:
7. Աշակերտների կողմից ընտրված մեջբերումները կամ նախադասություններն իրենք են կարդում և նաև բացատրում են, թե ինչու էր այդ տեղեկատվությունն իրենց համար հետաքրքիր:

ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. «ՍՏՈՒԳԻՐ ԸՆԹԵՐՑԱԾԸ»

Նկարագրություն.

1. Անհրաժեշտ ռեսուրսների պատրաստում. թերթեր, որոնց վրա գրված են հարցեր տեքստում տրված տեղեկատվության մասին, կամ նախադասություններ, որոնց մի մասը ճիշտ է, իսկ որոշ մասը՝ սխալ:
2. Դասարանը բաժանվում է փոքրաթիվ խմբերի, դասագրքում տրված տեքստն աշակերտներին է տրվում ընթերցելու:
3. Տեքստի ընթերցումից հետո աշակերտներին բաժանվում են թերթեր այն հարցերով, որոնց նրանք պետք է պատասխանեն առանց դասագրքի օգնության կամ շրջագծեն ճիշտ պատասխանները, իսկ սխալներն՝ ուղղեն:
4. Աշակերտները կարդում են պատասխանները: Ուսուցիչը չի անում ոչ-մի մեկնաբանություն:
5. Պատասխանները լսելուց հետո, աշակերտները դասագրքում իրենք են ստուգում իրենց պատասխանները:

ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. «ԼԱԲԻՐԻՆԹՈՍ»

Նկարագրություն.

1. Անհրաժեշտ նյութի պատրաստում, թերթեր լաբիրինթոսի սխեմայով:
2. Աշակերտները կարդում են լաբիրինթոսի յուրաքանչյուր վանդակում գրված տեքստը, տերմինի բացատրությունը և սլաքների միջոցով անցնում են հաջորդ վանդակին. եթե բացատրությունը ճիշտ է, նրանք շարժվում են «այո» սլաքի երկայնքով, եթե սխալ է՝ «ոչ» սլաքի երկայնքով:
3. Աշակերտները թերթի վրա գրում են այն վանդակների համարները, որոնք իրենք անցնում են:
4. Առաջադրանքը կատարված կլինի, եթե աշակերտը հասնի վերջին վանդակին:
5. Աշակերտները համեմատում են իրենց փոխադրման երթուղիները և ուղղում են թույլ տված սխալները:

Երաշխավորություն.

Նման լաբիրինթոսներ տարբեր տերմինների բացատրություններով աշակերտները կարող են իրենք կազմել դասագրքի օգնությամբ և միմյանց հետ փոխանակվել:

ԱՇԽԱՏԱՆՔ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԻ, ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎՐԱ

Մեթոդի նկարագրություն.

Բնագիտության դասերին շատ մեծ նշանակություն ունեն նկարագրողուժները. նկարները, լուսանկերները, գծագրերը, աղյուսակները, գրաֆիկները, քարտեզները և նաև բաժանելու համար նախատեսված ուսուցման տարբեր տեսակի նյութերը, կինոֆիլմերը, տեսահոլովակները, բնական օբյեկտների հավաքածուները և այլն: Դրանք աշակերտների համար գիտելիքի ձեռքբերման նշանակալի աղբյուր են հանդիսանում, բարձրացնում են ուսուցման արդյունավետությունը, նպաստում են ինքնուրույն աշխատանքին, զարգացնում են աշակերտների ճանաչողական և ստեղծագործական կարողությունները: Տարբեր արտահայտչամիջոցները մեծ դեր են կատարում աշակերտների անմիջական ընկալման համար անհասանելի օբյեկտների և երևույթների մասին պատկերացումների ձևավորման գործընթացում:

Տվյալ մեթոդի կիրառման նպատակն է զարգացնել աշակերտի այնպիսի հմտություններ ու կարողություններ, ինչպիսիք են.

ինքնուրույնությունը, ստեղծագործականությունը, դիտարկումը, համեմատությունը, դասակարգումը, մեկնաբանումը, պատճառահետևանքային կապերի հաստատումը և վերլուծությունը:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. «ՊԱՏՐԱՍՏԻՐ ՀԱՐՑ»

Նկարագրություն.

1. Անհրաժեշտ նյութերի պատրաստում. թեմայի հետ կապված մի քանի լուսանկար (նկար, գծագիր և այլն):
2. Աշակերտները բաժանվում են փոքրաթիվ խմբերի և յուրաքանչյուր խմբի տրվում է լուսանկարների հավաքածու:
3. Խմբում աշակերտներն անհատապես, յուրաքանչյուր լուսանկարի հետ կապված նկարագիր են գրում:
4. Այնուհետև միմյանց հետ կիսվում են կարծիքներով այս լուսանկարների մասին, ձևակերպում 40 են ընդհանուր տեսակետ, ըստ իրենց հայեցողության՝ դասավորում լուսանկարները հերթով և ընդհանուր ուժերով ստեղծում «պարագրաֆ»:
5. Շնորհանդեսի ժամանակ յուրաքանչյուր խումբ գրատախտակի վրա լուսանկարներն այն հաջորդականությամբ է փակցնում, ինչպիսի հաջորդականությամբ դրանք օգտագործեցին աշխատելու գործընթացում, և պատմում է իր ստեղծած պարագրաֆը:
6. Շնորհանդեսն ավարտվելուց հետո շնորհանդեսավար խմբերը մյուս խմբերի ներկայացուցիչներին հարցեր են տալիս:
7. Բոլոր խմբերի շնորհանդեսի վերջում ուսուցիչն ամփոփում է ակտիվությունը. նկարները դասավորելիս ո՞ր հաջորդականությունն էր ճիշտ, ո՞ր «պարագրաֆն էր ամենից ճշգրիտը, սպառիչը և հասկանալին»:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. «ՀԱՐՑԵՐԸ ՏԵՂԱՂԻՐ՝ Դ ՆԿԱՐՆԵՐԻ ՄՈՏ» («ՍՈՎՈՐԵՆՔ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ»)

Նկարագրություն.

1. Անհրաժեշտ նյութերի պատրաստում. թեմայի հետ կապված նկարագրողուժների պատրաստում:
2. Աշակերտները բաժանվում են փոքրաթիվ խմբերի և յուրաքանչյուր խմբի տրվում են տարբեր տեսակի նկարագրողուժներ:
3. Խմբում աշակերտներն անհատապես յուրաքանչյուր լուսանկարի հետ կապված հարցեր են գրում:
4. Այնուհետև իրար հետ կարծիքներ են փոխանակում և ձևակերպում ընդհանուր հարցեր:
5. Խմբերը միմյանց հետ փոխանակում են լուսանկարներն ու հարցերը և պատասխանում են դրանց: Եթե հարցերը ոչ ճիշտ են տրված կամ նկարագրողուժները չեն համապատասխանում, դրանց չեն պատասխանում, սակայն պետք է հիմնավորեն, թե ինչու չպատասխանեցին:
6. Այնուհետև կրկին իրար հետ փոխանակում են լուսանկարները և հարցերը, այնքան ժամանակ, մինչև պատասխանեն բոլոր խմբերի հարցերին:
7. Աշխատանքն ավարտվելուց հետո, տրված հարցերը և դրանց պատասխանները միաժամանակ ուղղվում են:

ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. «ԳՏԻՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Նկարագրություն.

1. Անհրաժեշտ նյութերի պատրաստում. թեմայի հետ կապված նկարագրողուժների (լուսանկարներ, նկարներ, սխեմաներ և այլն) պատրաստում:
2. Աշակերտները բաժանվում են փոքրաթիվ խմբերի և յուրաքանչյուր խմբի տրվում են տարբեր տեսակի նկարագրողուժների փաթեթներ:
3. Նրանք պետք է գտնեն համապատասխանությունն այս նկարների միջև, օրինակ, կենդանիների և նրանց բնակման միջավայրի միջև, ռեսուրսների և դրանցով պատրաստած մարմինների միջև, տարերային երևույթի և այն հարուցող պատճառների միջև և այլն:
4. Շնորհանդեսի ժամանակ ստուգվում է, թե որքանով ճիշտ է որոշվել համապատասխանությունը, և ուղղվում են սխալները:

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Քննարկումը կրթական գործունեության կարևորագույն ձևերից մեկն է, որը խթանում է աշակերտների նախաձեռնությունը, զարգացնում նրանց քննադատական մտածողությունը: Քննարկման ժամանակ տեղի է ունենում.

- մասնակիցների միջև տեղեկությունների փոխանակում,
 - միևնույն հարցի նկատմամբ տարբեր տեսակի մոտեցումների որոնում,
 - տարբեր տեսակետների (հաճախ միմյանց բացառող) համագոյակցություն,
 - ընդհանուր կարծիքի կամ որոշման կայացման համար խմբային համաձայնության որոնում:
- Քննարկման մեթոդով ուսուցումը, ի տարբերություն ավանդական մեթոդով ուսուցման,

հնարավորություն է տալիս տեսնել, որ յուրաքանչյուր պնդում պարունակում է բազմաթիվ վիճելի կողմեր, և հնարավոր է եզրակացություն անել բազմաթիվ ուղիներով:

Որպեսզի դասարանում բաց քննարկում ընթանա, անհրաժեշտ է, որ դասարանում փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտ ստեղծվի: Իսկ «անվտանգ» մթնոլորտի ստեղծումը ենթադրում է ուսուցչի կողմից նախօրոք այնպիսի աշխատանքի անցկացում, որի նպատակը քննարկումային վարքի կանոնների և հարաբերությունների նորմերի ձևավորումն է: Այն առանձնապես արդյունավետ է տարրական դասարաններում, երբ ձևավորվում են վարքի չափորոշիչները:

Քննարկման կանոնները սովորելը և այս մեթոդի հաճախակի կիրառումը նպաստում է մի շարք հմտությունների և կարողությունների ձևավորմանը, ինչպիսիք են.

- ուրիշին ակտիվ ունկնդրումը,
- սեփական կարծիքի ձևավորումը և դրա փաստարկումը,
- դատողությունը, քննադատական մտածողությունը և ուրիշի մտքի գնահատումը:

Եվ վերջնականապես ձևավորվում է ուրիշի, թեկուզ տարբերվող կարծիքի նկատմամբ հարգանք և ներողամիտ վերաբերմութ, ինչը պարտադիր է ժողովրդավարական հասարակության քաղաքացու համար:

Որպեսզի քննարկում անցկացնենք, անհրաժեշտ է.

- հարց առաջադրել, հիմնախնդիր ներկայացնել կամ կոնկրետ դեպք նկարագրել,
- պահպանել քննարկման կանոնները,
- խրախուսել, աջակցել աշակերտին:

Քննարկումից հետո ուսուցիչը մեկ անգամ ևս կամփոփի և աշակերտների հետ կկրկնի ստացված եզրակացությունները: Լավագույն դեպքում եզրակացություններն իրենք՝ մասնակիցները պետք է արձանագրեն:

ԻՆՉ Է ԼԱՊԲՈՒՔԸ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՍՏԵՂԾԵԼ ԱՅՆ

Լապբուքը տեղեկության փոխանցման և կազմակերպման օրիգինալ և նորարար միջոց է, մինևսյն ժամանակ գեղեցիկ է և օգտակար: Նրա կիրառման գրավչությունը մեծանում է ինչպես ուսուցիչների և աշակերտների, այնպես էլ ծնողների շրջանում: Գրախանութներից արդեն կարելի է գնել տարբեր տեսակի տետրեր, սակայն աշակերտը կարող է դրանք ստեղծել նաև իր ձեռքով:

Լապբուքի գաղափարի հեղինակը համարվում է ամերիկուհի Թամմի Դյուբը: Նա մի ոչ այնքան մեծ թղթապանակին փակցրել է փոքրիկ գրպանիկներ, յուրաքանչյուր «գրպանիկին» անուն է տվել և դրանց մեջ դրել է նկարներ, բանաստեղծություններ, փոքրիկ կոմիքսներ և այլն: Նա պահպանել է այն ռեսուրսները կամ տեղեկատվության աղբյուրները, որոնք օգտագործում էր իր երեխաների հետ, այսինքն՝ օգտագործում էր «գրպաններով» թղթապանակ՝ տեսակավորված տեղեկությունները պահելու համար:

Այսօր լապբուքերը ուսուցման գործընթացում համարվում են նորարարական տեխնոլոգիա, որն ունի բազմաթիվ առավելություններ: Լապբուքը (ինչպես հաճախ անվանում են այն՝ ինտերակտիվ թեմատիկ թղթապանակը) թղթից պատրաստված ձեռագործ գիրք է՝ գրպաններով, պատուհաններով, դռներով և տարբեր շարժվող մանրամասներով: Այն օգտագործելիս երեխան կարող է հանել, տեղափոխել, վերադասավորել և տեսակավորել տարբեր բաժիններում դասավորված տեղեկությունները: Լապբուքը պարունակում է նյութեր մեկ կոնկրետ թեմայի վերաբերյալ: Բացի այդ, lapbook-ը աշակերտի ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական փուլն է, որը նա ավարտել է տվյալ հարցի/թեմայի ուսումնասիրության և հետազոտության շրջանակներում: Այս թղթապանակը լրացնելու համար աշակերտը պետք է կատարի տարբեր առաջադրանքներ, կատարի դիտարկում, փորձ, տարբեր աղբյուրներից մանրամասն ուսումնասիրի հարցը, գրանցի դիտարկման արդյունքները, դասակարգի տեղեկությունները և այլն:

Լապբուքի ստեղծումը կօգնի աշակերտին գտնել և համակարգել տեղեկություններ ուսումնասիրվող հարցի վերաբերյալ: Հետագայում այս թղթապանակները վերանայելիս նա հեշտությամբ կհիշի հարցը/ թեման և հեշտությամբ կգտնի իր համար այդ պահին անհրաժեշտ և կարևոր կոնկրետ նյութը:

Լապբուք (lapbook) բառը անգլերենից թարգմանվում է որպես «ծալովի գիրք», «ծնկների գիրք», և երկու տարբերակներն էլ ընդունելի են, քանի որ լապբուքը մեծ չափերի չէ: Այն ծալվում է A4 ֆորմատի չափսով և հարմար է աշակերտին գրկում դնելու համար: Բացի այդ, այս զարմանալի գրքերը լի են առեղծվածներով և հանելուկներով՝ բացվում են և ունեն գրպանիկներ, ներդիրներ, նոթատետր, որոնք իրենց հերթին պարունակում են թեմատիկ տեղեկություններ, ինչը շատ են հավանում և ինչը շատ է գրավում փոքրիկ քննիչներին և հետազոտողներին:

Լապբուքի նմուշներ



ԼԱՊՔՈՒՔՆ ՈՒՆԻ ԵՐԿՈՒ ՀՍՏԱԿ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ.

- **Ինտերակտիվություն:** Աշակերտը ոչ միայն դիտարկում է այն, այլ նաև շփվում է թղթապանակի հետ: Երեխայի արդյունավետ մասնակցությունը զգալիորեն մեծացնում է նրա հետաքրքրությունը այս օգտակար ուսուցանական ռեսուրսի նկատմամբ: Հատկապես կարևոր է նման վերաբերմունքը կինեթեթիկ ուսանման ոճով աշակերտների համար, քանի որ բոլորը գիտեն, թե ժամանակակից կրթական գործընթացում ինչպիսի մեծ դեր է խաղում տեսողական ռեսուրսների (նկարագրադուժներ, տեսանյութեր, սլայդներ և այլն) օգտագործումը:
- **Թեմատիկություն:** Փոքր թղթապանակում տարբեր թեմաների մասին տեղեկատվություն հավաքելն այնքան էլ հեշտ չէ: Տարրական մակարդակում՝ առաջին և երկրորդ դասարաններում, երեխաների համար դժվար կլինի յուրացնել և հասկանալ այն, ուստի լապրուքերը սովորաբար նվիրված են մեկ կոնկրետ թեմայի, օրինակ՝ տարրական մակարդակում դրանք կարող են լինել այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ «Աշուն», «Թռչուններ», «Ընտանիք», «Սունկ», «Տիեզերք», «Եղանակ» և այլն: Ավելի բարձր դասարաններում (3-6-րդ դասարաններ), երբ աշակերտներն ավելի խորն են ուսուցասիրում թեմաները, լապրուքում հնարավոր է ավելի կոնկրետ ենթատեքստեր լուսաբանել, օրինակ՝ «Աշնանային բարիք», «Զվոդ թռչունները», « Ընտանեկան տոնակատարություններ», «Արեգակնային համակարգի մոլորակները», «Եղանակի փոփոխություն» և այլ:

Լապրուքի օգտագործման նպատակները նույնպես տարբեր են: Մա ինչպես նախագծի իրականացման գործընթացում սովորած նյութի ամրապնդումն է, այնպես էլ տեղեկությունների հավաքագրման և համակարգման ուսուցասիրությունը, ստեղծարարության և կրեատիվության զարգացումը, ստեղծածի նկատմամբ հոգատար վերաբերմունքը, խմբային աշխատանքի ընթացքում հաղորդակցման հմտությունների զարգացումը և ուրիշների աշխատանքի նկատմամբ հարգանքը: Շատ կարևոր է նաև, որ լապրուքերի միջոցով խթանվում է աշակերտների մեջ ստեղծագործական գործունեությունը, բարձրացվում է մոտիվացիան և ձգտումը նոր բաներ հասկանալու և սովորելու:

Աշակերտները կարող են օգտագործել լապրուքերը որպես օժանդակ ռեսուրս համալիր առաջադրանքի վրա աշխատելիս (օրինակ, լապրուքի յուրաքանչյուր վանդակում պահեն որևէ գնահատման ստուգիչին համապատասխանող նյութ) կամ ստեղծել որպես համալիր առաջադրանքի վերջնական արդյունք:

Լապրուքերն ըստ նշանակության կարող են լինել ժամանցային (խաղալու), ուսուցանական, շնորհավորական, կենսագրական և այլն:

Ժամանցային (խաղային) լապրուքը նախատեսված է խմբակային կամ ինքնուրույն խաղի համար, ուստի հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացվի ժամանցի, տեղեկության հեշտ ընկալման վրա: Այդպիսի լապրուքում բացի շարժական խաղի տարրերից (պատուհաններ, շրջաններ, հանվող գրպաններ) կարելի է ավելացնել քարտեր այնպիսի տրամաբանական խաղերի համար, ինչպիսիք են՝ «Գուշակի՛ր՝ ով եմ ես», «Ի՞նչ եմ պահել մտքումս» և այլն:

Ուսուցանական լապրուքը արտասովոր միջոց է կազմակերպված ուսուցանական գործունեության և անհատական աշխատանքի համար: Այս տեսակի լապրուքում կարող են տեղավորվել ոչ միայն ուսուցանական խաղեր, տեղեկատվական քարտեր, ասացվածքներ, վիճակագրական նյութեր, թեմատիկ լուսանկարներ և քարտեզներ, այլև հետաքրքիր փաստեր, հարցեր և այլն:

Լապրուքերի նմուշներ



Այսպիսով, համարձակ կարելի է ասել, որ լապրուքը թեմատիկ ինտերակտիվ թղթապանակ է (գիրք է), որը պարունակում է համակարգված և բազմազան տեղեկություններ:

ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴԻՈՐԱՄԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Դիորաման պատմական իրադարձության (օրինակ՝ մարտական տեսարանների), ինտերիերի, բնապատկերի, քաղաքային տեսարանի եռաչափ փոքրիկ մոդել է, որը ստեղծված է զվարճանքի, ճանաչողական կամ ուսուցանական նպատակներով: Դրանք առավել հաճախ հանդիպում են թանգարաններում:

Ակտիվության նպատակն է.

- աշակերտները հիմնավոր հասկանան կարդացած տեքստի բովանդակությունը,
- սովորեն դիտարկել մանրամասները,
- դրսևորեն երևակայության և ստեղծագործական հմտություններ,
- վարժվեն ձեռագործ իրեր ստեղծելու մեջ:

Դիորամա ստեղծելու համար անհրաժեշտ են տարբեր նյութեր: Որպես այդպիսի նյութեր կարող են օգտագործվել, օրինակ՝ կոշիկի տուփեր կամ փոքր արկղ, սոսինձ, պլաստիլին, գունավոր թղթեր, ստվարաթղթի կտորներ, գործվածքներ, գունավոր մատիտներ/ֆլումաստերներ, տիկնիկներ, կոներ, մամուռ, չոր տերևներ, ճյուղեր, լուցկու հատիկներ, խաղալիք սպասք, ռետինե փոքր, թեմատիկ խաղալիքներ և այլն:



Ակտիվությունը պետք է պլանավորել մեկ կամ երկու օր առաջ: Տեքստը կարդալուց և մշակելուց հետո ուսուցիչը բացատրում է աշակերտներին, թե որն է նրանց խնդիրը, և խնդրում է ստեղծագործությունից ընտրել այնպիսի տեսարաններ, որոնց դիորամա կցանկանան ստեղծել: Դիորամա ստեղծելու համար ընդունելի է աշակերտների համար ընտրել, օրինակ, ինտերիեր (որևէ հերոսի սենյակ), բնապատկեր, քաղաքի/գյուղի տեսարան: Մի քանի տեսարաններ ընտրելուց հետո աշակերտները կընտրեն նյութեր այդ տեսարանը պատկերող դիորամա ստեղծելու համար: Նյութն անպայման պետք է լինի պարզ և հեշտ հասանելի: Օգտագործելով ընտրված նյութը՝ աշակերտները ստեղծում են դիորամա: Ուսուցիչը վերահսկում է այս գործընթացը և անհրաժեշտության դեպքում օգնում է նրանց կատարել որոշ ակտիվություններ:

Աշխատանքն ավարտելուց հետո դասարանում քննարկում են յուրաքանչյուր աշխատանք: Աշակերտներն իրենց կարծիքն են հայտնում դասընկերների ստեղծած դիորամաների մասին, գնահատում, թե ինչն է ավելորդը, ինչն է պակասում:

Աշակերտների աշխատանքները կցուցադրվեն դասարանում կամ դպրոցի թանգարանում:

Տերմայի դիորամա ստեղծելու փուլերը.





Դիորամայի նմուշներ



Դիորամաների նմուշների կարող եք ծանոթանալ կայքում.
<https://www.firstpalette.com/craft-theme/diorama.html>



ՔԵՅՄԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ

(Դեպքի վերլուծություն)

Բնության դասի անբաժանելի մասն է աշակերտների ինքնուրույն գործնական գործունեությունը՝ ճանաչողական և ստեղծագործական որոնում, խնդիրների ձևակերպման ուսուցում, խնդիրների լուծման ուղիների նախանշում և լուծում, սեփական դիրքորոշումների պաշտպանություն և հիմնավորում: Այս առումով, քեյսմեթոդի, այսպես կոչված, case-study-ի հաջողությամբ օգտագործումը:

Քեյսն ունի մի քանի սահմանումներ. քեյսը իրական իրավիճակի նկարագրություն է, քեյսը իրականության ակնթարթային պատկերն է, ներկայության, գոյության լուսանկարը, քեյսը ոչ միայն իրադարձության իրական նկարագրությունն է, այլ նաև միասնական տեղեկատվական համալիր, որը թույլ է տալիս ծանոթանալ իրավիճակին:

Քեյսմեթոդը գործիք է, որը հնարավորություն է տալիս տեսական գիտելիքները կիրառել գործնական առաջադրանքներ կատարելիս: Մեթոդը զարգացնում է աշակերտների ինքնուրույն մտածողությունը, ուրիշների կարծիքը լսելու և այլընտրանքային տեսակետը կիսելու, սեփական կարծիքը փաստարկված ներկայացնելու կարողությունը: Այս մեթոդով աշակերտները հնարավորություն ունեն բացահայտելու և զարգացնելու վերլուծական և գնահատողական հմտությունները, սովորել խմբային աշխատանք, գտնել խնդրի լուծման ռացիոնալ ուղիներ:

Քեյսմեթոդի հիմնական գործառնությունը աշակերտներին սովորեցնելն է, թե ինչպես լուծել բարդ չկառուցված խնդիրները, որոնք հնարավոր չէ լուծել վերլուծական եղանակով: Քեյսմեթոդն ակտիվացնում է աշակերտներին, զարգացնում տեղեկատվական և հաղորդակցական կարողությունները:

Քեյսմեթոդի վրա աշխատանքը ներառում է հետևյալ փուլերը՝ տեղեկատվության քննադատական ընկալում, խնդրի նույնականացում, խնդիրը հարուցող պատճառներին միտված վերլուծություն, խնդրի լուծմանը միտված գաղափարների որոնում կամ ակտիվությունների ծրագրի մշակում:

Դասի ժամանակ քեյսերով աշխատանքն ընթանում է **3 փուլով**.

1-ին փուլ՝ ծանոթացման փուլ՝ անհատական նախապատրաստում: Այս փուլում տեղի է ունենում ծանոթացում քեյսին և աշակերտների ներգրավում իրական իրավիճակի քննարկմանը:

2-րդ փուլ՝ հիմնական փուլ – աշխատանք փոքր խմբերով: Այս ժամանակ ձևավորվում են խնդրի լուծման տարբեր մոտեցումներ: Խմբի անդամները պետք է մշակեն ընդհանուր կարծիք, որը կարող է ուղեկցվել դիագրամներով, թեզիսներով: Պետք է նշել, որ ուսուցչի համար ընդհանուր կարծիք մշակելը ինքնանպատակ չէ: Այն ցանկալի է, բայց յուրաքանչյուր աշակերտ կարող է ունենալ իր, տարբեր կարծիքը և արտահայտել այն քննարկման ժամանակ, այսինքն՝ երրորդ փուլում: Այս իրավիճակում քեյսերով ուսուցումը կոլեկտիվ դասավանդման մեթոդի դերում է, որի կարևոր մասն է կազմում խմբային աշխատանքն ու տեղեկությունների փոխադարձ փոխանակումը: Խմբերի գործունեության արդյունքը ենթակա է քննարկման: Կարևոր է միասնական կարծիքի ձևավորումը քեյսի առաջադրանքի վերաբերյալ:

3-րդ փուլ՝ խմբի հեղինակային արդյունքը ներկայացում՝ ուղեկցող քննարկումով: Յուրաքանչյուր խումբ հակիրճ և հստակ ներկայացնում է խնդրի իր լուծումը: Խմբի ներկայացմանը պետք է տրամադրվի 3 րոպե: Այնուհետև խմբերի միջև սկսվում է քննարկում, որով ավարտվում է աշխատանքը կոնկրետ իրավիճակի վրա, և միաժամանակ ունի զարգացնող մեծ ներուժ: Քննարկումն ավարտելուց հետո ուսուցիչը կարծիք է հայտնում, թեև չի պնդում, որ դա միակն է և ճիշտը՝ դրանով իսկ ընդգծելով իր և աշակերտների գործընկեր լինելու հանգամանքը: Նույն փուլում գնահատվում են աշակերտների աշխատանքները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ուսումնական միջավայրի կազմակերպումը մեծ նշանակություն ունի ուսումնական գործընթացում, հատկապես տարրական դասարաններում՝ ելնելով նրանց տարիքային առանձնահատկություններից: Ուսումնական միջավայրը այնպես պետք է կազմակերպվի, որ նպաստի ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, աշակերտների անկախ և ստեղծագործական աշխատանքին, ուսուցման կազմակերպմանը և առարկայի նկատմամբ հետաքրքրության բորբոքմանը:

Ուսումնական միջավայրի կազմակերպումը բարդ և համալիր համակարգ է և ներառում է ինչպես դասասենյակի ֆիզիկական բնութագրերը (օրինակ՝ լուսավորություն, ջերմաստիճան, ուսումնական կահույք և այլն), այնպես էլ ուսուցման համար անհրաժեշտ տարբեր տեսակ ռեսուրսներ (օրինակ՝ շնորհանդեսի և ցուցադրման համար անհրաժեշտ նյութեր, սարքավորումներ, ուսումնամեթոդական հավաքածուներ, մանրակաղապարներ և մոդելներ, հավաքածուներ և այլն):

Ուսումնական ռեսուրսները ուսումնական գործընթացում պետք է խթան հանդիսանան, հեշտացնեն աշխատանքը դասարանում և ուսումնական գործընթացն ավելի դինամիկ և ինտերակտիվ դարձնեն: Ռեսուրսների հանգամանորեն ընտրությունը, համապատասխան տեսքով ներկայացումը և դրանց նպատակային կիրառումը առանձնահատուկ նշանակություն ունեն բնագիտության ուսուցման գործընթացում:

Տարբեր տեսակի ուսումնական ռեսուրսներն այն հաղորդակցման միջոցներն են, որոնք աշակերտների մեջ պետք է զարգացնեն մտածողությունը, ստեղծագործականությունը, դիտարկումը, հետազոտումը, գեղագիտական ճաշակը և այլն: Ինչպես նաև՝ պետք է նպաստեն աշակերտների մեջ տեղեկատվությունը տեսանելիորեն ստանալուն և հասկանալուն, ուսանման վերլուծման, հետազոտման և այլ հմտությունների ու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Օժանդակ միջոցների, նյութերի և ռեսուրսների՝ ըստ անհրաժեշտության օգտագործումը կախված է նրանից, թե որքանով է դա համապատասխանում դասի նպատակին: Ուստի ուսուցիչը դասի պլանավորման ընթացքում, նախ՝ պետք է նկատի ունենա, թե ինչպիսի ռեսուրսներ են անհրաժեշտ և ինչպես օգտագործի դրանք նպատակային և արդյունավետ:

Կրթական ռեսուրսների գնահատման համար անչափ կարևոր է նկատի ունենալ այնպիսի չափանիշները, ինչպիսիք են. անհրաժեշտությունը (ինչպիսի ռեսուրսներ են անհրաժեշտ ուսումնական գործընթացի ապահովման համար), հասանելիությունը (ինչ ռեսուրսներ են հասանելի դասասենյակում, դպրոցում, հասարակությունում), պահպանումն ապահովելը (ինչպես են պահվում ռեսուրսները, և որքանով են դրանք պաշտպանված դասասենյակում, դպրոցում), դրանց անվտանգ օգտագործումը (անվտանգության ինչ միջոցառումներ են պահանջվում) և օգնությունը (ինչպիսի օգնություն է անհրաժեշտ):

Հաջող և արդյունքին կողմնորոշված ուսուցման համար կիրառվելիք կրթական ռեսուրսների արդյունավետությունը ստուգելու համար կարևոր է, որ ուսուցիչը նկատի ունենա մի քանի գործոն, մասնավորապես, թե որքանով հնարավոր է դրանց օգնությամբ.

1. Բորբոքել աշակերտների սովորելու ցանկությունը (ինչ կա ռեսուրսներում, ինչը կնպաստի աշակերտների մեջ մոտիվացիայի բարձրացմանը, հետաքրքրությանը):
2. Աշակերտները կարողանան սովորել պրակտիկայով (ինչ կա ռեսուրսների մեջ, ինչը կնպաստի ուսանմանը փորձառության հիման վրա, պրակտիկայով):
3. Աշակերտները կարողանան հետադարձ կապ հաստատել (ինչ կլինի այդ ռեսուրսների օգտագործման ժամանակ հետադարձ կապը, կգիտակցե՞ն արդյոք աշակերտները՝ ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը դասարանում, ինչ են սովորել միմյանցից և ուսուցիչներից):
4. Աշակերտները կարողանան յուրացնել նյութը (արդյոք այս ռեսուրսը կնպաստի՞ սովորածն ավելի լավ ըմբռնելուն ու հասկանալուն):

Ուսումնական միջավայրի և ռեսուրսների ստեղծման գործընթացում անչափ կարևոր է նաև հենց աշակերտների ներգրավումը: Ելնելով բնագիտության առարկայի առանձնահատկություններից՝ աշակերտներն իրենք, ուսուցիչների ղեկավարությամբ կարող են ստեղծել տարբեր ռեսուրսներ: Օրինակ, կենդանի անկյուն, որտեղ նրանք կհավաքեն տարբեր բույսեր, կկազմակերպեն ակվարիում, և որ ամենակարևորն է, իրենք կխնամեն այն: Իրենք կարող են ստեղծել հերբարիում, բնական

օբյեկտների հավաքածուներ, մոդելներ, մանրակադապարներ և այլ օժանդակ նյութեր (քաղվածքներ ամսագրերից, թերթերից, գրքերից և այլն): Մինևույն ժամանակ կարելի է օգտվել հրավիրված «հյուրի» (հրավիրված գիտնական, մասնագետ և այլն) խորհրդատվությունից:

Աշակերտների, ուսուցիչների և ծնողների համատեղ ջանքերով դասասենյակում կարելի է ստեղծել այսպես կոչված Բնական գիտությունների կենտրոն, որտեղ կհավաքվեն առարկայի ուսուցման համար անհրաժեշտ և օգտակար առարկաներ, ներառյալ այնպիսիները, որոնց երկրորդային վերամշակմամբ հնարավոր կլինի դրանք օգտագործել դասի ժամանակ (օրինակ՝ պլաստմասսայե տարբեր իրեր, թղթեր և այլն):

Մինևույն ժամանակ, բնական գիտությունների կենտրոնը կարող է լինել համալիր նախագիծ, որը կմիավորի տարբեր դպրոցական առարկաներ և խթան կհանդիսանա աշակերտների բազմազան և ստեղծագործական գործունեությանը: Օրինակ, մերձակայքի շրջակա միջավայրի ուսուսանակարությունը, դրա լուսանկարումը և հատակագիծ կազմելը, կենդանիների կմախքների պատրաստումը և կենդանիների խրտվիլակների ստեղծումը, հերբարիոմսեր կազմելը, տվյալ միջավայրում առողջության պայմանների, այս միջավայրի աղտոտման և աղտոտման աղբյուրների վերլուծումը, գործնական էկոլոգիական գործունեության պլանավորումը և իրականացումը, ցուցահանդեսների կազմակերպումը մարդու բնական կոնկրետ միջավայրի և դրանում ապրելու թեմայի մասին, ընդհանուր և կոնկրետ պարզ քարտեզների պատրաստումը և այլն:

Դասարանական միջավայրի կազմակերպման ժամանակ անչափ կարևոր է նրա տարածական կազմակերպումը: Ուսուցիչները, ելնելով դասի նպատակից, այնպես պետք է կազմակերպեն դասարանական միջավայրը, որ աշակերտները համատեղ համագործակցությամբ անցկացնեն որևէ հետազոտություն, նրանք այնպես պետք է խմբավորվեն, որ նրանց հետ հարմար լինի համատեղ աշխատանքը:

Դասասենյակում պարտադիր կահույքի հետ ցանկալի է, որ աշակերտներն ունենան պահարաններ և դարակներ, որոնք կարելի է օգտագործել ինչպես ռեսուրսների պահման, այնպես էլ որոշ դեպքերում որևէ բանի ցուցադրման նպատակով: Ուսուսական ռեսուրսներ պահելու համար կարող են օգտագործվել նաև դատարկ արկղեր, որտեղ կզետեղվեն համարակալած նյութեր, որոնց վրա կփակցվի համապատասխան պիտակ:

Տարրական դասարաններում, ելնելով բնագիտություն առարկայի ուսուցման առանձնահատկությունից, հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձվի ուսուսական ռեսուրսների համակարգմանը և այնպիսի տեղում տեղադրմանը, որ նրանց օգտագործումը ցանկացած ժամանակ հասանելի և հեշտ լինի:

Որպեսզի ուսուցիչ համար հեշտ լինի ռեսուրսները ժամանակին և նպատակային գտնելը, ցանկալի է, որ ունենա դրանց գույքագրման թերթիկ, որի վրա նկարագրված կլինի այս ռեսուրսների ցանկը, որպեսզի ժամանակի ընթացքում ուսուցիչը վերանայի պահված նյութերը և այն, ինչն այլևս անհնար է կիրառել կամ հնացել է, նորով փոխարինվի

4. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՊՎԱՍԾ ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԵՏ

Սովորելիս շատ երեխաներ ունենում են ուսանման հետ կապված դժվարություններ, ինչը կարող է հարուցված լինել աշակերտի ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հուզական, լեզվական կամ այլ վիճակով: Իսկ երկրի կրթական համակարգի պարտավորությունն է գտնել բոլոր երեխաներին հաջողությամբ ուսուցանելու ուղիները:

Ներառական կրթությունը նշանակում է հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների ներգրավում կրթական գործընթացի մեջ: Նրա նպատակն է այս երեխաների կրթությանը նպաստումը, նրանց ինտեգրումը, հնարավորությունների բացահայտումը և զարգացումը: «Ինկլյուզիա» նշանակում է ներառում: Որպես հասկացություն՝ այն առաջացել է 20-րդ դարի երկրորդ կեսին՝ սահմանափակ հնարավորություններով երեխաների իրավունքների պաշտպանության համատեքստում:

Ներառական կրթության նպատակն է՝ բոլոր երեխաներին տալ հասակակիցների հետ սովորելու և բնական վայրին մոտ որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորություն:

Ներառական կրթությունը պահանջում է ամբողջությամբ դպրոցի և առարկայի ուսուցչի անխոնջ աշխատանք նրա համար, որ հզորացնի և զարգացնի հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի հնարավորությունները, բարելավի աշակերտի ակադեմիական և սոցիալական հմտություններն ու կարողությունները, պատրաստի աշակերտին ինքնուրույն կյանքի համար և ակտիվորեն նպաստի աշակերտի՝ որպես հասարակության լիարժեք անդամ ձևավորմանը:

Ըստ ներառական կրթության միջազգային մոդելի՝ հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտը հանրակրթական դպրոցի և դասարանի լիիրավ անդամ է: Նա ամբողջությամբ պետք է մասնակցի դպրոցական և դասարանական ակտիվություններին:

Դասագրքում բավականին շատ այնպիսի առաջադրանքներ և վարժություններ կան, որ ուսուցիչը կարող է կիրառել հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների մոտ: Օրինակ՝ առաջադրանքներ, որոնց կատարումը պահանջում է նկարել, ծեփակերտել, նկարներ բնութագրել կամ ըստ դրանց՝ պատմություն կազմել և այլն:

Ինչպես նաև, որպես օժանդակ միջոց, կարող եք օգտվել նաև Ազգային ուսուժական պլանների և գնահատման կենտրոնի կողմից հրատարակված գրքերից.

1. «Ներառական կրթություն» սովորենք միասին

Գրքում ներկայացված են այն հարցերը, որոնք առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների կրթության և նրանց սոցիալական ինտեգրման գործընթացում: Գրքում քննարկված են ներառական կրթության սկզբունքները և ուսուժական ռազմավարությունները:

2. «Ներառական կրթություն» ուղեցույց ուսուցիչների համար

Այս օժանդակ ձեռնարկը նախատեսված է հանրակրթական և մասնագիտացված դպրոցների ուսուցիչների, վարչության աշխատողների և ներառական կրթության բնագավառում աշխատող բոլոր մասնագետների համար:

3. Գրքույկ – «Գերակտիվությունը և ուշադրության պակասը»

Գրքույկում քննարկված են գերակտիվ և ուշադրության պակասով աշակերտների ուսուցման առանձնահատկությունները:

4. «Սովորելու կարողության խախտում ունեցող երեխաների ուսուցումը»

Տվյալ դասագիրքը հատկացված է հանրակրթական և մասնագիտացված դպրոցների բոլոր ուսուցիչների համար, որոնք դասավանդում են սովորելու կարողության այս կամ այն աստիճանի խախտումով աշակերտներին: Դասագիրքը հետաքրքիր կլինի նաև ցերեկային խնամքի կենտրոններում և հաստատություններում գտնվող երեխաների մանկավարժների և դաստիարակների համար:

5. «Ներառական կրթության տեղեկատու»

Գրքերը հատկացված են հանրակրթական և մասնագիտացված դպրոցների ուսուցիչների համար, որոնք դասավանդում են սովորելու կարողության այս կամ այն աստիճանի խախտումով աշակերտների:

Դասարանում հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտ լինելու դեպքում ուսուցիչ հիմնական խնդիրը դասապրոցեսում բոլոր աշակերտների հավասար ներգրավվածության ապահովումը և յուրաքանչյուր աշակերտի համար նախանշված նպատակին համապատասխան գիտելիքի փոխանցումն է: Ուսուցիչը պետք է կարողանա դա անել՝ չնայած նրան, որ նա տարբեր աշակերտների հետ աշխատում է տարբեր ռազմավարություններով և տարբեր պլանով:

Օրինակ, թույլատրելի է, որ ուսուցիչ նպատակը լինի առաջին դասարանցիների համար գրատախտակից պարզ նախադասություններ արտագրելու ունակության զարգացումը, իսկ նրանց դասարանցի հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի համար նախանշված նպատակը լինի գրելուն նախորդող պատկերներ նկարելու կարողության զարգացումը: Անթույլատրելի է, որ ուսուցիչը դասարանի աշակերտների մեծ մասի համար պլանավորի նպատակին համապատասխան ակտիվություն՝ գրատախտակի վրա գրել նախադասություններ, աշակերտները դրանք արտագրեն տետրի մեջ, իսկ հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտն այս ժամանակ անգործ նստի և ներգրավված չլինի որևէ տեսակի գրավոր ակտիվության մեջ: Ճիշտ կլինի, եթե զուգահեռաբար հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտին հանձնարարի երկրաչափական պատկերներ գունավորել կամ արտանկարել: Ավելին, ուսուցիչը կարող է փայլ նրա կողքին, մինչև մյուս աշակերտները գրում են, և հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտին խրախուսի առաջադրանքի կատարման ընթացքում:

Միևնույն ժամանակ, ուսուցիչը պետք է փորձի, որ հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի համար ընտրված ակտիվությունները դասի համատեքստից և դասի թեմայից դուրս փնտրված չլինեն, չնայած նրան, որ հնարավոր է մյուս աշակերտների նպատակներից բոլորովին տարբեր նպատակի ծառայեն:

Օրինակ, ուսուցիչի նպատակն է զարգացնել երկրորդ դասարանցի աշակերտի ծանոթ թեմատիկայով ստեղծած փոքր չափի բնագիտական տեքստերը հասկանալու և փոխանցելու կարողությունը, դասի թեման է «Օադիկը», համապատասխանաբար, ուսուցիչն աշակերտներին կխնդրի այս թեման սովորել և, հնարավոր է, նաև պատմել: Արդարացված կլինի, եթե ուսուցիչը հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտին խնդրի անվանել իրեն ծանոթ ծաղիկներ (այս ակտիվությունը արձագանքում է դասի համատեքստին): Համապատասխանաբար, եթե ուսուցիչը աշակերտներից պահանջում է աշխատել տվյալ տեքստի վրա և տարբեր առաջադրանքներ կատարել, հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտին հնարավոր է հանձնարարի ծաղիկներ նկարել:

Այս մոտեցումը կիրառելիս՝ կարևոր է, որ ուսուցիչը յուրաքանչյուր ակտիվությունը սահմանի հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի հնարավորությունների և նախանշված նպատակների նախատեսմամբ և չնոռանա գլխավոր սկզբունքը՝ չնայած տարբեր նպատակներին, նա պետք է ապահովի յուրաքանչյուր աշակերտի հավասար ներգրավվածություն դասապրոցեսի և ակտիվությունների մեջ:

Իդեալական կլինի, եթե ուսուցիչը կարողանա նախատեսել հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի հնարավորությունները և նպատակը և իր դասի գործընթացն այնպես պլանավորի, որ հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտը ճիշտ նույնպիսի կրթական ակտիվությունների մեջ լինի ներգրավված և այն տևողությամբ, ինչպես իր մյուս համադասարանցիները: Օրինակ, եթե ուսուցիչ մեկ կոնկրետ օրվա դասացուցակը նախատեսում է աշակերտների բանավոր հարցում, ուսուցիչը բանավոր հարցման գործընթացում հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտին ևս պետք է ներգրավի (միայն թե համապատասխանաբար ընտրված մեթոդով): Եթե փնտրված դասապրոցեսը տրամադրվում է գրավոր ակտիվության կամ վարժության կատարման, հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտը ևս պետք է կատարի նման ակտիվություն, սակայն, կարելի է, երբ ուրիշները գրում են, նա գրի, ինչպես դա նախորդ օրինակում էր սահմանված:

Ելնելով գոյություն ունեցող իրականությունից՝ միշտ հնարավոր չի լինում դասի գործընթացն այսպես պլանավորել և հաճախ արդարացված է, հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի բանավոր հարցումն հենց այն ժամանակ կատարվի, երբ նրա համադասարանցիները գրում են: Այսպես

ուսուցիչն ավելի է կենտրոնանում այս աշակերտի վրա: Կամ ընդհակառակը, արդարացված է, որ աշակերտը նկարի այն ժամանակ, երբ ուրիշների բանավոր հարցումն է ընթանում:

Այս դեպքում կարևոր է, որ ուսուցչի կողմից նախապես ընտրված ռազմավարությունը նախապես լավ մտածված լինի և նախատեսի աշակերտի հնարավորությունները, դասարանի կառուցվածքն ու դասի գործընթացը:

Գլխավորն այն է, որ ուսուցիչը թույլ չտա, որ հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտը դասի ժամանակ անգործ նստի այն ժամանակ, երբ իր համադասարանցիները ակտիվորեն մասնակցում են դասին:

Որոշ դեպքերում անհրաժեշտ է դառնում աշակերտին դասի ժամանակ դասարանի ակտիվություններից բոլորովին տարբեր ակտիվություններ առաջարկել: Օրինակ, թույլ է տրվում, որ ուսուցիչն աշակերտին հանձնարարի գրատախտակը մաքրել այն ժամանակ, երբ դասարանի մյուս աշակերտները ստուգողական են գրում, կամ աշակերտը բնության դասի ժամանակ նկարի և գունավորի այն ժամանակ, երբ իր համադասարանցիները տարբեր բանավոր և գրավոր ակտիվություններ են իրականացնում: Նման ակտիվությունների դիմելիս՝ որոշիչն այն է, որ աշակերտին դրանք առաջադրանքի տեսքով տրվեն ուսուցչի կողմից (այսինքն՝ նկարել սկսի, որովհետև ուսուցիչն է հանձնարարել և ոչ թե նրա համար, որ ինքն է դա ցանկացել) և դասի ընթացքում վերահսկվի:

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մի՛ փորձեք ամեն ինչ մեկ օրում կարգավորել: Մեկ օրում նայեն Ձեր աչքերին, ասեն ձեր անունը, կատարեն ձեր ցուցումները: Բմացե՛ք, որ բոլոր երեխաները և հատկապես այսպիսի երեխաները դժվարանում են օտար միջավայրում, օտար մարդկանց հարմարվել: Ուստի նրան թո՛ւյլ տվեք լինել իր համար, նստարանի տակ թաքնվել կամ էլ՝ նկարչության թերթը լուսամուտագոգի մոտ տանել և այնտեղ սկսել նկարել: Ժամանա՛կ տվեք և սպասե՛ք:

Դասը բացատրելիս առավելագույնս օգտագործե՛ք վիզուալ նյութեր: Ցանկալի է, որ նյութերն ընտրեք հանգամանորեն: Պարզ նկարները և պատկերները շատ կօգնեն նրանց հասկանալ այն, ինչը փորձում եք բացատրել:

Մի՛ օգտագործեք դարձվածքներ, փոխաբերական իմաստով ասած բառեր, – նրանք կդժվարանան հասկանալ այդ ամենը:

Առաջադրանքի հրահանգը բաժանե՛ք մի քանի պարզ ցուցումների և այնպես տվեք նրանց, վերահսկե՛ք ցուցումների հաջորդականությունը, քանի որ որևէ մեկի դուրս ժառանգումը աշակերտը կարող է շփոթվել:

Խոսե՛ք որքան հնարավոր է պարզ նախադասություններով:

Չխախտե՛ք դասի կառուցվածքը, նրանք սիրում են համակարգ և առօրեական դասավորված հաջորդականություն: Ուրախ են, երբ գիտեն, թե ինչ պետք է ակնկալեն ձեր դասից:

Մի՛ օգտագործեք հեգնանք, նույնիսկ կատակով: Օրինակ, եթե վատ կատարած առաջադրանքի համար ասեք. «Ապրե՛ս, ինչպե՛ս կարողացար», – նրանք դա կհասկանան ուղղակիորեն և կգարմանան, թե ինչու եք դրվատում, եթե նրանց առաջադրանքը վատն է:

Եթե նկատեք, որ այլևս չի կարող աթոռին նստել, անհանգիստ է, շարժվում է, նրան գործի դրեք՝ գրատախտակը մաքրել, տետրերը հավաքել կամ որևէ նման պարզ գործ հանձնարարե՛ք:

Ներգրավե՛ք տեխնոլոգիաներ՝ նրանք սիրում են նոր տեխնոլոգիաներ, ուսուցման ժամանակ օգտագործե՛ք տարբեր համակարգչային ծրագրեր, ֆիլմեր կամ խաղեր:

Աշխատե՛ք դասասենյակի պատերը չգերծանրաբեռնել գույնզգույն լուսանկարներով և ապրիլկացիաներով: Բիարկե, պարզ է, որ դուք ցանկանում եք աշակերտների ստեղծագործածը ցույց տալ բոլորին, բայց, ամենայն հավանականությամբ, միայն նրանց ուշադրությունը չէ, որ կշեղվի:

Օգտվեք դասարանի օգնությունից, երբ որևէ հարց եք բացատրում և կռահում եք, որ նրանք

չհասկացան, խնդրեք նույնը բացատրել որևէ այլ աշակերտի և այդպես այնքան ժամանակ, մինչև չստանաք պարզ հասկանալի սահմանում:

Կրկնե՛լ և կրկին կրկնե՛լ՝ մի՛ զլացեք, կրկնե՛ք նոր թեման և անցած հարցերը:

Փորձե՛ք միշտ նրանց ներգրավել խմբի գործունեության մեջ:

Անպայման կապ հաստատեք նրանց ծնողի և անձնական հոգեբանի հետ: Նրանք կսովորեցնեն ձեզ ինչպես կառավարել իրավիճակը ճգնաժամի ընթացքում, ինչն է հանգստացնում նրանց, ինչպես հասնել նրան, որ լսեն և հավատան ձեզ:

Հնարավորինս օգտագործե՛ք տարբեր ռեսուրսներ:

Ամենակարևորը՝ հանգիստ եղե՛ք, եղե՛ք բնական և սիրող: Դուք անպայման կհպարտանաք արդյունքով:

Ազգային ուսումնական պլանի հինգ կրթական սկզբունքները պետք է իրականացվեն ներառական միջավայրում, ինչը որակյալ կրթությունը հավասարապես հասանելի է դարձնում բոլոր աշակերտներին:

Ուսուցիչները պետք է հիշեն, որ հատուկ կարիքներով աշակերտների հետ աշխատելիս փոխվում են ն՛ կարճաժամկետ, ն՛ երկարաժամկետ նպատակները: Համալիր առաջադրանքը, որպես միջանկյալ կրթական նպատակին հասնելու անհրաժեշտ գործիք, ուսուցիչը կարող է իր դասարանի աշակերտներին առաջարկել իրենց հետաքրքրություններին և կարողություններին համապատասխան առաջադրանք և պատրաստել այս առաջադրանքի հարմարեցված տարբերակը առանձին աշակերտների համար (նկատի՛ ունեցեք ոչ միայն ՀԿԿՈՒ, այլ նաև՝ դասարանի ցանկացած աշակերտի):

5. ԹԵՄԱՏԻԿ ՄԱՏՐԻՑԱՆԵՐ

Ներածություն

Բնագիտության պարտադիր դասընթացը տարրական (I-VI) աստիճանում ենթադրում է ինտեգրված և ամբողջական մոտեցում, որը ներառում է բնական գիտությունների հիմունքների կիրառում և մեկնաբանում՝ մեզ շրջապատող աշխարհը բացատրելու համար:

Չափորոշչում արդյունքների և նպատակային հասկացությունների տեսքով սահմանված են երկարաժամկետ (աստիճանային) նպատակները:

Չափորոշչում պարտադիր սահմանված են թեմաներ և ենթահասկացություններ, որոնց հիման վրա դպրոցներն իրենք են հստակեցնում խնդիրները:

Արդյունքները մշակվում են յուրաքանչյուր թեմայում: Թեմաներն ուղեկցվում են արդյունքների ձեռքբերման ստուգիչներով: Նրանք որոշում են, թե ինչ պետք է գնահատվի ուսանում-ուսուցման գործընթացում:

Ինչպես Աշակերտի գրքում, այնպես էլ Ուսուցչի գրքում մենք տրամադրում ենք բոլորնպատակային հասկացություններին հարմարեցված համալիր առաջադրանքներ: Մենք նաև առաջարկում ենք հանձնարարականներ, թե ինչպես և ինչ հաջորդականությամբ պետք է մշակվի բարդ առաջադրանքը:

Թեմատիկ մատրիցաներում կոնկրետ համալիր առաջադրանքն արդեն ներկայացված է ըստ մշակման փուլերի:

ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՄՇԱԿՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ (ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐ).

Փուլ 1.

Ծանոթանալ համալիր առաջադրանքի էությունը (ի՞նչ հարցի է վերաբերում, ի՞նչ ձևով կկատարվի համալիր առաջադրանքի շնորհանդեսը):

Հանգուցային հարց. Ի՞նչ նկատի ունի ուսուցիչը հարցը: Ի՞նչ ստեղծագործական արդյունքի միջոցով պետք է հավաստեն, թե ինչ են սովորել այս հարցի վերաբերյալ:

- Կծանոթացնեն համալիր առաջադրանքի պայմանը: Նրանց ուշադրությունը կկենտրոնացնեն այն բանի վրա, թե կոնկրետ ինչ արդյունք պետք է ստեղծվի համալիր առաջադրանքի վրա աշխատելու արդյունքում:
- Ինչ պետք է ներկայացվի նրանց պատրաստած պատասխանի մեջ, ուշադրությունը կկենտրոնացնեն նրա վրա, որ դրանք գնահատման չափանիշներն են:
- Կծանոթացնեն, թե ինչ է նշանակում նկարագրել առաջադրանքի վրա աշխատելիս սանցած աշխարհագրական հետազոտության փուլերը և կբացատրեն, թե ինչ է նշանակում աշխարհագրական հետազոտությունը:
- Կխնդրեն նրանք՝ մտածել առաջադրանքի պայմաններից և չափանիշներից ելնելով, թե նրանց մոտ հարցեր են առաջացել, կամ եթե նրանց համար անորոշ բան կա, և մեկ անգամ նրանց ուղղություն կտամ:

Փուլ 2.

Աշխատանք համալիր առաջադրանքի վրա: Նպատակային հասկացության/ հասկացությունների հետ կապված կայուն պատկերացումների մշակում:

Հանգուցային հարցեր. Ինչպե՞ս կատարեմ տրված առաջադրանքը:

Ակտիվություն 1. Գրվում է կոնկրետ ակտիվություն: Օրինակ՝ տեսաֆիլմ դիտել և քննարկել և այլն:

Ակտիվություն 2. Գրվում է կոնկրետ ակտիվություն: Օրինակ՝ տեքստի կամ թեմատիկ քարտեզների վերլուծություն, պատճառահետևանքային կապերի որոշում և այլն:

Ակտիվություն 3. Գրվում է կոնկրետ ակտիվություն: Օրինակ, համալիր առաջադրանքի մեջ տրված որոշակի ապրանքի ստեղծում, օրինակ՝ պատասառի ստեղծում:

Ակտիվություն 4. Գրվում է կոնկրետ ակտիվություն: Օրինակ՝ համալիր առաջադրանքների շնորհանդես կամ ներկայացում: Հանգուցային հարց. Ինչպե՞ս պետք է ներկայացնեն համալիր առաջադրանքի վրա աշխատելու արդյունքն այնպես, որ հետաքրքիր և հասկանալի լինի ունկնդիրների համար:

Մաթե. – Մենք շատ լավ գաղափարներ ունենք, բայց եկեք նախ Մաշոյի աղբամանից հանենք Մաշոյի դեն նետված թղթերը:

- Որտե՞ղ ես տեսել աղտոտված միջավայր:
- Երբեք ցանկացե՛լ ես մաքրել այն:
- Օգնո՞ւմ ես բնությանը: Ինչպե՞ս: Ինչո՞ւ:
- Մարդը զբառո՞ւմ է բնությունը: Ինչպե՞ս: Բե՛ր գործնական օրինակներ:
- Քո կարծիքով, ի՞նչ է նշանակում շրջակա միջավայրի պահպանություն:
- Որտե՞ղ ենք մենք թափում թափոնները:
- Ի՞նչ թափոններ են ամենից մեծ քանակությամբ առաջանում ամեն օր:
- Ո՞ր թափոններն են ամենաքիչ առաջանում:
- Ո՞ր թափոնների առաջացումից կարող ես խուսափել թափոնները նվազեցնելու համար:
- Ի՞նչ իրեր կարելի է վերանորոգել, թարմացնել կամ նվիրաբերել թափոնները նվազեցնելու համար:
- Քո դպրոցում կա՞ն բավարար աղբամաններ:
- Նկատո՞ւմ ես անտարբեր վերաբերմունք աղտոտված միջավայրի նկատմամբ:
- Ո՞վ է հոգում ձեր դպրոցը մաքուր պահելու մասին:
- Աղբը հավաքելու համար գունավոր աղբամաններ տեսե՞լ ես:
- Քո կարծիքով, ո՞րն է դրանց տարբերությունը:
- Ինչի՞ համար են ստեղծվում գունավոր աղբամանները:
- Դու ի՞նչ կարող ես անել շրջակա միջավայրը պահպանելու համար: Աշակերտի դասագիրք, էջ 102-103:

Ռեսուրս 1

Նկարագրի՛ր, թե ինչպես է ընթանում/ ընթացել առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը.

- Ինչպե՞ս ես պլանավորում/պլանավորել համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը: Ի՞նչ էիր նկատի ունենում պլանավորելիս:
- Նախնական պլանն օգնե՞ց քեզ աշխատանքում:
- Ի՞նչ մանրամասների վրա ես կենտրոնացել թափոնների արկղի մոդել պատրաստելու համար:
- Արդյոք համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացը ընթացե՞լ է պլանի համաձայն:
- Արդյոք անհրաժե՛շտ էր փոփոխություններ կատարել սկզբնապես մշակված պլաններում:
- Ինչո՞ւ է անհրաժեշտ ստեղծել առաջադրանքի նախնական տարբերակը:
- Ինչո՞վ է տարբերվում կատարված առաջադրանքի նախնական տարբերակը վերջնական տարբերակից:
- Ի՞նչ գործոններ հանգեցրին/կարող էին հանգեցնել նախնական եզրակացությունների վերանայմանը:
- Ի՞նչ արդյունք եք ստացել համալիր առաջադրանքի տեսքով:
- Ինչո՞ւ ես կարծում, որ քո ստացած արդյունքը **թափոնների արկղի մոդել է:**

Ո՞ր հարցի մասին գիտելիքներդ ես դրսևորել համալիր առաջադրանքի միջոցով:

- Ի՞նչն է եք կատարել համալիր առաջադրանքը:
- Ի՞նչ երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակներ եք ունեցել համալիր առաջադրանքի վրա աշխատելու գործընթացում:
- Ո՞ւմ համար և ի՞նչն է ստացած արդյունքն օգտակար ու հետաքրքիր:
- Ի՞նչ գիտեիր ուսումնասիրվող հարցի մասին: Ի՞նչ իմացար նորը: Լրացուցիչ ի՞նչ կցանկանայիր իմանալ:
- Ի՞նչ եզրակացությունների ես հանգել համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում: Ի՞նչն է ապացուցում քո եզրակացությունների վավերականությունը/հետևողականությունը:
- Ի՞նչ մեթոդներ ես օգտագործել ուսումնական նյութը ավելի լավ հասկանալու համար/համալիր առաջադրանքն ավելի լավ կատարելու համար:

Ի՞նչ խոչընդոտների ես հանդիպել առաջադրանքի վրա աշխատելիս: Ի՞նչն օգնեց քեզ:

- Ո՞ւմ անջն էիր հաշվետու աշխատանքային գործընթացում (ուսուցիչ, դասընկերներ, թաղային համայնք):
- Ո՞րն էր քո և քո ուսուցչի ընդհանուր նպատակը համալիր առաջադրանքի վրա աշխատելու ընթացքում:
- Դասընկերներիդ հետ ընդհանուր նպատակներ ունեի ք: Ձեզ համար հետաքրքիր և հաճելի էր համալիր առաջադրանքի վրա աշխատելը:
- Ի՞նչ ես արել ինքնուրույն՝ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:
- Ի՞նչն է քեզ մոտ լավ ստացվել համալիր առաջադրանքի վրա աշխատելիս:
- Ո՞վ և ի՞նչպե՞ս է օգնել քեզ համալիր առաջադրանքի վրա աշխատելիս: Ո՞ւմ հետ ես համագործակցել: (Ի՞նչ օգնություն եք ցուցաբերել ձեր դասընկերներին/թաղամասի համայնքի անդամներին/ուսուցչին, ի՞նչ աջակցություն եք ստացել նրանցից):

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐ ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Տարրական դասարաններում (1-4 դասարաններ) հիմնականում կիրառվում է զարգացնող գնահատումը, որը վերահսկում է յուրաքանչյուր աշակերտի զարգացման դինամիկան և նպաստում է ուսուցանողության որակի բարելավմանը: Չարգացնող գնահատումը նպաստում է նաև աշակերտների մոտիվացմանը, աշակերտներին տեղեկատվություն է տրամադրում, թե ինչպես է հնարավոր բարելավել ուսանման արդյունքները՝ օգնելով նրանց համարժեք ինքնագնահատման, ուրիշներին գնահատելու կարողության ձևավորման և հաջողության հասնելու մեջ:

Չարգացնող գնահատման ժամանակ կիրառվում են այնպիսի միջոցներ, ինչպիսիք են. բանավոր մեկնաբանությունը, խորհուրդ-խրատը, դիտարկման թերթիկը, ինքնագնահատման և փոխադարձ գնահատման սխեման, հարցաթերթիկը, բառային (բանավոր / գրավոր) մեկնաբանությունը, կարողությունների զարգացման մակարդակի նկարագրությունը և այլն: Այսպիսով, զարգացնող գնահատումը կոնկրետ աշակերտի առաջընթացի հիման վրա է իրականացվում՝ աշակերտի սեփական ձեռքբերումների համեմատ, թե ինչ գիտելիքի էր տիրապետում և գնահատման պահին ինչ գիտելիք ունի:

Հայտնի է, որ զարգացնող և ամփոփիչ և գնահատումների միջև հիմնարար տարբերությունը գնահատման ընթացակարգի անցկացման ժամանակն է: Օրինակ, ամփոփիչ թեստավորումն իրականացվում է ուսուցանող դասընթացի ավարտին, իսկ զարգացնող թեստավորումը՝ դասընթացի սկզբում և նրա ընթացքում: Չարգացնող գնահատման գործիքներն այնպես են մշակված, որ ավելի սերտ կապ ունեն ուսուցման գործընթացի և ուսուցանող նյութի հետ, ուստի դրանք ավելի հաճախ և դինամիկորեն են կիրառում: Չարգացնող գնահատման ընթացակարգը այնպիսի ժամանակահատվածում պետք է իրականացվի, որ ուսուցիչը դրա հիման վրա ուսուցման գործընթացի մեջ համապատասխան փոփոխություն կարողանա կատարել, իսկ աշակերտը պետք է կարողանա ուսման գործընթացում կատարել համապատասխան փոփոխություն կամ գնահատումից ստացված հետադարձ կապը ավելացնի նրա մոտիվացիան:

Չարգացնող գնահատման նպատակն է օգնել աշակերտին կատարելագործել իր հմտությունները՝ տարբեր խորհուրդների, երաշխավորությունների կամ խնդրի լուծման գործիքների մշակման միջոցով: Նման դիտողությունների ժամանակ աշակերտը ուսուցիչ տարբեր ժամանակ և տարբեր ձևով կատարված մեկնաբանությունների միջոցով մշտապես ստանում է այնպիսի տեղեկություններ, որոնք օգնում են նրան ավելի լավ սովորել, գիտակցել իր ուսանման ընթացքը: Ուսուցիչը զարգացնող գնահատման միջոցով պլանավորում է ուսուցանողական գործընթացը և ուսուցման տեմպն այնպես, որ նրա գործողությունները միտված լինեն աշակերտի զարգացմանը: Ազգային ուսուցանողական պլանի համաձայն, զարգացնող գնահատման միջոցներն են. բառացի (բանավոր / գրավոր) մեկնաբանությունը, ինքնագնահատման / փոխադարձ գնահատման աղյուսակը՝ խորագիրը, հարցաշարը: Համառոտ վերլուծենք դրանցից յուրաքանչյուրը.

Չարգացնող գնահատման ձև է բանավոր կամ գրավոր մեկնաբանությունները, որոնք կիսամյակի ընթացքում կամ դրա վերջում են արվում: Մեկնաբանությունները նկարագրում են աշակերտի ուժեղ և թույլ կողմերը և ներառում է հանձնարարականներ ուսման բարելավման մասին: Հետազոտողների կարծիքով մեկնաբանություններ անելը ուսուցման շատ արդյունավետ մեթոդ է: Հետազոտող Ջոն Հեթին (1992) քննարկել է մինչև 8000 հետազոտություն և եզրակացրել. Ամենահզոր մեթոդը, որը բարելավում է աշակերտների ակադեմիական առաջադիմությունը, մեկնաբանություններ անելն է: Համապատասխանաբար, կրթության որակի բարելավման պարզագույն դեղատոմսը կլինի. «Որքան հնարավոր է հաճախ արեք մեկնաբանություններ»:

Հետազոտության արդյունքում երաշխավորվում են մեկնաբանություն անելու հետևյալ մեթոդները.

1. Ուսուցիչ կողմից արված մեկնաբանությունները պետք է ուղղված լինեն աշակերտների արդյունքների բարելավմանը: Մեկնաբանությունը օգտակար է այն ժամանակ, եթե նա մանրակրկտորեն աշակերտին բացատրում է, թե ինչն է նրա մոտ լավ ստացվել և ինչը՝ ոչ: Աշակերտին միայն ասելը, որ նրա պատասխանը սխալ է, բացասաբար է ազդում նրա վրա:

Աշակերտին ասելը, որ այնքան ժամանակ աշխատի առաջադրանքի վրա մինչև սահմանված արդյունքին հասնի, նրա ակադեմիական աճը պայմանավորող գործոններից մեկն է:

2. Ուսուցիչի կողմից արված մեկնաբանությունները պետք է ժամանակին լինեն: Օրինակ, թեստն ամբողջությամբ ավարտելուն պես արված մեկնաբանությունը համարվում է ավելի արդյունավետ, քան թեստի որևէ մասն ավարտելուց հետո արված մեկնաբանությունը: Պետք է նաև նկատի ունենալ, որ ուշ մեկնաբանությունները պակաս են ներգործում աշակերտների և նրանց ակադեմիական առաջադիմության վրա:
3. Ուսուցչի կողմից արված մեկնաբանությունները պետք է կապված լինեն կոնկրետ չափանիշների հետ: Պետք է սահմանի չափանիշ, որը միտված է որոշակի մակարդակի գիտելիքների և հմտությունների զարգացման: Մեկնաբանությունները պետք է կապված լինեն հենց այս սահմանված չափանիշների հետ: Այս կերպ արված մեկնաբանությունն անհամեմատ ավելի կարևոր է: Այն ծառայում է աշակերտի տարբեր կարևոր կարողությունների զարգացմանը:
4. Արդյունավետ մեկնաբանություններ կարող են անել նաև աշակերտները: Հետազոտությունները ցույց են տալիս, որ աշակերտները կարող են նաև իրենց առաջադիմության արդյունավետ մոնիտորինգ իրականացնել (Թրամել, Շլոս և Ալֆեր, 1994), աշակերտները սովորելու գործընթացում նշում են իրենց հաջողությունները, ինքնագնահատում եք անում: Մա օգնում է նրանց տիրապետել կոնկրետ կարողությունների, ինչպես նաև հասնել բարձր ակադեմիական արդյունքների:

Ուսուցչի կողմից ժամանակին արված, արդյունքների բարելավմանը և կոնկրետ կարողությունների զարգացմանը միտված մեկնաբանությունները ուսուժական գործընթացն առավել հետաքրքիր և արդյունքին միտված կդարձնեն: Ինչ վերաբերում է մեկնաբանությունների ոչ պատշաճ հաճախականությանը օգտագործմանը, այս գործոնը բացասաբար է ազդում ուսուցման արդյունքների ձևերի վրա:


Հաջողության աստիճաններ

Աշակերտները սանդղաձև աստիճանների վրա որևէ նշանով պետք է նշեն, թե ինչպես են հասկացել նյութը. ստորին աստիճանը համապատասխանում է դիրքին՝ չեմ հասկացել, միջին աստիճանը՝ օգնություն է անհրաժեշտ ինձ, ունեմ ճշգրտելու հարցեր, ունեմ հարցեր, վերին աստիճանը՝ լավ հասկացա նյութը, աշխատանքը կարող եմ ինքնուրույն կատարել:



Կախարդական գծեր.

Աշակերտները թերթի վրա գծում են ուղղահայաց գծեր, դրանց վրա խաչով կամ որևէ այլ նշանով նշում են դիրքը, որը, ըստ իրենց, արտացոլում է, թե ինչ մակարդակով են կատարել առաջադրանքը: Ուսուցիչը ստուգում է նրանց աշխատանքը և անում ուղղումներ, այն դեպքում, եթե չի համաձայնում նրանց՝ ինքն է նշանակում խաչ կամ ներքևում կամ վերևում, իսկ այն դեպքում, եթե համաձայնում է՝ թողնում է անփոփոխ և շրջագծում է:



Պլյուս-մինուս

Ուսուցիչը գրատախտակի վրա աղյուսակ է գծում: Աշակերտները մեկ առ մեկ գնում են գրատախտակի մոտ և աղյուսակի այն վանդակում, որտեղ գրված է «+» նշանը, գրում են այն փաստերը, որոնք ամենաշատ մտապահել են դասից: «-» նշանով նշված վանդակում գրում են այն հարցերը, որոնք իրենց համար անորոշ են մնացել, ճշգրտման կարիք ունի կամ առաջադրանքները չեն կարողացել կատարել: Իսկ «հետաքրքիր» վանդակում (կարող է նշվել ?-ով) աշակերտները գրում են այն հարցերը, որոնց մասին իրենք ցանկանում են ավելին իմանալ, այսինքն՝ այն, ինչ հետաքրքրում է նրանց:

| | | |
|---|---|-----------------------|
| + | - | ՀԵՏԱՔՐՔԻՐ ? |
| | | |

Ավարտի՛ր նախադասությունը.

Ուսուցիչը խնդրում է աշակերտներին ավարտել նախադասությունները: Օրինակ.

| ՀԱՐՑ | ՈՉ | ԴժՎԱՐԱՆՈՒՄ ԵՄ | ԳՆԱՀԱՏՈՒՄ |
|---|----|---------------|-----------|
| Այսօր իմացա, որ ... | | | |
| Այսօր արեցի ... | | | |
| Այսօր զգացի, որ ... | | | |
| Ինձ համար հետաքրքիր էր ... | | | |
| Այս թեմայի (հարցի) մասին իմ կարծիքն է ... | | | |
| Ինձ զարմացրեց ... | | | |
| Մեկ անգամ ևս կլսեի ... | | | |
| Ինձ մոտ ցանկություն առաջացավ, որ ... | | | |
| Անպայման կկիրառեմ ... | | | |

Հեղինակային աթոռ

Աշակերտները հերթով նստում են այսպես կոչված հեղինակային աթոռին, գնահատում են համադասարանցիների գործունեությունը դասի ընթացքում, փմյանց շնորհակալություն են հայտնում աշխատանքի, համագործակցության համար, իսկ ուսուցչին անցկացված դասի համար: Արտահայտում են իրենց կարծիքը դասի դրական կողմերի մասին:

Հարցաշարի լրացում

Ուսուցիչն աշակերտներին բաժանում է թերթեր հարցերով կամ գրատախտակի վրա է գրում հարցեր և խնդրում է աշակերտներին պատասխանել դրանց: Հարցաշարի հնարավոր հարցերը.

Գո՞հ եք արդյոք դասից և ինչո՞ւ:

Հետաքրքիր էր արդյոք, և ի՞նչը հետաքրքրեց քեզ ամենից շատ:

Ստացե՞լ ես արդյոք նոր գիտելիք: Բե՛ր օրինակ:

Որքանո՞վ ակտիվ էիր դասի ժամանակ: Նկարագրի՛ր, ինչի՞ն ես մասնակցել:

Գնացք

Յուրաքանչյուր աշակերտի նստարանի վրա դրված է երկու կաշուն թուղթ. մեկը՝ կանաչ, մյուսը՝ կարմիր: Գրատախտակի վրա նկարած է գնացք վագոններով: Յուրաքանչյուր վագոն համապատասխանում է դասի ժամանակ իրականացված որևէ ակտիվության և ունի համապատասխան գրառում: Աշակերտը կանաչ գույնի սոսնձաթուղթը պետք է փակցնի այն ակտիվությունն արտահայտած վագոնի վրա, որը նա ամենից ավելի է հավանում, իսկ կարմիրն՝ այն ակտիվությունն արտացոլող վագոնի վրա, որը համեմատաբար պակաս է հավանել, բարդ էր կամ չկարողացավ անել:

Ծիածան

Ուսուցիչը գրատախտակի վրա նկարում է կամ փակցնում ծիածանի լուսանկար: Ծիածանի յուրաքանչյուր գույնին համապատասխանում է որոշակի մակագրություն: Օրինակ. մանուշակագույնը՝ այսօր իմացա, կապույտը՝ զարմացրեց ինձ, երկնագույնը՝ հետաքրքիր էր, կանաչը՝ ինձ մոտ ստացվեց, դեղինը՝ բարդ էր, նարնջագույն՝ սովորեցի և կարմիրը՝ այժմ արդեն կարող եմ: Աշակերտներն իրենց թերթերի վրա պետք է նկարեն ծիածան և ծիածանի յուրաքանչյուր գույնի մոտ գրեն իրենց պատասխանները, որի աղեղների մեջ գրված են հետևյալ անավարտ արտահայտությունները:



Աշակերտներին կարող ենք լրացնել տալ նաև հարցաշար՝ անցկացված դասի մասին, որը միաժամանակ ուսուցիչ համար նշանակալի ստուգիչ կլինի ապագա աշխատանքը պլանավորելիս:

| ՀԱՐՑ | ԱՅՈ | ՈՉ | ԴԺՎԱՐԱՆՈՒՄ ԵՄ ԳՆԱՀԱՍԵԼ |
|--|-----|----|------------------------|
| Դասը լավ էր կազմակերպված: | | | |
| Օգտագործված նյութը հետաքրքիր էր: | | | |
| Դասը հետաքրքիր էր՝ դրանում օգտագործած լրացուցիչ նյութով: | | | |
| Ուսուցիչը աշակերտակենտրոն էր: | | | |
| Ուսուցչի գնահատումն արդարացի էր: | | | |
| Ուսուցիչը խիստ էր, ինչը խանգարեց ինձ դասի թեման սովորելու մեջ: | | | |
| Դասին բարձր գնահատական եմ տալիս: | | | |

Ի՞նչը կցանկանայիր ուղղել հաջորդ դասերին: (Համառոտ մեկնաբանություն)

Անավարտ նախադասություններ

Ինքնագնահատման կարողության զարգացման համար ուսուցիչը կարող է նաև կիրառել «Անավարտ նախադասություններ» մեթոդը: Ուսուցիչը բոլոր աշակերտներին բաժանում է թերթիկ, որի վրա գրված նախադասությունը պետք է ավարտեն.

Թեմայի շուրջ ես գիտեմ...

Ինձ համար հետաքրքիր է ...

Ուզում եմ ավելի իմանալ ...

Ուսուցիչը հավաքում է թերթերը, դասից դուրս ժամանակ վերլուծում են արդյունքները և դրանց վրա հիմնվելով պլանավորում հաջորդ դասը:

Համադասարանցիների գնահատումն օգնում է աշակերտներին, որ ուրիշների գնահատման ժամանակ իրենք ևս օգտագործեն իրենց գիտելիքը որոշակի հարցերից:

Փոխադարձ գնահատման դրական կողմն այն է, որ աշակերտները սովորում են ուրիշների

աշխատանքներում հզոր և թույլ կողմերը գնահատել և դրանով վերլուծում են նաև իրենց առաջընթացը:

Փոխադարձ գնահատման համար հնարավոր է կիրառել հետևյալ մեթոդները. աշխատանքները փոխանակել/գնահատել, փոխադարձ հարցում անել՝ ըստ պլանի, կցել մեկնաբանություններ:

Երկու աստղ և ցանկություն

Ուսուցիչը մասնակիցների զույգեր է կազմում և խնդրում է ստուգել միմյանց աշխատանքները:

Սկզբունքն այսպիսին է, աշակերտները առաջադրանքի մեջ գտնում են երկու դրական կողմ և արտահայտում մեկ ցանկություն, թե ինչ կա բարելավելու (աշակերտների մեկնաբանությունները կարող են լինել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր): Աշակերտներին տրվում է որոշակի ժամանակ «ցանկությունները» տարբերակելու և աշխատանքները ուղղելու համար:

Որպես գնահատման միջոց, կարող ենք կիրառել նաև դասի նպատակի վրա հիմնվելով կազմած գնահատման աղյուսակը՝ խորագիրը, այսինքն՝ աշակերտն ինքը նշի, թե որքանով լավ է կատարել առաջադրանքը.

| ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. | Շատ լավ կատարեցի | Լավ կատարեցի | Մասամբ կատարեցի առաջադրանքը | Ինձ անհրաժեշտ է լրացուցիչ աշխատել |
|--|---|---|---------------------------------------|--|
| ԱՆՎԱՆԻՐ ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԳՆԵՐԸ ԵՎ ԹՎԱՐԿԻՐ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ | Անվանում եմ տարվա բոլոր չորս եղանակները: Կարող եմ թվարկել 3 կամ ավել բնութագրիչ: | Անվանում եմ տարվա բոլոր չորս եղանակները: Կարող եմ 1 կամ 2 բնութագրիչ փաստ անվանել: | Թվարկեցի տարվա բոլոր չորս եղանակները: | Չեմ կարող անվանել տարվա բոլոր չորս եղանակները: |

Կարելի է նաև կիրառել զարգացնող գնահատման տարբեր խորագրեր: Առաջարկում ենք դրանցից մի քանիսը:

Վերևում առաջարկված միջոցները չպետք է օգտագործվեն որպես ինքնանպատակ ուսուցչի համար: Սրանք տեղեկատվություն ստանալու ուղիներ են. ինչպես շարունակել հետագա ուսուսման սիրությունները: Գնահատման արդյունքները վերլուծելով՝ ուսուցիչը բացահայտում է աշակերտների առանձնապես լավ յուրացրած խնդիրները, սովորողների արդեն զարգացած հմտությունները և լրացուցիչ աշխատանքի կարիք ունեցող հարցերը, ինչպես նաև դեռ չձևավորված հմտությունները: Անհրաժեշտ է վերլուծել ուսուսման գործընթացն ու դրա արդյունքները ոչ միայն ուսուցչի, այլ նաև սովորողների կողմից: Որովհետև աշակերտը, ով փորձում է բացահայտել իր աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը, ավելի շատ ջանքեր կգործադրի դրանք զարգացնելու համար:

ՍՈԼՈ ՏԱՔՍՈՆՈՄԻԱՅԻ ԽՈՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՄՈՒՇ

Հանձնարարականներ խորագիրը պրակտիկայում օգտագործելու համար

Առաջին չորս մակարդակները (նախակառուցվածքային, ոչ կառուցվածքային, բազմակառուցվածքային, հարաբերական) գործնականում նույնական են բոլոր հասկացությունների համար, իսկ հինգերորդ՝ վերացական մակարդակը, ընդհանուր է բոլոր նպատակային հասկացությունների համար:

Խորագիրը կարող է օգտագործվել առարկայի շրջանակներում ցանկացած նպատակային հասկացության հետ առնչությամբ: Ուսուցիչը զարգացնող գնահատման վերաբերյալ մեկնաբանությունը կգրի միայն այն սյունակում, որ նպատակային հասկացությունը ստուգում է և որ մակարդակում գտնվում է աշակերտը:

Այս խորագիրը նախատեսված է զարգացնող գնահատման և ոչ թե թեստերը ստուգելու համար, որտեղ ուշադրություն է դարձվում տերմիններին «նկարագրի՝ ր-բացատրի՝ ր- գնահատի՝ ր»:

| Թեմա _____ Հարց _____ Համալիր առաջադրանքի պայմանը _____ | | | |
|---|--|--------------------------------|------------------|
| ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆ | ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ | ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՄՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՑՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ |
| ՉԱՓԱՆԻՇ | | | |
| Վերացական մակարդակ Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/ էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Քննարկվող հարցը կապում է իր անձնական փորձի հետ: | Աշակերտը համալիր առաջադրանքի միջոցով նույնականացված օրինակների վրա հիմնվելով՝ փոխադարձաբար կապակցելով դատողություն է անում առարկայի շրջանակներում բացահայտված բոլոր նպատակային հասկացությունների մասին: Կապում է համալիր առաջադրանքի միջոցով նույնականացված տվյալները (գիտելիքների ընդհանրացում, անձնական փորձի հետ զուգահեռների անցկացում) (Կրաստանի օրինակով և/կամ հնարավորության դեպքում՝ նաև այլ երկրի) և այլ կենսական իրավիճակներ: Դատողություն է անում Ազգային ուսումնական պլանի մակրոհասկացության / մակրոհասկացությունների մասին՝ հիմնվելով համալիր առաջադրանքի պայմանի վրա: | | |

| | | | |
|--|--|--|---|
| <p>Հարաբերական մակարդակ Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է հիմնախնդրի հետ կապված էական կառուցվածքային միավորների միջև փոխհարաբերությունները:</p> | <p>Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է աշխարհագրական թաղանթի հետ կապված հարցերը: Ընդգծում է համալիր առաջադրանքի գնահատման չափանիշների/նպատակային հասկացության կայուն պատկերացումների միջոցով սահմանված նրբությունները:</p> | <p>Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է բնակչության և տնտեսության հետ կապված հարցերը: Ընդգծում է համալիր առաջադրանքի գնահատման չափանիշների/նպատակային հասկացության կայուն պատկերացումների միջոցով սահմանված նրբությունները:</p> | <p>Աշակերտը կանոնավոր և հետևողականորեն փոխանցում է կայուն զարգացման հետ կապված հարցերը: Ընդգծում է համալիր առաջադրանքի գնահատման չափանիշների/նպատակային հասկացության կայուն պատկերացումների միջոցով սահմանված նրբությունները:</p> |
| <p>Բազմակառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, իրար հետ չկապակցված, առանց համակարգ գույքորոշություն / պատկերացում կապված քննարկվելիք հարցի հետ:</p> | <p>Աշակերտն ունի բազմաթիվ գույքորոշություններ կապված ուսումնասիրվելիք հարցի հետ, սակայն նրա կողմից փոխանցված պատմությունները չունեն կազմակերպված, հետևողական տեսք:</p> | <p>Աշակերտն ունի բազմաթիվ գույքորոշություններ կապված ուսումնասիրվելիք հարցի հետ, նույն հարցի հետ կապված նրա կողմից փոխանցված պատմությունները չունեն կազմակերպված, հետևողական տեսք:</p> | <p>Աշակերտն ունի բազմաթիվ գույքորոշություններ կապված ուսումնասիրվելիք հարցի հետ, նույն հարցի հետ կապված նրա կողմից փոխանցված պատմությունները չունեն կազմակերպված, հետևողական տեսք:</p> |
| <p>Ունիկառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցվածքավորված գույքորոշություն/ պատկերացում կապված քննարկվելիք հարցի հետ:</p> | <p>Աշակերտի՝ ուսումնասիրվելիք հարցի հետ կապված դատողությունը սահմանափակվում է հանգուցային հարցերի/ վերնագրի պարզ և տրամաբանական ռեֆլեքսիայով:</p> | <p>Աշակերտի՝ ուսումնասիրվելիք հարցի հետ կապված դատողությունը սահմանափակվում է հանգուցային հարցերի/ վերնագրի պարզ և տրամաբանական ռեֆլեքսիայով:</p> | <p>Աշակերտի՝ ուսումնասիրվելիք հարցի հետ կապված դատողությունը սահմանափակվում է հանգուցային հարցերի/ վերնագրի պարզ և տրամաբանական ռեֆլեքսիայով:</p> |
| <p>Նախակառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:</p> | <p>Աշակերտը ճիշտ չի կարող հասկանալ հարցի հետ կապված հարցադրումները:</p> | <p>Աշակերտը ճիշտ չի կարող հասկանալ հարցի հետ կապված հարցադրումները:</p> | <p>Աշակերտը ճիշտ չի կարող հասկանալ հարցի հետ կապված հարցադրումները:</p> |

Աշակերտի տետրում տրված ամփոփիչ համալիր առաջադրանքների գնահատման խորագրեր՝ ՈՒԴԱԿ տաքսոնոմիայի սխեմաներ

Առաջին չորս մակարդակները (նախակառուցվածքային, ոչ կառուցվածքային, բազմակառուցվածքային, հարաբերական) գործնականում նույնական են բոլոր հասկացությունների համար, իսկ հինգերորդ՝ վերացական մակարդակը, ընդհանուր է բոլոր նպատակային հասկացությունների համար:

Խորագիրը կարող է օգտագործվել առարկայի շրջանակներում ցանկացած նպատակային հասկացության առնչությամբ: Ուսուցիչը զարգացնող գնահատման վերաբերյալ մեկնաբանությունը կգրի միայն այն սյունակում, որ նպատակային հասկացությունը ստուգում է և որ մակարդակում գտնվում է աշակերտը:

ԹԵՄԱ. ՏՈՒՆԸ ԵՎ ԴՊՐՈՑԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՎԱՅՐ

Հարցը. Կենդանի օրգանիզմները իմ դպրոցի բակում
Համալիր առաջադրանքի պայմանը.

Աշակերտները հաճախ ուսումնասիրում են իրենց դպրոցի բակը: Հավանաբար քեզ նույնպես հետաքրքրում է, թե ինչ է կատարվում քո դպրոցի բակում, ո՞ր կենդանի օրգանիզմներն են այնտեղ ապրում:

Եթե դպրոցի բակում նայես քո շուրջբոլորը, այնտեղ կտեսնես տարբեր բույսեր ու կենդանիներ: Ուսումնասիրի՛ր դպրոցի բակի բնակիչներին՝ բույսերին և կենդանիներին: Ստեղծի՛ր քո դիտարկման աղյուսակը և պատասխանները նշի՛ր ✓ նշանով: Աղյուսակի հիման վրա եզրակացություն ան արա՛՛ն ո՞ր կենդանի օրգանիզմների կենսամիջավայրն է քո դպրոցի բակը:

| Իմ դպրոցի բակում... | Այո | Ոչ |
|---------------------------------------|-----|----|
| Դպրոցի բակում կա՞ն ծառաբույսեր: | | |
| Դպրոցի բակում կա՞ն թփեր: | | |
| Դպրոցի բակում կա՞ն ծաղիկներ: Խոտեր՞ր: | | |
| Արդյոք այնտեղ ապրո՞ւմ են թռչուններ: | | |
| Արդյոք այնտեղ ապրո՞ւմ են կենդանիներ: | | |
| Կա՞ն արդյոք սնկեր: | | |

Աղյուսակում/աղյուսակի ներկայացման ժամանակ հստակ ցո՛լյց տվեք.

- Ո՞ր օրգանիզմներն են ապրում ձեր դպրոցի տարածքում: (**Օրգանիզմ, կենսամիջավայր, կայ.պ. 1**)
- Ինչպե՞ս են կենդանի օրգանիզմները ապրում կենսամիջավայրում: (**Օրգանիզմ, կենսամիջավայր, կայ.պ.1.4.**)
- Ինչպե՞ս են հոգում քո դպրոցի տարածքում գտնվող կենդանի օրգանիզմների կենսամիջավայրի մասին: (**Օրգանիզմ, կենսամիջավայր, կայ.պ.4**)

| ՆՂԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆ | ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ | ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՑՈՒՄ |
|---|----------------------|--------------------------------|--|
| ՉԱՓԱՆԻՇ | | | |
| Վերացական մակարդակ Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/ էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Քննարկվող հարցը կապում է իր անձնական փորձի հետ: | | | Աշակերտը ճիշտ հասկացավ առաջադրանքի էությունը, կարողացավ ամբողջությամբ լրացնել աղյուսակը: Աշակերտը ճիշտ է նույնացնում և անվանում, թե որ կենդանի օրգանիզմներն են ապրում դպրոցի բակում: Կապում է կենդանի օրգանիզմներն իրենց համապատասխան կենսամիջավայրի հետ, դատողություն է անում, թե ինչպես և ինչու, ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն կենդանի օրգանիզմներին պաշտպանելու համար: Նա կարող է նաև դատողություն անել, թե արդյոք նա կարող է հանդիպել աղյուսակում նկարագրված կենդանի օրգանիզմներին այլ կենսամիջավայրերում: Նա կարող է իր փորձը գործնական օրինակներով կապել ուսումնասիրվող առարկայի հետ, դատողություն անել կենդանի աշխարհի բազմազանության և նրանց համապատասխան կենսամիջավայրի մասին: |
| Հարաբերական մակարդակ Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է հիմնախնդրի հետ կապված էական կառուցվածքային միավորների միջև փոխհարաբերությունները: | | | Աշակերտը ճիշտ հասկացավ առաջադրանքի էությունը, կարողացավ ամբողջությամբ լրացնել աղյուսակը: Աշակերտը ճիշտ է նույնացնում և անվանում, թե որ կենդանի օրգանիզմներն են ապրում դպրոցի բակում: Կապում է կենդանի օրգանիզմներն իրենց համապատասխան կենսամիջավայրի հետ, դատողություն է անում, թե ինչպես և ինչու, ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն կենդանի օրգանիզմներին պաշտպանելու համար: |
| Բազմակառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, իրար հետ չկապակցված, առանց համակարգ գույքորոշություն / պատկերացում կապված քննարկվելիք հարցի հետ: | | | Աշակերտը հասկացավ առաջադրանքի էությունը, մասամբ կարողացավ լրացնել աղյուսակը: Միայն անվանում է, թե որ կենդանի օրգանիզմներն են ապրում դպրոցի բակում: Նա չի կարող կապել կենդանի օրգանիզմներն իրենց համապատասխան կենսամիջավայրի հետ, չի կարող ձևակերպել, թե ինչպես և ինչու, ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն կենդանի օրգանիզմներին պաշտպանելու համար: |
| Ունիկառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցվածքավորված գույքորոշություն/ պատկերացում կապված քննարկվելիք հարցի հետ: | | | Աշակերտը հասկացավ առաջադրանքի էությունը, ստեղծեց աղյուսակի նման մեկ պարբերությամբ աշխատանք, որում միայն թվարկված են կենդանի օրգանիզմներ: Երևում է, որ աշակերտը ոչինչ չգիտի, դպրոցի բակում ապրող կենդանի օրգանիզմների կենսամիջավայրի մասին: Նա չի գիտակցում, որ յուրաքանչյուր կենդանի օրգանիզմի անհրաժեշտ է իրեն համապատասխան կենսամիջավայր: Նա չի հասկանում կենդանի օրգանիզմների կարևորությունը և այն, թե ինչու պետք է պաշտպանի դրանց: |
| Նախակառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն: | | | Աշակերտը չկարողացավ կատարել առաջադրանքը, չի հասկացել առաջադրանքի պայմանը կապված կենդանի օրգանիզմների և նրանց կենսամիջավայրի հետ (չկարողացավ ստեղծել, չկարողացավ լրացնել դիտարկման աղյուսակը): |

ԹԵՄԱ. ՄԱՐԴԸ

Հարցը՝ Մաքուր և աղտոտված միջավայր
Համալիր առաջադրանքի պայմանը.
 Պատկերացրո՞ւ, որ դու դպրոցական միջավայրի մասին հոգաբարձուների ակումբի անդամ ես: Խմբի ընդհանուր առաջադրանքն է ձեր դպրոցի տարածքում տեղադրել գունավոր աղբամաններ՝ տարբեր տեսակի թափոններ հավաքելու համար: Դու պետք է պատրաստես աղբամանի մոդել թափոնների համար, որը կտեղադրես դպրոցի բակում: Վերցրո՞ւ երեք տուփ (օր.՝ կոշիկի տուփ), դրանց վրա փակցրո՞ւ տարբեր գույների՝ կանաչ, դեղին և կապույտ թերթեր (կամ ներկի՞ր այդ գույնով) և դրանք վերածի՞ր գունավոր աղբամանների: Մեկի վրա, որը միայն պլաստիկ իրերի համար է, փակցրո՞ւ համապատասխան նկար: Երկրորդի համար, որում դուք միայն թղթի թափոններ եք հավաքելու, և երրորդի համար, որը նախատեսված է մնացած բոլոր թափոնների համար, նույնպես, համապատասխան խորհրդանիշներ/լոգոներ մտածի՞ր:

Մոդելում/մոդելը ներկայացնելիս հստակ ցո՛յց տուր.

- Ի՞նչ գույն են հասցնում թափոնները մարդկանց և շրջակա միջավայրին: (կայ.պ. 2)
- Ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն մաքրություն պահպանելու համար: (կայ.պ. 3)
- Ինչու՞ է անհրաժեշտ տարբեր գույների աղբամաններ տեղադրել: (կայ.պ. 1)
- Ի՞նչ կարող ես անել շրջակա միջավայրը պահպանելու համար: (կայ.պ. 3)

| ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆ | ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ | ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ | ԿԱՅՈՒՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ |
|--|--|--------------------------------|------------------|
| ՉԱՓԱՆԻՇ | | | |
| <p>Վերացական մակարդակ Աշակերտը խորությամբ հասկանում է հարցի էությունը/ էական բնութագրերը, ինչը նրան հնարավորություն է տալիս ընդհանրացնել այս գիտելիքները/ նման այլ օրինակների հետ համեմատելու հնարավորություն է տալիս: Քննարկվող հարցը կապում է իր անձնական փորձի հետ:</p> | <p>Աշակերտը ճիշտ հասկացավ առաջադրանքի էությունը, կարողացավ թափոնների գունավոր աղբամաններ պատրաստել: Նա կարող է դատողություն անել, թե ինչ վնաս են հասցնում թափոնները մարդկանց և շրջակա միջավայրին, ինչ միջոցներ պետք է ձեռնարկել շրջակա միջավայրի մաքրությունը պահպանելու համար, ինչու է անհրաժեշտ տարբեր գույների աղբամաններ դնել: Նա գործնական օրինակներ է բերում սեփական կյանքից, ինչ է արել և ինչ քայլեր է ձեռնարկելու շրջակա միջավայրը պահպանելու համար:</p> | | |
| <p>Հարաբերական մակարդակ Աշակերտը հասկանում է քննարկվող հարցի էությունը, տեսնում է հիմնախնդրի հետ կապված էական կառուցվածքային միավորների միջև փոխհարաբերությունները:</p> | <p>Աշակերտը ճիշտ հասկացավ առաջադրանքի էությունը, կարողացավ թափոնների գունավոր աղբամաններ պատրաստել: Նա կարող է դատողություն անել, թե ինչ վնաս են հասցնում թափոնները մարդկանց և շրջակա միջավայրին, ինչ միջոցներ պետք է ձեռնարկել շրջակա միջավայրի մաքրությունը պահպանելու համար, ինչու է անհրաժեշտ տարբեր գույների աղբամաններ դնել: Դժվարանում է գործնական օրինակներ բերել-հիշել սեփական կյանքից, թե ինչ է արել և ինչ քայլեր է ձեռնարկելու շրջակա միջավայրը պահպանելու համար:</p> | | |
| <p>Բազմակառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մի քանի, իրար հետ չկապակցված, առանց համակարգ գույքորոշություն / պատկերացում կապված քննարկվելիք հարցի հետ:</p> | <p>Աշակերտը ճիշտ հասկացավ առաջադրանքի էությունը, կարողացավ թափոնների գունավոր աղբամաններ պատրաստել և կապել համապատասխան նպատակի հետ: Նա կարող է թվարկել, թե ինչն է աղտոտում շրջակա միջավայրը, բայց չի կարող տրամաբանական կապ հաստատել դրանց միջև: Նա գրեթե չի պատկերացնում, թե ինչ վնաս են հասցնում թափոնները մարդկանց և շրջակա միջավայրին, նա չի կարող նշել, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն մաքրություն պահպանելու համար, ինչու է անհրաժեշտ տարբեր գույների աղբամաններ տեղադրել:</p> | | |
| <p>Ունիկառուցվածքային մակարդակ Աշակերտն ունի միայն մեկ ոչ կառուցքավորված գույքորոշություն/ պատկերացում կապված քննարկվելիք հարցի հետ:</p> | <p>Աշակերտը մասամբ հասկացավ առաջադրանքի էությունը, դժվարացավ վերջնական արդյունք ստեղծել: Նա կարող է ճանաչել մաքուր և աղտոտված միջավայրի միայն մեկ ասպեկտը: Նա չի կարող ճանաչել, թե ինչն է աղտոտում իրեն շրջապատող միջավայրը, ինչու է կարևոր հոգ տանել շրջակա միջավայրի մասին, ինչու է աղտոտված միջավայրը վտանգ ներկայացնում բույսերի և կենդանիների համար:</p> | | |
| <p>Նախակառուցվածքային մակարդակ Աշակերտը հարցի հետ կապված չունի պատշաճ տեղեկություն:</p> | <p>Աշակերտը չկարողացավ կատարել առաջադրանքը, չի հասկացել առաջադրանքի պայմանը կապված գունավոր աղբամաններ ստեղծելու հետ (չկարողացավ ստեղծել մոդելը գունավոր աղբամանները):</p> | | |

7. ԼԲԱՑՈՒՑԻՉ ՀԱՆՁՆԱԲԱՐԱԿԱՆՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Լրացուցիչ ակտիվությունների տեսքով առաջարկում ենք նաև 2 նախագիծ, որոնք կարող եք իրականացնել թեմաներն ավարտելուց հետո, ցանկության դեպքում:

Նախագիծ 1.
Աշակերտի տարբերակը

Ստեղծի՛ր նորը հին իրերից

Նախագծի նպատակը

- ▶ Ուսումնասիրել շրջակայքում եղած օբյեկտները
- ▶ Դասավորել դրանք ըստ տարբեր նշանների
- ▶ Ստեղծել այս առարկաներից նոր իրեր
- ▶ Նվազեցնել թափոնները շրջակա միջավայրում
- ▶ Պաշտպանել շրջակա միջավայրը աղտոտվածությունից

Շրջապատում կան բազմաթիվ իրեր, որոնք դու այլևս չես օգտագործում, բայց հնարավոր է դրանց երկրորդային օգտագործումը:



Օգտագործած իրերից կարելի է պատրաստել տարբեր հետաքրքիր առարկաներ:



Հիմա դու ինքդ պատրաստի՛ր ծաղկաման, որը կարող էս օգտագործել տարբեր նպատակներով:

Ռեսուրսներ և օժանդակ նյութ

Դրա համար անհրաժեշտ կլինի.

Օգտագործված թիթեղյա տարա կամ պլաստիկե շիշ, սոսինձ, մկրատ, քանոն, գունավոր թղթեր և գունամատիտներ:

Պլաստիլինից ծեփի՛ր մարդու մարմին

Նախագծի նպատակը

- ▶ Պլաստիլինից ծեփել մարդու մարմնի մասեր:
- ▶ Մարդու մարմնի մոդել ստեղծել:

Ռեսուրսներ և օժանդակ նյութ

Դրա համար անհրաժեշտ կլինի.
պլաստիլին, պլաստիլինի կտրիչ

Քայլ 1.

Պլաստիլինից ծեփի՛ր մարդու
մարմնի մասեր



Քայլ 2.

Պլաստիլինի ծեփած մասերը ծեփի՛ր իրար և ստեղծի՛ր մարդու մարմնի մոդել:



Քայլ 3.

Բացատրի՛ր, թե որն է մարմնի յուրաքանչյուր մասի նպատակը:

Գնահատի՛ր քո նախագիծը

Պլաստիլինի գույներից ի՞նչ գույնի է քո նախագիծը:
Բացատրի՛ր, թե ինչու ես ընտրել այս գույնը:



Զվարճալի փորձեր

Զվարճալի փորձերը լրացուցիչ նյութ է, որը նպաստում է աշակերտների հետազոտական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Յուրաքանչյուր փորձ համապատասխանում է բնագիտության չափորոշչով նախատեսված նպատակային հասկացություններին:

Փորձերը հեշտ է կատարել և պահանջվում են նվազագույն ռեսուրսներ:

Ուսուցիչը կարող է Ուսուցչի գրքի էլեկտրոնային տարբերակից տպել անհրաժեշտ թվով փորձի քարտեր (պինդ լինելու համար կարող է դրանք ամրացնել սովարաթղթի վրա) և բաժանել աշակերտներին:

Փորձեր կարող են կատարվել ինչպես դասարանում, այնպես էլ տանը:

1. Ինչպե՞ս դարձնենք սառած ճանապարհին անվտանգ

Նպատակային հասկացություն՝ երևույթ

Փորձի ընթացքը

Փորձի համար անհրաժեշտ կլինի.

- 1 ճաշի գդալ աղ
- 1 բաժակ ջուր
- սառույցի խորանարդիկներ պատրաստելու կաղապարներ
- գդալ կամ փայտիկ երկու հատ ափսե

Քայլ 1. Պատրաստի՛ր սառույցի խորանարդիկներ՝ ջուրը լցրո՛ւ կաղապարների մեջ և դի՛ր սառցախցիկը:



Քայլ 2. Երկու ափսեի մեջ դի՛ր 3-4 սառցի խորանարդիկ:



Քայլ 3. Առաջին ափսեի մեջ դրված սառցի խորանարդիկների վրա ավելացրո՛ւ աղ:



Արտահայտի՛ր ենթադրություն.

Ո՞ր ափսեի մեջ է ավելի արագ
հալչում սառույցը:

Արդարացա՞վ քո
ենթադրությունը:

Ամփոփի՛ր փորձը.

Ինչպե՞ս կօգտագործես փորձի արդյունքը ձմռանը սառած
ճանապարհներին անվտանգ տեղաշարժվելու համար:



2. Ինչպե՞ս պատրաստենք ձյան խմոր:

Նպատակային
հասկացություն. Երևույթ

Փորձի ընթացքը

Փորձի համար անհրաժեշտ կլինի.

- 1 բաժակ կերակրի սոդա
- կես բաժակ եգիպտացորենի օսլա
- 1 ճաշի գդալ բուսական յուղ
- կես բաժակ + 1 ճաշի գդալ ջուր

Քայլ 2. Ստացված զանգվածը լցրո՛ւ թավայի մեջ, ավագների օգնությամբ դի՛ր միացրած գազօջախի վրա (միջին կրակի վրա) և անընդհատ խառնի՛ր: Մոտավորապես 5 րոպե հետո զանգվածը թավայի մեջ կսկսի թանձրանալ: Շարունակի՛ր խառնել մինչև զանգվածը թանձրանա:



Քայլ 1. Բոլոր բաղադրիչները խառնի՛ր իրար: Զանգվածը խառնի՛ր այնքան ժամանակ, մինչև վերածվի ջրալի հեղուկի:



Քայլ 3. Ստացված զանգվածն զգուշորեն տեղափոխի՛ր տախտակի վրա: Մառչելուց հետո տո՛ւր ցանկալի ձևը:



Արտահայտի՛ր ենթադրություն.

Կհալչի՞ արդյոք քո պատրաստած
ձյունը իսկական ձյան նման:

**Արդարացա՞վ քո
ենթադրությունը:**

Ամփոփի՛ր փորձը.

Ինչպե՞ս կկարողանաս օգտագործել քո ձյունը Նոր տարվա
տրամադրություն ստեղծելու համար:



3. Ինչպե՞ս հայտնաբերենք չորս համերը:

Նպատակային
հասկացություն. Օրգանիզմ

Փորձի ընթացքը

Փորձի համար անհրաժեշտ կլինի.

- ջուր
- 1 կամ ավելի ճաշի գդալ աղ
- 1 ճաշի գդալ կակաոյի փոշի
- 1 հատ կիտրոն
- 4 փոքր բաժակ
- գդալ կամ ձողիկ
- մարկեր

Քայլ 1. Վերցրո՛ւ չորս նույնական բաժակներ: Բաժակները համարակալի՛ր ր գունամատիտով: Բոլոր բաժակները կիսով չափ լցրո՛ւ տաք ջրով: Առաջին բաժակի մեջ լցրո՛ւ 1 ճաշի գդալ աղ և խառնի՛ր:



Քայլ 2. Երկրորդ բաժակի մեջ լցրո՛ւ մեկ ճաշի գդալ կակաո:



Քայլ 3. Երրորդ բաժակի մեջ լցրո՛ւ կես կիտրոնի հյութ:



Քայլ 4. Չորրորդ բաժակի մեջ լցրո՛ւ 1 ճաշի գդալ շաքարավազ:



Քայլ 5. Թե՛յի գդալով հերթով համտեսի՛ր քո պատրաստած կոկտեյլները:



Արտահայտի՛ր ենթադրություն.

Ի՞նչ համ կունենա քո պատրաստած յուրաքանչյուր կոկտեյլը:

Արդարացա՞վ քո ենթադրությունը:

Ամփոփի՛ր փորձը.

Ի՞նչ համեր ես հայտնաբերել աղի, կակաոյի, կիտրոնի և շաքարի օգնությամբ:

4. Ինչպե՞ս շարժման մեջ դնեմ փուչիկը:

Նպատակային հասկացություն.
Կողմնորոշում տարածության մեջ

Փորձի ընթացքը

Փորձի համար անհրաժեշտ կլինի.

- 2.20 մ պարան
- հյուս խմելու ձողիկ
- փչելու փուչիկ
- 2 աթոռ
- կպչուն ժապավեն
- լվացքի ամրակ

Քայլ 1. Պարանն անցկացրո՛ւ ձողիկի միջով:



Քայլ 2. Պարանի ծայրերը ամրացրո՛ւ աթոռների մեջքերին: Աթոռներն այնպես դի՛ր, որ պարանը ձգվի նրանց միջև:



Քայլ 3. Փչի՛ր փուչիկը և այնպես սեղմի՛ր լվացքի ամրակով, որպեսզի օդը դուրս չգա:



Քայլ 4. Ձողիկի վրա կպչուն ժապավենով երկայնքով ամրացրո՛ւ փշած փուչիկը:



Քայլ 5. Փուչիկը ձողիկով սահեցրո՛ւ երկրորդ արձույտի մոտ և հանի՛ր ամրակը:



Արտահայտի՛ր ենթադրություն.

Կշարժվի՞ արդյոք փուչիկը:

Արդարացա՞վ քո ենթադրությունը:

Ամփոփի՛ր փորձը.

Ո՞ր ուղղությամբ սկսեց շարժվել փուչիկը՝ վերև, ներքև, աջ, ձախ:



Հանձնարարական ուսուցչին.

1. Պարանը կարելի է ձգել դպրոցի բակի ծառերի միջև: Հնարավոր է նաև, որ պարանն ամրացված լինի ոչ հավասար բարձրության վրա:



2. Լվացքի ամրակի փոխարեն կարող էք օգտագործել թղթի ամրուցիչ:



Լրացուցիչ նյութ՝ տե՛ս փորձի հղումը.
<https://coolscienceexperimentshq.com/balloon-rocket/>



5. Ինչպե՞ս պատրաստենք օձառ և պահպանենք մաքրություն:

Նպատակային հասկացություն. Օրգանիզմ

Փորձի ընթացքը

Փորձի համար անհրաժեշտ կլինի.

- 1 բաժակ օսլա
- Կես բաժակ գունավոր հեղուկ օձառ
- 2 ճաշի գդալ մանկական մարմնի յուղ

Քայլ 1. Թասի մեջ լցրո՛ւ օսլան, վրան ավելացրո՛ւ հեղուկ օձառը և խառնի՛ր:



Քայլ 2. Ավելացրո՛ւ 2 ճաշի գդալ մանկական յուղ և ձեռքով խառնի՛ր:



Քայլ 3. Ստացված օձառը շատ նման է պլաստիլինի: Դրան տո՛ւ րը քո ուզած ձևը և օգտագործի՛ր ձեռքերդ լվանալիս:



Արտահայտի՛ր ենթադրություն.

Ինչպիսի՞ն կլինի քո պատրաստած
օձառը:

**Արդարացա՞վ քո
ենթադրությունը:**

Ամփոփի՛ր փորձը.

Ինչպիսի՞ն է և ինչո՞ւմ կօգնի քեզ քո պատրաստած օձառը:





ՏՈՒՆԸ ԵՎ ԴՊՐՈՑԸ. ՈՐՊԵՍ ՄԻՋԱՎԱՅՐ

Էջ 11. Լսի՛ր «Մեր բակը» երգը

<https://www.youtube.com/watch?v=JUjNP4BLBDA>

Էջ 15. Ծանոթացի՛ր տրանսպորտի տեսակներին

https://www.youtube.com/watch?v=8pGnU_yaoG0

Էջ 17. Դիտի՛ր անիմացիան՝ «Անվտանգ տեղաշարժվելու կանոնները»

https://www.youtube.com/watch?v=Q4bhWokj_Pw

Էջ 33. Դիտի՛ր «Երեք խոճկորները» անիմացիան և իմացի՛ր, թե որ խոճկորն է կառուցել ամենաանվտանգ տունը:

<https://www.youtube.com/watch?v=v47btkyaGlk>

Էջ 37. Եթե ուզում ես տեսնել, թե ինչպես են տեղաշարժվում ձեռակերտ ինքնաթիռը և պարաշյուտը, դիտի՛ր տեսանյութերը:

<https://www.youtube.com/watch?v=JV2aMbGtmZE>

<https://www.youtube.com/watch?v=6RA9x4wlnW8>

Էջ 43. Անիմացիոն տեսանյութերով տե՛ս, թե ինչպես են հերթագայում ցերեկն ու գիշերը:

<https://www.youtube.com/watch?v=80KE500bXqY>

<https://www.youtube.com/watch?v=FdPzO8Vlp2U>

<https://www.youtube.com/watch?v=Jprxwnvnp8c>

Էջ 45. Եթե ցանկանում ես ծանոթանալ տարվա եղանակներին, դիտի՛ր անիմացիոն տեսանյութերը:

<https://www.youtube.com/watch?v=-IWBwiXGpEw&t=9s>

https://www.youtube.com/watch?v=M_jlwwBLr7Q&t=57s

Էջ 55. Լսի՛ր «Միասին ապրենք մեծ ֆերմայում» երգը:

<https://www.youtube.com/watch?v=xiE13gQwEyA>

Էջ 59. Լսի՛ր «Երբ ենք լվանում մեր ձեռքերը» երգը:

<https://www.youtube.com/watch?v=dP5tthxCSP4>

Էջ 61. Շրջակա միջավայրի պահպանության մասին դիտի՛ր «Բոցոյի և Գվանցայի արկածները» անիմացիան:

<https://www.youtube.com/watch?v=XYsbDdunG5g>

Էջ 63. Դիտի՛ր «Ընձուղտ Ժոզեն: Պահպանենք երկրագունդը» անիմացիոն ֆիլմը:

<https://www.youtube.com/watch?v=dvZNGOn6BNM>

ՄԱՐԴԸ

Էջ 67. Դիտի՛ր տեսանյութը, տե՛ս, թե ինչպես են զվարճանում երեխաները, դու նույնպես հորինի՛ր դասարանական խաղ:

<https://www.youtube.com/watch?v=5qzYqYMuGdY>

Էջ 69. Դիտի՛ր տեսանյութերը և ծանոթացի՛ր դպրոցի վարքի կանոններին:

<https://www.youtube.com/watch?v=MIRyFm5zgWk>

<https://www.youtube.com/watch?v=3peZj3IZFCk>

Էջ 75. Լսի՛ր Յակոբ Գոգեբաշվիլիի «Մարմնի մասերի կոնիվը» պատմվածքը:

<https://www.youtube.com/watch?v=fkU1YdpUsb4>

Էջ 77. Մարզվի՛ր քո հասակակիցների հետ: Դիտի՛ր «Ընձուղտ Ժոզեն և սպորտը» անիմացիոն ֆիլմը:

<https://www.youtube.com/watch?v=h4eueDYPTIg>

<https://www.youtube.com/watch?v=KXOsl1VjZNY>

Էջ 79. Եթե ցանկանում ես իմանալ, թե ինչպես է պետք խնամել ատամները, դիտի՛ր տեսանյութը:

Լսի՛ր ընձուղտ Ժոզեի «Ուրախ-ուրախ լողանալ» երգը:

<https://www.youtube.com/watch?v=SdPFZIQywo4&t=2s>

<https://www.youtube.com/watch?v=TZddQn2dlVU>

Էջ 83. Դիտի՛ր տեսանյութը և ծանոթացի՛ր զգայության օրգաններին:

<https://www.youtube.com/watch?v=xiUt6bvHEjw>

Էջ 85. Զվարճալի թեստ տեսողությունը ստուգելու համար:

<https://www.youtube.com/watch?v=AmpxMCExFIg>

Էջ 89. Լսի՛ր մարմնի մասերի վերաբերյալ երգը և միաժամանակ մարզվի՛ր:

<https://www.youtube.com/watch?v=C3c8fzbsfOE>

Էջ 97. Եթե ուզում ես իմանալ, թե երբ ինչպիսի հագուստ պետք է հագնես, դիտի՛ր տեսանյութը:

<https://www.youtube.com/watch?v=PTuUzZpddUc>

Էջ 99. Դիտի՛ր տեսանյութը և դու նույնպես պատրաստի՛ր ձմեռային գլխարկ և ձեռնոցներ:

<https://www.youtube.com/watch?v=rRZmjtYJJB4>

Էջ 109. Դիտի՛ր անիմացիոն ֆիլմը և իմացի՛ր, թե ինչպես է սովորում ընձուղտ Ժոզեն աջ և ձախ բառերը:

https://www.youtube.com/watch?v=ri3p66aumJc&list=PLeo3-CyF5iHqg_OYGgG1mFGbZCpwzhdT4

Էջ 113. Դիտի՛ր անիմացիոն ֆիլմը, թե ինչպես է ընձուղտ Ժոզեն հավաքում տունը:

<https://www.youtube.com/watch?v=pFTPTmDZxT0>

Էջ 119. Եթե քեզ հետաքրքրում է, թե ինչու պետք է խնամքով վերաբերվենք երկրագնդին, լսի՛ր ընձուղտ Ժոզեին:

<https://www.youtube.com/watch?v=dvZNGOn6BNM>

9.

ԼԴԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Մ. Բլիաձե, Գ.Խատիսաշվիլի, Գ.Չխենկելի, Գ.Գախելաձե և ուրիշներ: Տարրական աստիճանի ուսուցչի մեթոդական ուղեցույց, Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոն, Թբ., 2010:
2. Թ. Մոսիաշվիլին, Մ.Բլիաձե, Մ.Ռատիանի, Մ.Սեխնիաշվիլի, Ն.Ինգորովա, Յ.Բարբաքաձե: «Ուսուցչի գիրք. Համապիտանի իրավասություններ», 2017թ.:
3. Գ.Նոգաձե, Թ.Կոբախիձե, Մ.Ինասարիձե, Մ.Բոճորիշվիլի, «Ուսուցչի գիրք. Գնահատում», 2017 թ .:
4. Ա. Ջանելիձե, Վ. Կվիրիկաշվիլի, Ն. Լաբարտովա, Բ.Քոբախի, «Ուսուցչի գիրք. Կրթության տարրական աստիճանի ուսուցիչների համար, առաջին և երկրորդ մասեր», 2017 թ .:
5. Ս.Գորգոձե. «Արդյունավետ զարգացնող գնահատում», 2016թ., <http://mastsavlebeli.ge/?p=11953>
6. Ն. Լաբարտովա. «Զարգացնող գնահատման միջոցներ»: 2014 թ., <http://mastsavlebeli.ge/?p=1869>
7. Մ. Կապանաձե. «Զարգացնող գնահատումը բնագիտական առարկաներից», 2016թ. <http://mastsavlebeli.ge/?p=12461>
8. Մ. Բլիաձե, «Բնագիտության ուսուցման մեթոդներ»: http://tpdc.ge/images/stories/_compatibility_mode.pdf
9. Մ. Բլիաձե, Թ. Շուրվաձե և ուրիշներ «Բնապահպանական և ագրարային կրթությունը դպրոցում», Մեթոդական ուղեցույց տարրական աստիճանի ուսուցիչների համար:
Գիրք 1 – <https://elibrary.mepa.gov.ge/Ge/Library/Details/6010>
Գիրք 2 – <https://elibrary.mepa.gov.ge/Ge/Library/Details/6008>
Գիրք 3 – <https://elibrary.mepa.gov.ge/Ge/Library/Details/6012>
Գիրք 4 – <https://elibrary.mepa.gov.ge/Ge/Library/Details/6011>
Գիրք 5 – <https://elibrary.mepa.gov.ge/Ge/Library/Details/6013>
Գիրք 6 – <https://elibrary.mepa.gov.ge/Ge/Library/Details/6009>
Գիրք 7 – <https://elibrary.mepa.gov.ge/Ge/Library/Details/6014>
Գիրք 8 – https://elibrary.mepa.gov.ge/Ge/Library/Details/7038?fbclid=IwAR0Wf0lzdeXfkFYIpUUeAD_fyp4db-DPIWwcB4CHIZpblW32ua939O_yuGw
10. Էկոկրթության ծրագիր. – <https://zerowastebssb.net/EEP/Index?lang=ka>

Օգտակար հղումներ

- Հեռուստադպրոցի դաս. «Տարվա եղանակները» <https://www.youtube.com/watch?v=csTwDZHjIbU&t=1s>
- Հեռուստադպրոցի դաս. «Կենդանական աշխարհը» <https://www.youtube.com/watch?v=nkbBVfUKeg&t=1s>
- Հեռուստադպրոցի դաս. «Կենդանական աշխարհը» https://www.youtube.com/watch?v=v2jj_6qwG1g&t=2s
- Համալիր առաջադրանք. Ճանապարհը տնից դպրոց <http://mastsavlebeli.ge/?p=28513>
- Անվտանգ երևելություն ավտոբուսով: Տեսահոլովակ https://www.youtube.com/watch?time_continue=19&v=e1WN4B8j9UY&feature=emb_logo
- Հեռուստադպրոցի դաս. «Զգայական օրգաններ» https://www.youtube.com/watch?v=v2jj_6qwG1g&t=1s
- Փորձեր. «Բացահայտի՛ր գույները» <https://www.giftofcuriosity.com/why-learning-colors-and-shapes-is-so-important-for-young-children/>

- Փորձեր. «Մարմնի հատկությունների մասին»
<https://www.giftofcuriosity.com/category/subject-areas/steam/>
- Տեսահոլովակ. «Ինչպե՞ս ենք տեղաշարժվում»: (անգլալեզու)
<https://www.youtube.com/watch?v=nIvePkFzaMw>
- Թվային խաղ. «Գտի՛ր կորած աշխարհագրական օբյեկտները և կենդանի օրգանիզմները» (անգլալեզու)
<https://contrib.pbslearningmedia.org/WGBH/buac17/buac17-int-landwatergame/index.html>
- Գիտաճանաչողական բնույթի խաղեր. «National geography for kids»
<https://www.natgeokids.com/uk/category/play-and-win/games/>
- «45 փորձ ջրի մասին» (անգլալեզու ռեսուրս)
<https://taminglittlemonsters.com/10-ways-to-play-with-water/>
- Ուսումնասանաչողական խաղ. «Ստորջրյա աշխարհ» (անգլալեզու ռեսուրս)
https://pbskids.org/plumlanding/games/explorer/water_safari.html
- Քվիզ. «Ջրում եմ ապրում, թե ցամաքում» (անգլալեզու ռեսուրս)
<https://www.tinytap.com/activities/g3hf9/play/land-or-water-animals>
- Տեսառեսուրս. «Տարվա եղանակ» (վրացալեզու)
https://www.youtube.com/watch?v=_m0MaNOFDdY
- Զգայական օրգաններ (վրացալեզու)
<https://www.youtube.com/watch?v=-KkkczejOcU>
- Տեսահոլովակ «Բուկիլիպեդիա», Փողոցում անվտանգ տեղաշարժվելու կանոնները
https://www.youtube.com/watch?v=Q4bhWokj_Pw

Տարօրինակ դպրոցներ

- Պլաստիկե շշերից կառուցած դպրոց
<https://insteadin.com/blog/plastic-bottle-schools/>
- Տարօրինակ «Քոբուսի» դպրոց Կամբոջայում
<https://www.dw.com/en/cambodian-school-made-of-rubbish/a-39776>
- «Կանաչ դպրոց», Բալի կղզի
<https://beautiful-places.de/en/green-school-bali-theinnovativeschoolmade-frombambooby-john-hardy/>
- «Ավազե դպրոց» անապատում
<https://www.thebetterindia.com/247342/rajkumari-ratnavati-girls-school-no-ac-thar-jaisalmer-yellow-sandstone-woman-empowerment-him16/>
- «Դպրոց ծիածան» Սինգապուրում
<https://inhabitat.com/this-crazy-school-in-singapore-looks-like-its-made-from-rainbow-lollipops/>

Հողվածներ Բնագիտության դասավանդման ռազմավարությունների մասին

<http://mastsavlebeli.ge/?s=%E1%83%91%E1%83%A3%E1%83%9C%E1%83%94%E1%83%91%E1%83%90>

Ինչպես ստեղծենք կուփքս

<http://mastsavlebeli.ge/?p=26391>